


A full-page photograph of a man with a beard and a shaved head, wearing a tan military-style jacket over a dark shirt. He is holding a lit cigarette in his mouth and a lighter in his right hand. A rifle is slung over his left shoulder. The background is a blurred outdoor setting with green foliage.

ԷՎԵԼԻՆԱ
ՄԵԼՔՈՒՄՅԱՆ

ՄԵՐ ՕՐԵՐԻ
ԴԱՎԻԹԸ



Երևան
Էյ Ջի պրինթ
2019



ԴԱՎԻԹ ՍԱՐԱԴՅԱՆ - ԴԵՎ

Էվելինա
Մելքումյան

ՄԵՐ
ՕՐԵՐԻ
ԴԱՎԻԹԸ

Երևան
Էյ Զի պրինթ
2019

ՀՏԴ 94 (478.25)
ԳՄԴ 63.3 (5 Հ)
Մ 539

Գիրքը հրատարակվել է Դավիթի դասընկերների՝
Տիգրան Ալավերդյանի, Սարգիս Բադալյանի և Արմեն Տուլյանի
հովանավարությամբ

Մելքումյան Էվելինա
Մ 539 Մեր օրերի Դավիթը / Է.Մելքումյան. -
Եր.: Էյ Ջի պրինթ, 2019, - 164 էջ:

Գիրքը նվիրված է արցախյան գոյամարտի լեգենդար հերոս
Դավիթ Սարապյանին, որի 26-ամյա կյանքի ուղին լի էր պայքարի
և ստեղծագործության փայլուն էջերով:

Սույն հրատարակությունը կնպաստի հերոս հայորդու
հիշատակը վառ պահելուն, նաև ընթերցող լայն շրջանակներին
հնարավորություն կընձեռի ծանոթանալու և ըստ արժանվույն
գնահատելու ազնվական հայի այդ բացառիկ տեսակը:

Ազգի նվիրյալի վեհ կերպարը, անկասկած, մեծապես կնպաս-
տի գալիք սերունդների դաստիարակությանը:

ՀՏԴ 94 (478.25)
ԳՄԴ 63.3 (5 Հ)

ISBN 978-9939-9113-4-2
© Մելքումյան Էվելինա, 2019

*Նվիրվում է
Արցախյան ազատամարտի
անմահ հերոսների
հիշատակին*





ԱՍՏԾՈՒ ԱՋԸ ՄԵՉ ՀԵՏ Է

Պարզև արքեպիսկոպոս Մարտիրոսյան,
Արցախի թեմի առաջնորդ

Դավիթը զարմանալի մարդ էր՝ անսահման բարի և արդարամիտ: Նա հավատում էր մեր հաղթանակին և ասում էր, որ պատերազմում Աստծու աջը մեզ հետ է: Ըստ էության՝ այդ հարցում նա մարգարեացավ: Իր կերտվածքով հայ մտավորական էր, գաղափարի նվիրյալ, ապրում և գործում էր արժանապատվության բարձր գիտակցությամբ: Իսկապես շատ կիրթ մարդ էր, քաղաքավարի, գիտեր դիմացիմին հարգել: Նա ինքնահավաք, ինքնամփոփ անձնավորություն էր, երբեք ոչ ոքի չէր վիրավորում: Բայց եթե դիպչեիր ազգային արժեքներին, հավատքին, Դավիթն անճանաչելի էր դառնում: Նա անչափ պատվախնդիր մարդ էր. տանել չէր կարողանում, երբ մեկը մյուսին վիրավորում էր, այդ պահին նրա մեջ ըմբոստանում էր ընդվզող մարտիկը:

Դավիթն անսահման նվիրված էր իր հայրենիքին, իր ազգին, և զարմանալի չէ, որ Արցախյան պատերազմի սկզբին առաջին զինվորագրվողներից եղավ: Բնավորությամբ այդպիսին էր, կարծում էր, որ ավելի լավ է՝ ամեն ինչ ինքն անի, հարվածն ինքը դիմագրավի, պատասխանատվությունն ինքն ստանձնի, չթողնի ուրիշին, իսկ եթե պետք է մեռնել, ապա ավելի լավ է մեռնի ինքը, քան իր ընկերը, իր կողքինը: Անթերի ռազմիկ էր, կատարում էր

տրված բոլոր առաջադրանքները՝ անկախ դրանց բարդությունից: Շատ վճռական էր: Առաջինն էր նետվում մարտի և միշտ վերջինն էր վերադառնում: Հայդուկի անկոտրում ոգի ուներ, որն իր ողջ զորությամբ դրսևորում էր մարտի դաշտում:

Նա կարող էր շատ մեծ նվաճումների հասնել, կարող էր հռչակապ ընտանիք կազմել և, անկասկած, արժանավոր ժառանգներ թողնել: Սակայն, ինչպես մեր բազմաթիվ լավագույն տղաներ, չհասցրեց ամուսնանալ ու զավակներ ունենալ: Փոխարենը Դավիթն ու նրա նման նվիրյալները մեզ թողեցին ամենաթանկ պտուղը՝ հաղթանակը, անկախությունը, որը «գրանցվել» է երկնքում ու մեր սրտերում: Նրանց թողած ժառանգությունը բարձր առաքինությունն է. նրանք ապրեցին «Կյանքս տամ հայրենիքիս, ազգիս համար» կարգախոսով:

Ահա թե ինչու ենք նրանց համարում հերոս, լեգենդ, սուրբ նահատակ: Նրանց հիշատակը սուրբ է մեր սրտերում:

Դավիթի նմանները վերահաստատեցին իրենց հերոս նախնիների սահմանած բարոյականության նշաձողը: Նրանք հայոց պտմության անգին գանձեր են:

Դավիթ Սարապյանը մեր հաղթանակի սյուներից էր, մեր ազգի հավիտենության տաճարի անկյունաքարերից մեկը: Նրա հերոսական վախճանն է՛լ ավելի վեհացրեց նրա լուսավոր կերպարը, որը կրում եմ իմ մեջ: Նա կատարեց իր պատմական առաքելությունն ու անմահություն ձեռք բերեց՝ հավերժանալով Արցախյան պատերազմի ոսկե տարեգրության մեջ:



ԴԱՎԻԹՆ ԱՐՏԱՌՈՅ ԵՐԵՎՈՒՅԹ ԷՐ

Գեներալ-մայոր

Արկադի Տեր-Թադևոսյան
(Կոմանդոս)

Պատերազմը սարսափելի է ոչ միայն նրա համար, որ այնտեղ մարդիկ են զոհվում, այլ որ զոհվում են առաջին հերթին լավագույնները...

Արցախյան պատերազմը ցույց տվեց, որ մեր մեջ կան մարդիկ, որոնք ունակ են գերմարդկային սխրանքներ գործելու, ունակ են աներևակայելի հերոսության, խիզախության և ինքնագոհության...

Այդպիսի բացառիկ անհատներից էր նաև Դավիթ Սարապյանը՝ լեգենդար Դեռ։ Նա արտակարգ անձնավորություն էր, արիության ու բարոյականության չափանիշ։ Դեռ իմ ամենալավ հրամանատարն էր։ Նա օժտված էր ռազմական բնատուր տաղանդով և գերազանց էր ամեն ինչում. կատարելապես տիրապետում էր զենքին, մշակում էր ռազմավարական գործողությունների պլանները և ինքն էլ դրանք փայլուն կերպով իրագործում։

Հաճախ նա ինձ զարմացնում էր այնպիսի հանդուգն որոշումներով, որոնք թվում էին անիրականանալի։ Դեռ իսկական առաջնորդ էր. ամեն ինչում առաջինն էր։ Չափազանց հմուտ էր, խորամանկելով կարողանում էր շեղել թշնամու ուշադրությունը և, կրակի ուղղությունը փոխելով դեպի իր կողմ պաշտպանել ջոկատի անվտանգությունը։ Կես խոսքից ինձ հասկանում էր։ Ես

անչափ վստահում էի նրան՝ համոզված, որ ամենաբարդ իրավիճակում անգամ նա կկարողանա գտնել ճիշտ լուծումը: Իմ ծանրաբեռնվածությունը թեթևացնելու համար որոշ գործեր նրան էի հանձնարարում, և նա ինձ երբեք չէր հիասթափեցնում: Հակառակը, միշտ զարմացնում էր իր ճշգրիտ և հմուտ գործողություններով: Նա միշտ կանխագգում էր վտանգը, միշտ մի քայլ առաջ էր տեսնում, որի շնորհիվ փրկում էր իր զինակիցներին: Լինելով մարտարվեստի մեծ գիտակ՝ նա հաճախ շատ օգտակար դասեր էր տալիս ընկերներին՝ ինչպես ճիշտ օգտագործել ներուժը, արդյունավետորեն կիրառել զենքերը:

Հիրավի, նա ամեն ինչում գերազանց էր և անփոխարինելի:

Մարտի դաշտում կային մարդիկ, որոնք, զինվորական հագուստ հագնելով, իրենց արդեն հերոս էին համարում և հաճախ էին փորձում իրենց վերագրել այլոց սխրանքները: Նրանցից ոմանք դիմել են ինձ, որպեսզի հաստատեն իրենց ներկայությունը ճակատում: Եվ ես նրանց պատասխանել եմ.

– Այո՛, դուք այնպեղ էիք, սակայն դուք Դավիթ չեք եղել, չեք եղել նրա նման աներևակայելի՝ ֆանրասարիկ խիզախ, նրա նման ուժեղ ոգի չեք ունեցել, չեք եղել նրա պես հայրենասեր:

Դավիթը ֆենոմենալ՝ արտառոց երևույթ էր: Այդպիսի մարդիկ եզակի են, նրանք ազգի հենարանն են ու մեր պետականության հիմնասյուները:



ԴԱՎԻԹԻ ՍԵՏ ԵՍ ԻՆՁ ԷՑ ՏԵՍՆՈՒՄ

Մոնթե Մելքոնյան¹,

Հայաստանի և Արցախի հերոս

Դավիթ Սարապյանը տաղանդավոր մարդ էր, ուներ մտավոր բարձր կարողություններ: Ինձ հիացնում էին նրա վերլուծական մտածողությունը, բացառիկ ունակությունները: Նրա բարոյական և ռազմական հզորությունն ապշեցուցիչ էր: Նա ունակ էր գերմարդկային սխրանքների, նրա մարդկային տեսակը բացառիկ էր:

Դավիթն ինձ չափազանց հոգեհարազատ էր: Թվում էր, որ նրա մեջ ես ինձ էի տեսնում՝ միայն թե ծնված հարազատ հողում: Ես ու նա շատ հարցեր ենք քննարկել և մի քանի ռազմական ծրագրեր էինք մշակել... Ավա՛ղ, նրա կյանքն ընդհատվեց: Բայց ես կանեմ ամեն ինչ, որպեսզի այդ ծրագրերն իրականանան: Իր մտավոր կարողություններով Դավիթը կարող էր չափազանց մեծ օգուտ բերել Հայաստանին...

Ես նրան շատ սիրեցի: Դավիթը միշտ մտքիս մեջ է, և ես համոզված եմ, որ եթե յուրաքանչյուր ազատամարտիկ ունենա գոնե մեկ տոկոս Դավիթի հայրենասիրությունից, մենք շատ շուտով կազատագրենք Արևմտյան Հայաստանը:

¹ Ավո, Հայաստանի Ազգային (1996) և Արցախի (1999) հերոս:



Մի լուսանկար... և հավերժություն

ԵՍ հաճախ և շատ են մայում այս լուսանկարին: Այն մի ակնթարթ է Դավիթի կյանքից: Չարմանալի լուսանկար է, ստիպում է երկար խորհել, մտորել: Դավիթը սևեռում հայացքը հառել է թույլ կրակին, կրակ, որը վայրկյաններ անց կմարի ու կանհետանա: Բայց այդ փոքրիկ կրակը կարող է մաս չմարել. այն կարող է դառնալ պայծառ, գունագեղ, հզոր հրավառություն...

Նույնքան տարբեր են ապրում մաս մարդիկ: Ոմանք ապրում են աննկատ, խամրած կյանքով՝ չթողնելով գրեթե ոչ մի հետք: Այդ մարդիկ թեև ապրում են, բայց, միևնույն ժամանակ, կարծես գոյություն չունեն: Իսկ, ահա, ոմանց կյանքը մման է զարմանալիորեն ուժեղ կրակի: Այսպիսիք իրենց սրտի հրով ջերմացնում են շրջապատը, լուսավորում աշխարհն իրենց արիության և գեղեցկության լույսով, այն դարձնում առավել մաքուր ու լուսավոր: Այդպիսի մարդկանց հայտնությունը մման է հզոր լուսարձակման: Նրանք աշխարհ են գալիս որոշակի առաքելությամբ, գալիս են ինչ-որ մի կարևոր նպատակ իրագործելու, գալիս են ճիշտ այն ժամանակ, երբ իրենց կարիքն առավել շատ է զգացվում: Այդպիսի մարդիկ ի հայտ են գալիս ազգի համար վճռորոշ՝ նրա համար լինել-չլինելու պահերին, ճակատագրական փորձությունների ժամանակ, երբ հայրենիքն առավելապես զգում է իր լավագույն զավակների օգնության կարիքը: Նրանք առանց

վարանելու նետվում են հայրենիքը պաշտպանելու՝ պատրաստ հանուն հաղթանակի զոհաբերելու անգամ իրենց կյանքը:

Այդ մարդիկ հերոսներ են: Նրանց աշխարհընկալումն առանձնահատուկ է, հոգեվիճակը՝ բնորոշ միայն իրենց: Նրանց ոգու հնարավորություններն անսահմանափակ են և դրդում են անհավանական հերոսության: Եվ սովորական թվացող մարդը դառնում է գերմարդ:

Հերոսությունն աստվածային շնորհ է: Հերոսական արարքների ունակ են բացառապես ընտրյալները: Կատարելով իրենց պատմական առաքելությունը՝ նրանք անսպասելիորեն լքում են մեզ, իսկ նման կորուստները ոչնչով փոխարինել կամ մեղմել հնարավոր չէ: Առանց այդպիսի մարդկանց աշխարհն աղքատանում է, կորցնում իր ուղեցույցները: Չէ՞ որ նրանք մարդկության փարոսն են:

Սովորաբար այդպիսի մարդկանց մենք անվանում ենք կենդանի լեգենդներ, խոսում ենք նրանց սխրանքների մասին, բայց լավ չենք ճանաչում նրանց: Մեր հերոսներից շատերի մասին ունենք մակերեսային տեղեկություններ, մինչդեռ նրանցից և ոչ մեկը չպետք է մոռացության մատնվի: Մոռացությունն անթույլատրելի է՝ հավասարազոր դավաճանության, Մեծն Նժդեհի արտահայտությամբ՝ *«Իր ընդիր մեռելների պաշտամունքը չունեցող ժողովուրդը՝ ապերախս ու բարբարոս, անարժան է անկախ հայրենիքի, որը միշտ էլ նահապտակների սրբազան անյունից կբարձրանա»*:

Այո՛, հերոսների հիշատակը վառ պահելը ողջերիս սրբազան պարտքն է: Նրանց հերոսական պայքարի ժամանակագրությունը չկազմելով՝ մեծ մեղք ենք գործում ինչպես նրանց, այնպես էլ ապագա սերունդների հանդեպ: Ահա թե ինչու պարտավոր ենք փշուր առ փշուր հավաքել ու վերականգնել նրանց լուսավոր կերպարները, պարտավոր ենք խոսել, գրել, պատմել նրանց մասին՝ հիշելով, որ հերոսների մեծարումը վաղեմության ժամկետ չունի...


* * *

Դավիթ Սարապյանի վեհ կերպարի ամբողջացման փորձ արել են 13 տարի առաջ, երբ ռուսերեն հրատարակեցի «Դև. կյանքը, պայքարը, ստեղծագործությունը» գիրքը: Այն ժամանակ մտադիր էի գիրքը թարգմանել հայերեն ու հրատարակել: Սակայն տարբեր պատճառներով այդ նախաձեռնությունը հետաձգվեց: Եվ միգուցե դա պատահական չէր, քանզի, ինչպես ցույց տվեց ժամանակը, Դավիթի մահից հետո էլ տեղի են ունեցել դրամատիկական, իրադարձություններ, որոնք ընդգրկվել են ներկա հրատարակության մեջ:

Դավիթի կերպարը հարստացվել է նաև բազմաթիվ նոր ու կարևոր նյութերով, որոնք բացում են հերոսի կյանքի ուշագրավ այլ էջեր: Ընդհանրապես հերոսի մասին մի անգամ գրելուց հետո հաճախ անհրաժեշտություն է առաջանում կրկին անդրադառնալու նրա կերպարին նոր ասելիքով, թարմ հայացքով: Թվում է՝ նախկինում ասվածը միշտ խմբագրելու, հարստացնելու կարիք ունի:

Այս գրքի հրատարակումը չափազանց կարևոր է նաև այն առումով, որ դեպքերի անցանկալի զարգացման հետևանքով վերջին տարիներին բավական խամրել է այդ պայծառ հայորդու հիշատակի լույսը: Այս գիրքը, անկասկած, կնպաստի այդ լույսի բոցավառմանը, կնպաստի, որ ավելի շատ մարդ ճանաչի և ըստ արժանվույն գնահատի իր ազգի այդ բացառիկ զավակին, որն ապրել և հեռացել է առասպելական հերոսի պես: Նրա կյանքը նման էր դյուցազնավեպի, որի հերոսն ինքն էր՝ Դավիթ Սարապյանը՝ մերօրյա Դավիթը:

Էվելինա Մելքումյան



ԵՐՋԱՆԻԿ ՏԱՐԻՆԵՐԸ

.....

Ծնվեց Դավիթ երևույթը

Դավիթը ծնվել է 1966 թվականի փետրվարի 4-ին: Չմեռային այդ ցուրտ օրն ամենաերջանիկն ու նշանակալիւն դարձավ նրա ճանաչված ծնողների՝ ճարտարապետ Էդուարդ Սարապյանի և



մեր հանրապետությունում կիրեռնետիկայի բնագավառի առաջին կին գիտնական Էմմա Սարապյանի կյանքում: Ամուսիններն արդեն երիտասարդ չէին, իսկ Դավիթը շատ սպասված երեխա էր հատկապես մոր համար, քանի որ նրա առաջնեկն էր ու միակ որդին: Փոքրիկն անմիջապես տունը լցրեց

լույսով ու խինդով: Նրան պաշտում էին: Դավիթը որքան մեծանում էր, ծնողներն այնքան ավելի ու ավելի էին հիանում նրանով, քանի որ հազվագյուտ խելացի և աշխույժ երեխա էր:

Կարծիք կա, որ ուշ ծնված երեխաները հիմնականում տաղանդավոր են լինում: Այդ առումով Դավիթը բացառություն չէր: Չորս տարեկանում նա արդեն վարժ կարդում էր՝ գրքերը կլանելով մեկը մյուսի հետևից: Սակայն ավելի վաղ Դավիթը տարվել էր նկարչությամբ: Նրան անչափ դուր էր գալիս այդ «գրադմուցը». ժամերով սևեռված նկարում էր: Եվ ծնողները, տեսնելով տղայի ոգևորությունն ու սերը, դիմում են գեղարվեստի մանկական դպրոց:

Չնայած Դավիթի տարիքը փոքր էր, նրան, այնուամենայնիվ,

ընդունում են դպրոց: Ուսուցիչը՝ հայտնի նկարիչ Էդուարդ Խառատյանը, հատուկ ուշադրությամբ էր հետևում վառ երևակայություն ունեցող տաղանդավոր տղային: Նրա գունագեղ ու դինամիկ նկարները հաճախ էին ցուցադրվում տարբեր ցուցահանդեսներում և, որպես կանոն, հատուկ ուշադրության էին արժանանում: Դավիթը յոթ տարեկանում լավագույն գեղարվեստական ստեղծագործության համար շահել է առաջին մրցանակ:

Հետաքրքրական է, որ դեռ փոքր տարիքից նրան առանձնապես հրապուրում էր ռազմական թեման: Տղան պատկերում էր ռազմի տեսարաններ, հաղթական դրոշներով ու շքանշաններով զարդարված տանկեր, ինքնաթիռներ, զինատեսակներ, շքերթներ: Առավել գրավիչ էին և ուշագրավ Դավիթի նկարած տարբեր ժամանակաշրջանների զինվորները: Ջարմանալի է, որ տղային հաջողվում էր նրանց նկարել շարժման մեջ, տարբեր իրավիճակներում: Առանձնանում էին հատկապես այն նկարները, որտեղ պատկերում էր գերմանացի զինվորներին. նրանք շատ զվարճալի էին ու ծիծաղաշարժ:



Դավիթը մեծանում էր, և զուգահեռաբար ընդլայնվում էր նրա հետաքրքրությունների շրջանակը: Նրա հետ շփումը բոլորին և, իհարկե, առաջին հերթին ծնողներին, մեծ բավականություն էր պատճառում: Էդուարդ Սարապյանը տարիներ անց որդու մասին ասել է.

– Աշխարհ զաւ և չիմանալ՝ ինչ է Դավիթ երևույթը, միևնույն է, թե աշխարհ չգաւ:

Նշանավոր ծնողները

Հայրը՝ Էդուարդ Սարապյանը, չափազանց պատկառելի մարդ էր, տաղանդավոր ճարտարապետ, ուներ ստեղծագործական հարուստ կենսագրություն: 1959–1964 թվականներին եղել է Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետը: Նրա պաշտոնավարման ժամանակ կատարվել են քաղաքի վերակառուցման ու բարեկարգման ծավալուն աշխատանքներ, բացվել են նոր փողոցներ, պուրակներ, կառուցվել գեղեցիկ շենքեր, որի արդյունքում էապես բարելավվել է մայաքաղաքի դիմագիծը: Սարապյանը տասնյակ նշանավոր կառույցների նախագծերի հեղինակ է և համահեղինակ:



Ճարտարապետ Մարկ Գրիգորյանի հետ նախագծել է «Արմենիա» հյուրանոցը, Արհեստակցական միությունների տան և կապի նախարարության համալիրը, Հանրապետության հրապարակի թանգարանների շենքը: Նրա նախագծերով կառուցվել են Կենտրոնական փոստատունը, Պետական հանրախանութը (այժմ՝ «Տաշիր» առևտրի կենտրոն), Կոմպոզիտորների տունը և երևանյան մի շարք այլ կառույցներ, Վիեննայում՝ Սբ. Հռիփսիմե եկեղեցին և հայկական համայնքի մշակույթի կենտրոնը: Իր բերումն ստեղծագործական գործունեության շնորհիվ Էդուարդ Սարապյանն ակնառու տեղ է զբաղեցնում հայ հանրահայտ ճարտարապետների աստղաբույլում:

Մայրը՝ Էմմա Սարապյանը, նույնպես ուներ հարուստ կենսագրություն: Մոսկվայում եղել է ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս Անդրանիկ Իոսիֆյանի ասպիրանտը. 25 տարեկանում պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և նրա հրավերով եկել

Երևան՝ ստանձնելով Իոսիֆյանի նոր հիմնադրած Էլեկտրատեխնիկայի ինստիտուտի տնօրենի պաշտոնը: Տիկին Էմման եղել է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության առաջին կին անդամը: Նրա գիտական բեղմնավոր գործունեության մասին բազմիցս գրել են մամուլում, նկարահանել ֆիլմեր:



Այդ տաղանդաշատ մարդկանց ամենաարժեքավոր ստեղծագործությունը, իհարկե, իրենց զավակն էր՝ Դավիթը, որը շատ արժանիքներ էր ժառանգել ոչ միայն իր ծնողներից, այլ նաև մոտ ու հեռավոր նախնիներից: Նրա հոր՝ Էրզրումից սերող գերդաստանը փայլում էր Պետրոս Աղամյան, Հակոբ Գյուրջյան, Կարո Հալաբյան հանրահայտ անուններով, իսկ մոր արցախյան տոհմը հարուստ էր անվանի մելիքներով, բեկերով, զինվորական գործիչներով: Եվ Դավիթն ասես նրանց ամենալավ հատկանիշների խտացումը լիներ:

Սարապյան ամուսիններն ստեղծել են ամուր ընտանիք և լավագույն հայերի գեներով «զինված» հայկական հրաշալի օջախ՝ «հարուստ» արվեստներով, արհեստներով, գիտությամբ ու գրականությամբ, հայրենասիրությամբ ու հյուրասիրությամբ: Նրանց գրավիչ հարկի տակ հաճախ էին հյուրընկալվում հայտնի ու անվանի մարդիկ:

Դավիթն արդեն մանկուց ծանոթ էր բազմաթիվ նշանավոր գործիչների հետ, որոնք նրա հանդեպ մեծ հետաքրքրություն էին տաժում: Բոլորի համար ակնհայտ էր, որ բնությունն ամեննին էլ չի «հանգստացել» այդ տաղանդավոր ծնողների զավակի հարցում, այլ, հակառակը, օժտել է նրան փայլուն հատկանիշներով: Բոլորն էին համոզված, որ խելացի ու հետաքրքրասեր պատանուն մեծ ապագա է սպասում:

Լեոնիդի դասերը

Այդ տան հաճախակի հյուրն էր Լեոնիդ Ազգալդյանը՝ «Ազատագրական բանակ» ռազմական կազմավորման ապագա հրամանատարը, որը, լինելով ֆիզիկոս, աշխատում էր տիկին Էմմայի հետ: Սարապյան ամուսինները շատ էին գնահատում Լեոնիդին թե՛ որպես տաղանդավոր գիտնականի, թե՛ որպես արտակարգ հատկանիշներ ունեցող մարդու: Տարիների ընթացքում նա դարձավ ընտանիքին մտերիմ ու հարազատ մարդ:

Լեոնիդը շատ էր սիրում փոքրիկ խելամիտ Դավիթին և հաճույքով էր ժամանակ անցկացնում նրա հետ: Փոքրիկն անչափ հպարտ էր, որ ուներ նման ուժեղ ու խելացի ավագ ընկեր: Նա ամեն կերպ աշխատում էր արժանանալ Լեոնիդի գովեստին: Պահպանվել է Դավիթի մանկական գծանկարը, որը նա վերնագրել է՝ «Լյոնյան և ես հրաձգարանում», իսկ հետագայում իր «Հորբի» պատմվածքում նկարագրել է Լյոնյայի տված դասերը. *«Լեոնիդն ինձ շատ քան է սովորեցրել... լողալ, հրաձգարանում կրակել, նույնիսկ կռվել: Հիշում եմ՝ ինչպես էի փորձում աջ ձեռքով ծնուրին հարվածելու հմտությունն և դա փորձում էի ոչ թե ինչ-որ մեկի, այլ հենց իր ծնուրի վրա:*

Մի անգամ նա ինձ բռնացրեց լաց լինելիս, հեյոտ շատ լրջորեն զրուցեց ինձ հետ: Լյոնյան ասաց, որ ես տղամարդ եմ, իսկ տղամարդը չպիտի լաց լինի: Իսկ եթե դա շատ անհրաժեշտ է, ապա պետք է շտապ մի ազատ շքամուրք գրնել և, այնպես քաբնվելով, արագ լաց լինել, մոռալ մաքրել և դուրս գալ մարդկանց մեջ այնպես, ասես ոչինչ չի եղել: Այդ օրվանից դժվար պահերին միշտ մտաբերում էի Լյոնյայի խորհուրդը և ազատ շքամուրք փնտրում: Բայց քանի որ միշտ չէ, որ ինձ հաջողվում էր նման տեղ գրնել, ես սովորեցի մտքումս լաց լինել, այդպես ավելի հարմար էր...»:

Ցավոք, այդ դասերը Դավիթին հետագայում շատ պետք եկան:

«Ես իմ պատիվն էի պաշտպանում...»

1972 թվականին, երբ Դավիթը դեռ 6 տարեկան էր, ծնողները, տեսնելով փոքրիկի օժտվածությունը, որոշեցին նրան ուղարկել դպրոց: Ձերթիմակու անվան դպրոցի տնօրենը, սակայն, կտրականապես հրաժարվում էր ընդունել երեխային, որի յոթ տարին դեռ չէր լրացել: Ինչքան էլ մայրը՝ տիկին Էմման, համոզում էր նրան՝ ասելով, որ տղան շատ ընդունակ է, տնօրենն անդրդվելի էր:

Այդ խոսակցության ժամանակ Դավիթը լուռ էր, սակայն, երբ մայրն արդեն հրաժեշտ էր տալիս տնօրենին, նա ասում է վերջինիս.

– Դուք ինչ չեք ճանաչում, չցամկացաք անգամ հարցեր տալ, սրուզել իմ գիրքերիցները և չեք ուզում ինչ ընդունել:



Տնօրենը, որ անչափ զարմացել էր՝ լսելով մանկան խելամիտ դատողությունները, ասում է.

– Դե, լավ, փորձենք քեզ սրուզել:
Բ՞նչ կարող ես պատմել:

Դավիթը պատասխանում է.

– Ուզո՞ւմ եք՝ Ձեզ պատմեն Բեռլինի գրավումը:

Տնօրենն ստիպված է լինում արտակարգ խելացի փոքրիկին ընդունել առաջին դասարան...

Դպրոցը ռուսական էր, և Դավիթը, իր կամքից անկախ, ռուսական կրթություն ստացավ, որի համար ապագայում շատ էր ավստսում. չէր ներում ծնողներին: Այս զգացողությունն է՛լ ավելի խորացավ, երբ սկսեց ստեղծագործել: Նա ուզում էր գրել մայրենի լեզվով, որպեսզի կարիք չլիներ թարգմանելու:

Առաջին և սիրելի ու անմոռանալի ուսուցչուհին Արփենիա Եփրեմովնան էր: Նա ամբողջ կյանքում հիշում էր, թե ինչպես է Դավիթն առաջին դասարանում կռվել համադասարանցի տղաներից մեկի հետ, իսկ իր հարցին, թե ինչո՞ւ է այդպես վարվել, փոքրիկ ասպետը լրջորեն պատասխանել է.

– *Ես իմ պատիվն էի պաշտպանում...*

Եվ այդ ասպետական օրենքներով էլ նա ապրեց իր ողջ հետագա կյանքում:

Այսպես՝ արդեն իսկ մանկուց նրա վարքագծում դրսևորվել էին ասպետական հատկանիշները:

Այդ տարիներին քիչ չէին կռիվները հասակակիցների հետ: Դավիթն այն ժամանակ խիտ զանգուրներով գիրուկ տղա էր, որի պատճառով նրան շատ հաճախ էին նեղացնում: «Երբեմն ինձ



ինչ-որ վիրավոր զազանիկի պես էի զգում, որի վրա բոլոր կողմերից հարձակվում էին շները, և յուրաքանչյուրը փորձում էր ավելի ցավուր կծել: Երեխաներն ընդօրինակում են մեծահասակներին, և երբեմն դաժանությամբ, անգամ՝ չգիտակց-

ված, հալոսկ է նաև նրանց»,– հետագայում գրել է Դավիթը՝ վերհիշելով մանկության տարիների իր ապրումները:

Այդ ժամանակ նա սպորտը չէր սիրում, և նրան տվեցին պարի խմբակ: Իր «Հորբի» պատմվածքում Դավիթը հիասքանչ հու-

մորով նկարագրել է, թե ինչպես տապալվեց իր պարի կարիերան: Սակայն տարիներ անց, գիտակցելով իր արտաքինի փոփոխության անհրաժեշտությունը, սկսեց հաճախել տարբեր մարզախմբակներ: Ուժերը փորձելով գրեթե բոլոր մարզաձևերում՝ ընդհուպ մինչև լեռնագնացություն, Դավիթն ընտրեց արևելյան մարտարվեստը: Այդ պարապմունքները շատ դրական ազդեցություն թողեցին նրա վրա. նա դարձավ ֆիզիկապես ուժեղ և ձեռք բերեց լավ մարզավիճակ, գեղեցիկ կազմվածք: Իսկ արդեն ավարտական դասարաններում Դավիթն իսկական աթլետ էր՝ բարձրահասակ, բարեկազմ, մարտիկի ճկուն քայլվածքով:

Նրա մարզիչ Գրիգոր Միքայելյանը (այժմ՝ Հայաստանի կարատեի ֆեդերացիայի նախագահ) շատ գոհ էր իր ջանասեր աշակերտից, որն իր աշխատասիրության և համառության շնորհիվ լավ արդյունքների էր հասնում:

Հատկանշական է, որ մրցումների ժամանակ Դավիթին նկատել էր նաև Գրիգորի ընկերը՝ Արցախի թեմի ապագա առաջնորդ Պարգև քահանա Մարտիրոսյանը, որն այն ժամանակ աշխարհական էր և սև գոտի ուներ: Նա շատ լավ էր հիշում Դավիթին, որին տարիներ անց հանդիպեց Արցախում՝ որպես ազատագրական պայքարի մարտիկ:

Դավիթը գրավել էր նրա ուշադրությունն իր մարտական հատկանիշներով:

– Այդ համեստ և դաստիարակված երիտասարդի մեջ զգացվում էր ուժեղ ոգին, և ինչ թվում է՝ մարտարվեստում կոսիված հենց այդ ոգին է հեղափոխում կռվի դաշտում այդպես փայլուն կերպով դրսևորվել,– ասում է Պարգև սրբազանը:

– Ի դեպ, այն խումբը, որտեղ պարապում էր Դավիթը, շատ լավն էր: Այդ խմբից էլի տղաներ գոհվեցին պատերազմում: Նրանցից ամեն մեկը յուրահայտուկ էր. մեկը մյուսին նման չէր, քայց, միևնույն ժամանակ, մարդկային հատկանիշներով իրար չէին զիջում: Արտակարգ տղաներ էին,– հիշում է Գրիգոր Միքայելյանը:

Դպրոցի խիղճը

Դավիթը հաջողակ էր և՛ սպորտում, և՛ ուսման մեջ: Ունենալով մտավոր բարձր կարողություններ՝ նա հոյակապ էր սովորում, առանձնահատուկ սիրում էր «Պատմություն» առարկան և խորությամբ ուսումնասիրում էր հայ ժողովրդի պատմությունը: Նա շատ էր խնդրում հորը ձեռք բերել պատմական Հայաստանի քարտեզը: Հայրը մեծ դժվարությամբ գտավ այն: Տիգրան Մեծի



Ժամանակաշրջանի քարտեզը միշտ կախված էր Դավիթի սենյակի պատին, և նա սավառնում էր երջանկությունից: Ժամերով փակվում էր սենյակում, ուսումնասիրում քարտեզը:

Ամեն անգամ մայելով ծովից ծով Հայաստանի քարտեզին՝ Դավիթն անչափ վշտանում էր: Նրա սիրտը կծկվում էր՝ տեսնելով, թե ինչքան է փոքրացել իր երբեմնի հզոր հայրենիքը: Կորսված բնօրրանը և բզկտված հայրենիքի ճակատագիրը վաղ տարիքից հուզում էին պատանուն: Նա երագում էր այդ հողերին վերատիրելու մասին:

Դավիթը սիրում էր ոչ միայն ուսումնասիրել քարտեզները, այլ նաև օժտված էր քարտեզներ գծելու շնորհքով: Արդեն ութ տարեկանում նա կարողացավ ինքնուրույն գծագրել իսկական ռազմական քարտեզ:

Պատմության ուսուցիչը հիշում է, որ Դավիթը «Հայ ժողովրդի պատմություն» առարկայից տարբեր թեմաներով զեկուցումներ էր պատրաստում և ներկայացնում պատմության դասաժամերին: Հաճախ նա մասնակցում էր տարբեր՝ հումանիտար և բնագիտական առարկաների օլիմպիադաների, նվաճում մրցանակներ:

* * *

Դավիթը հաճույքով էր հաճախում դպրոց: Նա սիրում էր և՛ իր ուսուցիչներին, և՛ ընկերներին: Ուներ ընկերական մեծ միջավայր, բոլորի հետ լեզու էր գտնում: Նա երբեք չէր ընդգծում իր առավելությունները: Նրան սիրում էին որպես զարգացած անձնավորության և, իհարկե, նրա անսահման ու հիասքանչ հումորի համար: Նրա հետ ուրախ էր, հետաքրքիր:

Շատերին էր հիացնում տղայի արդարամտությունը: Նրա ասպետական էությունը չէր հանդուրժում, երբ ինչ-որ մեկին վիրավորում էին՝ նսեմացնում ֆիզիկապես կամ բարոյապես: Միշտ հանդես էր գալիս պաշտպանի դերում՝ ընդդիմանալով անգամ ուսուցիչներին, երբ նրանք էին անարդար վարվում որևէ աշակերտի նկատմամբ: Դավիթը շատ հաճախ տուժում էր դրա պատճառով, բայց սկզբունքային, ազնիվ և չափազանց արդարամիտ տղային դա չէր կանգնեցնում: Դավիթին սկսեցին անվանել «դասարանի խիղճը», իսկ ժամանակի ընթացքում՝ դպրոցի խիղճը, հետո էլ կյանքը ցույց տվեց, որ նա դարձավ մեր ազգի խիղճը...

Ի դեպ, Դավիթի արդարամտությունը չէր սահմանափակվում դպրոցում կամ նրա ծանոթ միջավայրում: Վեցերորդ դասարանում էր սովորում, երբ ծնողները նրան ուղարկում են մերձնուկովյան պիոներական ճամբարներից մեկում հանգստանալու: Մեկ շաբաթ անց ճամբարի տնօրենը, սարսափելի վրդովված, զանգահարում է ծնողներին և ասում, որ Դավիթն իրենց չի ենթարկվում, քայլեր է ձեռնարկում՝ համարելով, որ այլազգի երեխաների նկատմամբ անարդար են վարվում, նրանց նսեմացնում են: Տղան պահանջում էր, որ ղեկավարությունը ներողություն խնդրի այդ երեխաներից, սակայն փոքրիկ ըմբոստի պայքարն ապարդյուն էր. նրան ուղղակի հեռացնում են ճամբարից:

Դավիթն այսպես էլ չհամակերպվեց անարդարության հետ: Թեկուզ իր շահի համար նա փոխզիջումներ չէր անում և իր հետագա ողջ կյանքում միշտ պայքարում է հանուն արդարության:

«Ես երջանիկ եմ և հպարտ...»

Արդեն բարձր դասարաններում ի հայտ եկավ Դավիթի գրական տաղանդը: Նա սկսեց թղթակցել Երևանում հրատարակվող «Կոմունիստ»(ռուսերեն) թերթին և անչափ ուրախացավ՝ տեսնելով իր տպագրված հոդվածները: Նաև բանաստեղծություններ էր գրում, պատմվածքներ, որտեղ ինքնահեզմանքով և հումորով նկարագրում էր տարբեր դրվագներ իր կյանքից: Իր «Հոբբի» պատմվածքում գրում է. *«Հերթական երեկույթի ժամանակ ես սիրահարվում էի ինչ-որ մեկի, մոտ մի շաբաթ շրջում էի սիրահարված, իսկ հեղու իմ հերթական սիրո մեջ արագորեն ինչ-որ մի թերություն էի գտնում և որքան արագ սիրահարվել էի, նույնքան արագ էլ հիասթափվում էի»:*

Դավիթի՝ մեկ շնչով կարդացվող սրամիտ պատմվածքները բոլորին էին դուր գալիս: Նրա գրական ձիրքն առանձնահատուկ բարձր էր գնահատում ռուսաց լեզվի և գրականության ուսուցիչ Էդգար Սուրենովիչ Դանիելյանը:

Նա, հիրավի, աստվածատուր ուսուցիչ էր: Անսահման նվիրումով երեք տասնամյակ ռուս գրականության լավագույն ավանդույթներով կրթում էր և դաստիարակում սերունդներին: Եզակի բարեկիրթ և բարձր ինտելեկտի տեր մանկավարժ էր, անթերի մարդ: Նրա դասերն իսկական բացահայտումներ էին: Նրան լսում էին շունչները պահած՝ վախենալով բաց թողնել թեկուզ մի բառ: Նա կարող էր հեքիաթի հրաշագործի պես դասաժամի 45 րոպեն վերածել հույզերի, զգացումների և գեղագիտական վայելքի: Ամեն անգամ դասի ավարտին հնչող զանգն անժամանակ էր թվում՝ հիասթափեցնելով բոլորին:

Էդգար Սուրենովիչը պաշտամունք է եղել և է բոլոր նրանց համար, ում բախտ է վիճակվել ճանաչել և հատկապես աշակերտել նրան: Այդ պատվին արժանացել եմ և ես՝ տողերիս հեղինակը: Մենք, ինչպես և նրա բոլոր աշակերտները, ասես ընտրյալների դրոշմ էինք կրում: Մեզ միավորում էր նրա հանդեպ անսահման

հարգանքը, ինչպես նաև գրելու ճիշդ ունեցողներին նկատմամբ նրա ուշադիր վերաբերմունքը: Ազատ թեմաներով լավագույն շարադրությունները նա հաճախ էր կարդում դասարանում:

Էդգար Սուրենովիչին հատկապես դուր էին գալիս Դավիթի շարադրությունների թե՛ բովանդակությունը, թե՛ գրելաոճը: Պա-



տանու յուրահատուկ մեկնաբանությունները, մտածելակերպը զարմացնում էին ուսուցչին: Նա մեծ բավականությամբ էր զրուցում նաև իր արտասովոր ընդունակ աշակերտի հետ: Նա համոզված էր, որ այդ խելամիտ պատանուն մեծ և փայլուն ապագա է սպասում: Եվ նա չէր սխալվել: Իհարկե, այն ժամանակ նա չէր կարող ենթադրել, որ դա իր կյանքը հայրենիքի համար զոհաբերած հերոսի ապագան է: Բայց եթե այն ժա-

մանակ Էդգար Սուրենովիչին կամ մեկ այլ ուսուցչի հարցներին, թե իրենց աշակերտներից ո՞վ է ունակ նման սխրանքի, հաստատապես բոլորը կտային Դավիթի անունը: Ի դեպ, հետագայում պարզվեց, որ այդպիսի «Էլիտար դպրոցներից» հայրենիքի պաշտպաններ դարձան եզակիները:


Սակայն դա պետք է տեղի ունենար հետո՝ տարիներ անց, իսկ առայժմ Դավիթն ավարտում էր դպրոցը: Եվ ավարտական հանդիսության ժամանակ Էդգար Սուրենովիչը, ի լուր բոլորի, խոստովանության պես ասում է.

– Ես երջանիկ եմ և հպարտ, որ ճակատագիրն ինձ Դավիթի նման աշակերտ է պարգևել:

Իհարկե, անսահման երջանիկ էր ու հպարտ նաև Դավիթը, որի համար մեծ պատիվ էր լսել այդ բառերը իր պաշտելի ուսուցչից:

Անկասկած, ում բախտ է վիճակվել ճանաչել Դավիթին, նրանք նույնպես վերջինիս հետ հանդիպումը համարում են ճակատագրի պարգև:

Այդպես ավարտվեցին դպրոցական տարիները: Ավարտվեց նաև Դավիթի կյանքի ամենաանհոգ ու երջանիկ շրջանը:



«Դավիթը», յուղ/կտավ

Գործ՝ Սերգեյ Գրիգորյանի

ԿՅԱՆՔԻ ՀԱՐՎԱԾՆԵՐ

.....

Ինստիտուտից «Արիության դպրոց»

Դպրոցն ավարտելուց հետո՝ 1982 թվականին, Դավիթը հաջողությամբ ընդունվեց Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի կիբեռնետիկայի ֆակուլտետ: Սակայն շատ շուտով նա հասկացավ, որ ընտրությունը սխալ էր. այդ բուհն իր տեղը չէր. ուսումն այնտեղ նրան ոչ մի բավականություն չէր պատճառում: Կիբեռնետիկան իր կոչումը չէր. չէ՞ որ ինքն ուներ ստեղծագործական հակումներ: Բայց, այնուամենայնիվ, նա շարունակում է սովորել: Նրա համար դժվար չէր տեխնիկական բարդ առարկաների յուրացումը, սակայն շուտով օբյեկտիվ պատճառներով նրա ուսումնառությունն ընդհատվեց: Այդ տարիներին ԽՍՀՄ-ում ընդունվեց օրենք, ըստ որի՝ ուսանողներն այլևս չէին ազատվում ժամկետային զինծառայությունից: Ի դեպ, այդ օրենքը գործեց ընդամենը մի քանի տարի:

Այսպիսով՝ 2-րդ կուրսից հետո 18-ամյա Դավիթի համար առաջ եկավ բանակ զորակոչվելու խնդիրը: Զինծառայությունից նրան ազատելու օրինական հիմնավորումներ կային. մանկուց Դավիթի տեսողությունն աստիճանաբար վատթարացման միտում ուներ, իսկ այդ պահին նրա կարճատեսությունն արդեն – 9 աստիճան էր: Չորակոչից ազատվելու համար կային նաև բժշկական և ծանրակշիռ այլ փաստարկներ, որոնցից կօգտվեին այլ զինակոչիկներ: Բայց ոչ Դավիթը: Ընդհակառակը, անկախ ամեն ինչից՝ նա հաստատապես որոշել էր ծառայել բանակում և,

որպեսզի տեսողության հարցը չխանգարեր նրան, անգիր էր արել տեսողությունն ստուգելու համար կազմված տառերի աղյուսակը: Նա համոզված էր, որ իսկական տղամարդը պետք է անցնի «Արիության դպրոցը»: Այդ դպրոցը, իհարկե, անհրաժեշտ էր, բայց խորհրդային բանակը չէր կարող այդպիսի դպրոց լինել նրա համար: Դրանում Դավիթը շատ շուտով համոզվելու էր, իսկ այն ժամանակ նա լի էր վճռականությամբ, և ո՛չ մտերիմների կարծիքները, ո՛չ ծնողների հորդորները նրա վրա չազդեցին: Ծնողները, հարգելով որդու որոշումը, ստիպված համակերպվեցին: Սակայն այդ ապրումներից հոր առողջական վիճակը վատթարացավ. նա արդեն բավական առաջացած տարիքում էր:

* * *

Դավիթը պատրաստվում էր մեկնել Ղազախստան՝ Լենինսկ քաղաք՝ զինծառայության: Եկավ հրաժեշտ տալու ժամանակը՝ ընկերներին, ծանոթներին, նաև սիրած աղջկան, որը, ցավոք, անհաղորդ էր պատանու զգացմունքներին: Նրան ուղղած նամակում Դավիթը գրում է.

*Մնաս բարով, իմ սե՛ր, մնաս բարով,
Ինձ չես տեսնի այլևս դու,
Մեկնում եմ ես մահճեղական երկիր,
Ցավոք, վստահ, որ չես գրի դու ինձ...*

Պատանին իր զգացմունքները համեմատում է վարդի գեղեցկության հետ, իսկ իր անպատասխան սերը՝ այդ հրապուրիչ ծաղկի փշերի հետ.

*....Եվ վարդեր, որ չի ստեղծի բնությունը,
Արարեցի ես իմ հոգում,
Բայց վարդերն այդ առանց փշի վարդեր չեն...
Իսկ փշերն այդ խոցեցին իմ հոգին...*

Եվ, այնուամենայնիվ, սիրո ցավը նա անվանում է «լուսավոր մի տառապանք»:

Ցավոք, այն ժամանակ գրելով «լուսավոր տառապանքի» մասին՝ նա չէր կարող ենթադրել, որ շատ շուտով իրեն վիճակվելու է ճաշակել այլ՝ չափազանց դաժան տառապանքներ, զգալու է ուժեղ և անողորմ ցավ...

* * *

1984 թվականի մայիսի 30-ին Դավիթը մեկնեց Ղազախստան: Այնտեղից էլ սկսվեց նրա ողիսականը:

Հենց ծառայության սկզբից Դավիթն առողջական լուրջ խնդիրներ ունեցավ: Բայկոնուրի անբարենպաստ կլիման, տեղի անհասկանալի բաղադրությամբ ջուրը նրա վրա անասելի վատ հետևանքներ ունեցան: Դավիթը հյուծվել, ուժասպառ էր եղել: Իր համար այդ դժվար ժամանակահատվածում նա ծանր հարված ստացավ՝ մահացավ հայրը...

Ճակատագիրը նրան իրոք փորձության էր ենթարկում: Դավիթը չկարողացավ մասնակցել հոր թաղմանը: Նրան թույլատրեցին Երևան մեկնել ավելի ուշ: Այստեղ Դավիթը ժամերով նստում էր հոր շիրիմի մոտ. ներողություն էր խնդրում: Նա դեռ շատ վաղուց էր որոշել, որ կանի առավելագույնը, որպեսզի պաշտելի հայրը հպարտանա իրենով: Տարիներ անց իր մոր հայրենի Տոդ գյուղն ազատագրելուց հետո նա երագում էր ազատագրել նաև հոր նախնիների ծննդավայրը՝ Կարինը (Էրզրում):

* * *

1984 թվականի սեպտեմբերին Դավիթին տեղափոխեցին Ուկրաինա՝ ծառայությունը շարունակելու Խմելնիցկոյ շրջանում: Հույս կար, որ կլիմայի փոփոխությունից հետո նրա առողջական վիճակը կբարելավվի:

Ավա՛ղ...

Իրականում Խմելնիցկի քաղաքում Դավիթին մեծ ողբերգություն էր սպասվում: Բայկոնուրի կլիմայական ծանր պայմաններին այստեղ փոխարինեց գերլարված բարոյական մթնոլորտը:

Ձորամասում ամենաթողություն էր, ծաղկում էր «դեղովշինան», ավելին՝ այստեղ այլադավան բազմաթիվ զինվորներ կային՝ թաթարներ, ադրբեջանցիներ, միջինասիացիներ, որի պատճառով էլ հայ երիտասարդներն ազգային հողի վրա մշտապես առճակատման մեջ էին, հատկապես՝ մուսուլմանների հետ:

Հայերն այստեղ փոքրաթիվ էին, բայց բոլոր գրոհներին արժանի հակահարված էին տալիս միասնաբար: Դժբախտաբար, շուտով հայ տղաները զորացրվեցին, և Դավիթը, մնալով լրիվ մենակ, հայտնվեց վտանգավոր կացության մեջ:

Ակնհայտորեն մա չէր համապատասխանում բանակային այդ «համերաշխ» կոլեկտիվին ո՛չ իր ինտելեկտով, ո՛չ աշխարհայացքով և ո՛չ էլ հավատքով: Հայ մտավորական երիտասարդի շուրջ օրավուր թանձրանում էր ատելությունը. անընդհատ կռիվներ էին հրահրում: Եվ, իհարկե. Դավիթը Դավիթ չէր լինի, եթե կուլ տար իր ազգային ու մարդկային արժանապատվությունը նսեմացնող վիրավորանքները և լուրջամբ հանդուրժեր նրանց արհամարհական արտահայտությունները: Ըստ էության, Դավիթն ստիպված էր հենց այն տարիներին սկսել իր ազգային-ազատագրական պայքարը...

Միայնակ դիմադրել այդ կազմակերպված հարձակումներին չափազանց դժվար էր, իսկ ընդհարումներն օրեցօր հաճախանում էին: Մի անգամ՝ հերթական կռվի ժամանակ, երբ ընկնում է Դավիթի ակնոցը, այդ տականքներից մեկը, որ տեղյակ էր Դավիթի տեսողական խնդիրներին, զինվորական իր ծանր սապոգներով ցուցադրաբար տրորում, ջարդում է այն:

Վաշտի հրամանատարները, ի դեպ, մույնպես այլադավան, ամենևին ուշադրություն չէին դարձնում այդ զազրելի գործողություններին: Ընդհակառակը, ամեն ինչ տեղի էր ունենում նրանց լուռ համաձայնությամբ: Շարունակական դարձած այս կռիվներից հերթականը ճակատագրական էր Դավիթի համար: Նրան ուղղված մարդկային և ազգային արժանապատվությունը նվաստացնող վիրավորանքներին հաջորդում է բռնցքակռիվը, և «գիշատիչների» ոհմակը հարձակվում է Դավիթի վրա: Այդ քաշքշու-

կի ժամանակ Դավիթը տեսնում է օդում շողացող դանակի շեղբը: Նա հազիվ է հասցնում խլել այն, և հրմշտողի պահին պատահաբար դանակի սայրը քերծում է հարձակվողներից մեկին: Վնասվածը, այսպես ասած՝ տուժածը, շատ արագ ապաքինվում է: Նա արդեն զոջում էր իր արարքի համար, սակայն նրա ուշացած զոջումը Դավիթին արդեն չի օգնում. վաշտի հրամանատարությամբ ամենևին էլ չէր պատրաստվում անտեսել կատարվածը: Նրանք հասան իրենց նպատակին՝ վերջապես այդ ատելի բարեկիրք հայր կպատժվի...

Դատական գործ են հարուցում: Զինվորական իրավաբանները համոզում էին Դավիթի մորը կատարվածին ազգային երանգ չտալ, այլ ներկայացնել որպես տղայական սովորական կռիվ: Խոստանում էին իրադարձությունների այդպիսի մոտեցման դեպքում ավելի մեղմ դատավճիռ կայացնել, սակայն Դավիթը, ինչպես միշտ, անկոտրում էր և սկզբունքային: Դատարանում նա հայտարարում է, որ կռիվն սկսվել է իր անձին և ազգային արժանապատվությանը հասցված վիրավորանքների պատճառով:

Բնականաբար, բոլոր «վկաներն» այս հանգամանքը միաձայն հերքում են: Դավիթի անհնազանդությունը զայրացնում է դատավորներին: Նրանք խստագույն վճիռ են ընդունում՝ հաշվի չառնելով ո՛չ տղայի աֆեկտիվ վիճակը, ո՛չ թեթև աստիճանի վնասվածքը և ո՛չ էլ տուժածի մեղայականը: Անտեսում են, որ Դավիթը պաշտպանվել է, որ մենակ կռվել է տասը հոգու դեմ, որ, եթե չհասցներ դանակը խլել նրանց ձեռքից, նրա կյանքը մազից էր կախված...

Չընդունեցին մեղմացուցիչ ոչ մի հանգամանք և իրականացրին իրենց ստոր նպատակը՝ հայ երիտասարդին ուղարկեցին բանտ...

Բանակից բանտ

1985 թվականի հոկտեմբերից Դավիթի կյանքի հաջորդ 4 տարիները ներկված էին սև գույնով: Դրանք ողբերգական տարիներ էին՝ լի տառապանքով և՛ Դավիթի, և՛ նրա մոր, նաև բոլոր մտերիմների համար:

Տասնյակ նամակներ ու խնդրագրեր էր ուղարկում տիկին Էմման արդարադատության տարբեր ատյաններ, սակայն ամեն ինչ զուր էր: Տասնյակ էջեր էր գրել նաև Դավիթը, որտեղ, ինչպես ինքն էր ասում, երկար ու ձանձրալի ապացուցում էր իր անմեղությունը: Այն ժամանակ 19 տարեկան երիտասարդին թվում էր, թե իր բացատրությունները կկարդան, կգան իր մոտ «մեղայականով» և կասեն. «Ների՛ր մեզ՝ անտառանդ աշխարհողներին՝ քեզ պարճառած վնասի համար»:

Սակայն շատ շուտ հասկացավ, թե ինչքան միամիտ էր իր հավատը առ առասպելական արդարադատությունը: «Ես կյանքիս վրա խաչ քաշեցի նրա ամենահեղափոխական տրեղում», – գրում է նա՝ հուսահատված իր ճակատագրի այսքան կտրուկ շրջադարձից:

Անելանելիությունից ծնվում են սիրտ խոցող տողեր.

Կյանքը խաղ չէ ամենևին:

Երբ ժամանակը դա,

Ամեն ինչ կիրականանա,

Իսկ թե բախտդ չի բերում,

Անգամ եթե շիկանաս սպիտակելու չափ,

Անհնարինն իրականություն չի դառնա...

Նա ահավոր տանջվում է, տառապում: Չափազանց դաժան էին Ուկրաինայի բանտում անցկացրած նրա օրերը: Թե ինչքան ծայրահեղ ծանր էր վիճակը, պարզվում է նրա գրած նամակներից: Ընտանիքի բարեկամ Կառլոս Նիկողոսյանը վկայում է. «Կարդալով այդ նամակները մենք սարսափում էինք, որ նա, ուժեղ և կամային րդա լինելով, գրում էր՝ եթե այնպեղ մնա, դժվար թե կենդանի վերադառնա»:

Նիկողոսյանների ընտանիքը՝ Կառլոսը, նրա տիկինը՝ Էմմա Գեորգիևնան, ու նրանց որդին՝ Վովան, հրաշալի մարդիկ էին: Էմմա Գեորգիևնան չափազանց կիրթ ու զարգացած կին էր: Նա տիկին Էմմայի մտերիմ ընկերուհին էր: Կառլոսը հայտնի լրագրող էր, իսկ Վովան՝ Դավիթի կրտսեր ընկերը: Նրանք Դավիթին ճանաչում էին մանկուց և սիրում էին ինչպես հարազատի: Այդ արտակարգ ընտանիքն արեց հնարավոր ամեն ինչ, արեց առավելագույնը, որպեսզի թեթևացնեն ծայրահեղ ծանր կացության մեջ ընկած երիտասարդի վիճակը: Նրանց ջանքերով Դավիթին տեղափոխեցին Հայաստան: Չորս տարվա ընթացքում այդ անգուցական մարդիկ բարոյապես ու նյութապես աջակցում էին թե՛ Դավիթին, թե՛ նրա մայրիկին: Վստահաբար կարելի է ասել, որ առանց նրանց օգնության մայր ու որդի դժվար թե կարողանային դիմանալ ճակատագրի այդ հարվածներին: Ամեն անգամ Էմմա Գեորգիևնան Դավիթի հետ տեսակցությունից հետո ասում էր.

– Նա անգամ բանջրում է ինրեղիզենուր, ինչպես՞ կարելի է բանջր նսրեցնել այդպիսի երիտասարդին:

Իհարկե, հրեշավոր բան էր նման երիտասարդին բանտ նստեցնելը: Սակայն պետք է նշել, որ հայկական բանտում բոլորը՝ ընդհուպ մինչև ղեկավարությունը, մեծապես հարգում էին Դավիթին և նրան նույնիսկ համարում էին ազգային հերոս:

... Անցնում էին բանտարկության ծանր ու դժվար օրերը. նա զրկված էր մարդու համար ամենաթանկից՝ ազատությունից, ստիպված էր առերեսվել դաժան իրականության հետ, լինել այն միջավայրում, որտեղ ապրում էին դաժան օրենքներով, որտեղ շատերը չեն դիմանում, կոտորվում են, չարանում, դառնում դաժան: Բայց Դավիթը չէր կոտորվել, չէր չարացել, չէր հուսահատվել, քանի որ շատ հզոր ներքին ուժ ուներ և, ինչպես իր բանաստեղծության մեջ է ասում, «...այսպիսով մենք չենք քրթմնջալու և մեր բախարը չենք անիծելու...»:

Նա պատվով էր տանում այդ մեծ փորձությունը՝ չկորցնելով հույսն ու հավատը, պահպանելով իր մարդկային վեհ տեսակը:

ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՎԵՐԵԼՔ

.....

Վերադարձ ազատ կյանքի

Եկավ այնքան սպասված բաղձալի պահը, հետևում մնացին անազատության սոսկալի տարիները. 1989 թվականի սկզբին Դավիթը դուրս եկավ բանտից: Ազատության օդն արբեցնող էր...

Բանտից դուրս գալուց հետո մա առաջին հերթին հյուրընկալում է Նիկողոսյանների ընտանիքին.

– *Բառեր չեմ գտնում իմ երախտագիտությունը հայրներու,* – հուզված ասում է Դավիթը նրանց՝ իր պահապան հրեշտակներին:

Սկսվեցին ուրախությամբ հագեցած օրերը: Նա անչափ կարոտել էր բնականոն կյանքը, կարոտել էր իր ընկերներին, մտերիմներին: Եվ համարյա ամեն օր Սարապյանների բնակարանը լի էր հյուրերով, գալիս էին մարդիկ, որոնք երազում էին հանդիպել Դավիթի հետ, տեսնել նրան և ուրախանալ նրա հետ:

Ահա, թե ինչպես է «Հորբի» պատմվածքում Դավիթը նկարագրում իր ազատության առաջին օրերը. «Ազատության ութերորդ օրն էր...

....Առավորից վազքի մեջ էի... Հարկավոր էր շրապ անջնագիր սրանալ և աշխատանքի տեղավորվել: Տուն վերադարձա երեկոյան կողմ: Չարմանալիորեն հյուրեր չունեինք: Դե, փառք Աստծու: Կարելի է դադար առնել խմելուց: Թե չէ այդ օրերին այնքան կոնյակ ու տարբեր բաներ խմեցինք ազատությանս համար, որ արդեն կամաց-կամաց սկսել էի հոգնել ազատությունից»:

Ինչ վերաբերում է ուսումը շարունակելուն, նա այլևս չվերադարձավ Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտ, չնայած նրան վերականգնել էին այնտեղ: Նրա համար ակնհայտ էր, որ կիրճնետիկան իր հետաքրքրությունների ոլորտը չէ, սակայն դեռ հստակ չէր կողմնորոշվել, թե ինչով է զբաղվելու: Այդ մասին նա հումորով գրել է «Էսթետ» պատմվածքում՝ նկարագրելով իր գործունեությունը «սովետական ականջին» խորթ անվանմամբ մի ֆիրմայում, որտեղ նա աշխատում էր որպես գեղարվեստական ստեղծագործությունների փորձագետ:

Սակայն դա երկար չտևեց. արևելյան մարտարվեստի մարզիչը՝ Գրիգոր Միքայելյանը, Դավիթին առաջարկում է իր ղեկավարած մարզադպրոցում աշխատել որպես մարզիչ: Միքայելյանը համոզված էր, որ իր տաղանդաշատ սանը կկարողանա լավագույնս մարզել երեխաներին, կկարողանա փոխանցել նրանց այդ գեղեցիկ մարզաձևի հմտություններն ու փիլիսոփայությունը: Եվ նա չսխալվեց:



Մարզիչ Գրիգոր Միքայելյանի խումբը. ձախից առաջինը՝ Դավիթը

Դավիթը, կիրառելով մարզման հատուկ տեխնիկա, մեծ ոգևորությամբ էր անցկացնում պարապմունքները: Այդ հազեցած և չափազանց հետաքրքիր մարզումների ընթացքում երեխաները ֆիզիկապես կոփվում ու ձեռք էին բերում գերազանց մարզավիճակ: Պատանիները հիանում էին իրենց հմուտ և ուժեղ մարզչով ու ամեն կերպ ջանում էին արժանանալ նրա գովասանքին:

* * *

Որոնումների ու փորձերի այս ընթացքում էլ իհայտ է գալիս Դավիթի ստեղծագործելու ցանկությունը: Նա խորասուզվում է գրական-ստեղծագործական աշխատանքի մեջ, որն իրեն անչափ դուր էր գալիս: Իր տեսածը, զգացածն ու վերապրածը նա հանձնում էր թղթին: Դավիթի շնորհալի գրիչը ծնունդ տվեց մի շարք պատմվածքների՝ «Բայկոնուր», «Կիչա», «Դուռոչկա», «Ձիուկներ», գրեց նաև «300 վայրկյան» վիպակը: Այդ գործերն այն ժամանակ շատերն էին կարդում ու հավանում՝ համոզված, որ Դավիթն օժտված է գրական տաղանդով:

Այդպիսի կարծիք ուներ նաև Լեոնիդ Ազգալդյանը. նա ամենայն ուշադրությամբ էր կարդում Դավիթի ստեղծագործությունները: Նրան դուր էին գալիս հեղինակի առնական արձակը, նրա զուսպ ու տպավորիչ գրելաոճը: Նրան զարմացնում էր, թե ինչպես է Դավիթին հաջողվում այդպես վարպետորեն գրել չափազանց բարդ թեմաներով, հոգեբանական մուրբ վերլուծություններ անել, արտացոլել հերոսների բարդ ներաշխարհը: Կարդալով Դավիթի ստեղծագործությունները և ավելի լավ պատկերացնելով, թե ինչի միջով է անցել դրանց հեղինակը, Լեոնիդը հասկացավ, թե ինչ մեծ ներքին ուժ ու կարողություններ ունի իր ընկերը՝ իր սանը: Իսկ Դավիթի համար անչափ կարևոր էր Լեոնիդի այդօրինակ արձագանքը:

Երկու ասպետների ընկերությունը

Տարիների ընթացքում Դավիթի ու Լեոնիդի հարաբերությունները վերածվել էին ընկերության: Դավիթը շատ արագ էր հասունանում ու զարգանում՝ գերազանցելով իր հասակակիցներին և՛ գիտելիքներով, և՛ մտածելակերպով, և՛ մտավոր ու ֆիզիկական կարողություններով: Լեոնիդի համար նա արդեն այն փոքրիկ



տղան չէր, որին նա դաս էր տալիս, այլ կայացած երիտասարդ. Դավիթի հետ հետաքրքիր էր շփվելը, լուրջ թեմաներով զրուցելն ու բանավիճելը:

Նրանք բազմաթիվ ընդհանրություններ ունեին: Երկուսն էլ սիրում էին սպորտը: Լեոնիդը գերազանց լողորդ էր, սպորտի վարպետ: Միջազգային տարբեր մրցույթներում նա հաճախ է նվաճել պատվավոր տեղեր: Իսկ Դավիթը ոգևորված զբաղվում էր արևելյան մարտարվեստով և հասնում էր տպավորիչ արդյունքների, ուներ սև գոտի:

Երկուսն էլ լայն մտահորիզոն ունեցող անձնավորություններ էին, երկուսն էլ շատ կարդացած էին և խելացի, երկուսն էլ սկզբունքային էին և չափազանց արդարամիտ:

Ըստ էության՝ նրանք դասական իմաստով կատարյալ ասպետներ էին, որոնք չգրված օրենքով հետևում էին դեռևս վաղ միջնադարում Մամիկոնյան սպարապետների որդեգրած զինվորական պատվի վարքականոնին, որը ներառում է հայ զինվորականի՝ Հայաստան պետության և հայ ազգի առջև ստանձնած գլխավոր հանձնառությունները՝ հավատարմություն և անձնուրաց ծառայություն անկախ Հայաստան աշխարհից, երկրին ու քաղաքությանը, ասպետական պատվի և քաջի անվան անբիծ պահպանում, հարկ եղած դեպքում՝ նաև կյանքի գնով, հավատարմություն և անձնուրաց ծառայություն Հայաստանի ժողովրդին, բարեպաշտ վերաբերմունք քրիստոնեական հավատի ու ազգային եկեղեցու նկատմամբ և դրանց անձնուրաց պաշտպանություն, նվիրվածություն ընտանիքին, զինակիցներին և այլն:

Նրանք այդ արժեքների կրողներն էին, և պատահական չէ, որ հետագայում երկուսն էլ պատվով կատարեցին հայրենիքի պաշտպանության սուրբ առաքելությունը...

* * *

Ե՛վ Լեոնիդը, և՛ Դավիթը միշտ գրավում էին մարդկանց ուշադրությունը իրենց ասպետական, ազնվական էությանը, բարձր ինտելեկտով, բարեկրթությամբ: Երկուսն էլ չափազանց ներկայանալի էին՝ անթերի արտաքինով, բարեկազմ էին ու վեհաշուք՝ օժտված առնական արտակարգ գեղեցկությամբ: Նրանք կատարյալ էին նաև հոգեպես: Հիրավի, բացառիկ էր ֆիզիկականի ու հոգևորի այդպիսի ներդաշնակ միասնությունը: Բացառիկ էր նրանց անկասելի հմայքը և աստվածաշնորհ օժտվածությունը, որի շնորհիվ ունեին աներևակայելի ձգողականություն, որը մույնիսկ տասնամյակներ անց չի կորցնում իր ուժը...

Այդ ամենով հանդերձ՝ նրանք չափազանց համեստ էին, երբեք ի ցույց չէին դնում իրենց առավելությունները: Երկուսն էլ ապահովված ընտանիքներից էին. Լեոնիդի հայրը բարձրաստիճան

կուսակցական գործիչ էր: Սակայն նրանց չէին հրապուրում «գեղեցիկ կյանքի վայելքները»: Նրանք գաղափարական անձինք էին, ապրում էին հագեցած և բովանդակալից կյանքով: Արդեն ուսումնառության տարիներին Մոսկվայի պետական համալսարանի ուսանող Լեոնիդը Մեծ եղեռնի օրը կազմակերպում էր հանրահավաքներ, որի համար նրան հեռացրել են համալսարանից, և նա ուսումը շարունակել է Երևանում:

Թե՛ Լեոնիդին, թե՛ Դավիթին խորապես խոցում էր սեփական ազգի ողբերգական պատմությունը: Այն ժամանակ նրանք դեռ չգիտեին, որ իրենց բախտ է վիճակվելու շրջել այդ պատմության մեկ էջը, դեռ չգիտեին, որ երկուսն էլ օժտված են փայլուն ռազմական տաղանդով:

Դա տեղի էր ունենալու ավելի ուշ, իսկ առայժմ նրանք ապրում էին լիարժեք հագեցած կյանքով՝ ձգտելով առավելագույնս պիտանի լինել հասարակությանը: Լեոնիդ Ազգալոյանը բազմաթիվ նվաճումների էր հասել ֆիզիկայի բնագավառում, դեկավատում էր տնտեսության համար կարևոր նշանակություն ունեցող գիտական աշխատանքներ: Իսկ Դավիթը խորասուզվել էր գրական արարման մեջ:

Կինոյի կախարդական աշխարհը



Գեհարդի Մեկքոնյան

Շուտով Դավիթի կյանքում անսպասելի շրջադարձ տեղի ունեցավ. կարծես հրաշքով նրա առջև բացվեց կինոյի աշխարհը՝ շնորհիվ նրա զարմիկի՝ հայտնի ռեժիսոր Գեհարդի Մեկքոնյանի: Նա վաղուց էր նկատել Դավիթի ստեղծագործական ջիղը ու համոզված էր, որ վերջինս ունակ է բարձր թռիչքների: Գեհարդին առաջարկեց Դավիթին Օդեսայում մասնակցել իր ֆիլմի նկարահանմանը և փորձել

ուժերը որպես երկրորդ ռեժիսոր: Դավիթը ոգևորությամբ ընդունեց առաջարկը և պատրաստվում էր մուտք գործել կինոյի խորհրդավոր աշխարհը:

Եվ Օդեսայում սկսվեց Դավիթի կյանքի հետաքրքրական շրջանը:

Ստեղծագործական աշխատանքը դուր էր գալիս Դավիթին. նա իր տարերքի մեջ էր. այստեղ նրա համար ամեն ինչ նոր էր և ուշագրավ: Եվ, ինչպես պարզվեց, ինքն էլ էր հետաքրքրում այդ



աշխարհի մարդկանց: Տաղանդավոր երիտասարդին գնահատում էին հայտնի կինոգործիչները: Ակնհայտ էր, որ նրան մեծ ապագա է սպասում: Այդ շրջանում շատերը նրա

«300 վայրկյան» վիպակը կարդալուց հետո Դավիթին առաջարկեցին այդ երկի հիման վրա գրել ֆիլմի սցենար: Դավիթը հաճույքով ներգրավվեց այդ բարդ, սակայն անչափ պատասխանատու աշխատանքում և շուտով հաջողությամբ ավարտեց այն: Պատրաստի սցենարը ներկայացրեց Օդեսայի կինոստուդիա: Եվ ինչքան երջանիկ էր Դավիթը, երբ նրան հայտնեցին, որ սցենարը հավանության է արժանացել, և որոշվել է նրա հիման վրա ֆիլմ նկարահանել:

Ճակատագիրը վերջապես ընդառաջում էր Դավիթին: Նա ճախրում էր երջանկությունից: Սկսվեցին նախապատրաստական աշխատանքները: Ռուսական կինոյի ճանաչված դերասաններ Եվգենի Եվստոիգեններ, Դավիթ Շենգելիան և ուրիշներ արդեն համաձայնել էին նկարահանվել ֆիլմում: Դավիթի նկատմամբ բոլորի վերաբերմունքը շատ բարեկամական էր: Նրան առանձնապես համակրում էին կանայք, որոնց անչափ գրավում էին երիտասարդի արտաքինը, առնականությունը և, իհարկե, ասպետական պահվածքը: Դավիթը վերելքում էր. անսպասելիորեն դրական շրջա-

դարձ էր սկսվել նրա կյանքում: 24 տարեկանում նա հասցրել էր ճաշակել թե՛ անկման դառնությունը և թե՛ վերելքի բերկրանքը: Նա արդեն կայացած մարդ էր, որն անցել էր կյանքի բարդ ճանապարհներով և հաղթահարել բազմաթիվ դժվարություններ ու անհաջողություններ: Նա արդեն կյանքի հարուստ փորձ ուներ, որը հազվադեպ էր այդ տարիքում, լի էր ստեղծագործական ավյունով, երազում էր հնարավորինս շուտ սկսել ֆիլմի նկարահանումը:

Այո՛, նա կարող էր սիրել, սիրվել, լիարժեք վայելել բարեհաջող հուն ուղղորդվող իր կյանքը: Թերևս այդպես կվարվեին շատերը: Շատերը, բայց ո՛չ երբեք Դավիթը:

Սկսվում էր Արցախյան շարժումը...

Հռչակավոր նախնիները

Արցախ...

Այդ զարմանահրաշ ու հարուստ պատմություն ունեցող աշխարհը Դավիթին գերում էր մանկուց: Հաճախ էր կլանված լսում մոր ու պապի՝ Պավել Սարգսյանի պատմությունները այդ չքնաղ երկրամասի մասին, որտեղ դարերով ապրում էր իր մայրական տոհմը: Արցախի մեկիքների ու բեկերի այդ ազնվագարն տոհմը փայլում էր այնպիսի անուններով, ինչպիսիք են՝ Մելիք-Եղիա, Մելիք-Բայանդուր, Բեկ-Փիրումյաններ, որոնց մասին Դավիթը միշտ ձգտում էր իմանալ առավելագույնը: Ավելի հասուն տարիքում նա արդեն ինքնուրույն էր ուսումնասիրում Արցախի պատմությունը, կլանված կարդում էր Բաֆֆու «Խամսայի մեկիքությունները» պատմական ուսումնասիրությունը, որտեղ մեծ վիպասանը վառ գույներով պատկերել է Արցախի հերոսական, բայց և ողբերգական պատմությունը, նկարագրել է Ղարաբաղի մեկիքների մաքառումը անկախության համար:

Կարդալով այդ երկը՝ Դավիթը կարողացավ հասկանալ ամենակարևորը՝ հայ ժողովրդի մեջ երբեք չի մեռնի անկախության

ու ազատության ձգտումը, որ մեր ժողովուրդը միշտ պատրաստ է զենքը ձեռքին պաշտպանել իր անկախության և ազատության սուրբ իրավունքը:



Դանիել Բեկ-Փիրումյան
(1861-1921)

նախնիները՝ Դանիել և Պողոս Բեկ-Փիրումյանները: Դավիթը մանրակրկիտ ուսումնասիրել է Բեկ-Փիրումյանների զինվորական տոհմի պատմությունը, նրա նշանավոր գործիչների հերոսական ու դրամատիկական իրադարձություններով հարուստ կենսագրությունները: Այդ տոհմից սերած ռազմական գործիչները ցարական Ռուսաստանի բանակի բարձրաստիճան սպաներ էին, արժանացել էին պետական բարձրագույն պարգևների: Նրանցից յուրաքանչյուրը փայլում էր իր անցած մարտական ուղիով:

* * *

Դավիթն առավել խորացել էր Դանիել և Պողոս Բեկ-Փիրումյանների կյանքի ու գործի մանրամասների մեջ: Այդ երկու գորավարները հորեղորոր որդիներ էին. երկուսն էլ ռուսական բա-

նակի գնդապետներ էին և որոշիչ դեր են ունեցել Սարդարապատի ճակատամարտում: Դանիել Բեկ-Փիրումյանը Սարդարապատի ճակատամարտի գլխավոր հրամանատարն էր, իսկ Պողոս Բեկ-Փիրումյանը ղեկավարել է հինգերորդ՝ մահապարտների (ղարաբաղցիների) գունդը:

Դավիթն իր վառ երևակայությամբ իրեն պատկերացնում էր այդ պատմական ճակատամարտի տարբեր դրվագներում: Մեկ նա գլխավոր հրամանատար Դանիել Բեկ-Փիրումյանի զորքի շարքերում մասնակցում էր շրջադարձային մարտին՝ կործանիչ հակահարված հասցնելով թշնամուն: Այդ մարտում հրամանատարը վճռական պահին ռազմագործողության հետագա ղեկավարությունը հանձնել է շտաբի պետ Ալեքսանդր Շնեուրին, իսկ ինքը նետվել ռազմի դաշտ՝ զորքը տանելով իր հետևից: Եվ այդ զորքը, ոգևորված իր զորավարով, ռազմաճակատի կենտրոնական մասում գրոհել ու ջախջախել է թշնամուն: Մեկ Դավիթն իրեն պատկերացնում էր մահապարտների գնդում, այն գնդի շարքերում, որտեղ կռվել է նաև իր պապը՝ Պավել Սարգսյանը: Վճռորոշ՝ հարձակման պահին հրամանատարը կանգնեցրել է գունդը և իր զինվորներին ոգևորելու համար հայրենասիրական բոցաշունչ ճառ ասել, իսկ հետո «առաջ» բացականչելով նետվել ռազմի դաշտ՝ իր հետևից տանելով ոգեշնչված մարտիկներին: Յուրաքանչյուր մահապարտ կռվել է տասի փոխարեն՝ բազմապատիկ թշնամուն ստիպելով նահանջել:




Պողոս Բեկ-Փիրումյան
(1862–1921)

Սարդարապատի ճակատամարտում, հիրավի, աննախադեպ հերոսություն են ցուցաբերել Բեկ-Փիրումյան զորավարները: Նրանց սխրանքը շատ բարձր է գնահատել Սարդարապատի ճակատամարտի մասնակից, ԽՍՀՄ ապագա մարշալ Հովհան-

նես Բաղրամյանը՝ ընդգծելով նրանց ճկուն ռազմավարությունը և հմտությունը, ամենաբարդ իրավիճակում չափազանց խիզախ և վճռական որոշում կայացնելու ունակությունը: 1919 թվականին Դանիել Բեկ-Փիրումյանն արժանացել է Հայաստանի առաջին հանրապետության ՁՈՒ բարձրագույն՝ գեներալ-մայորի կոչման:

Դավիթը հպարտանում էր իր ժողովրդի պատմության փայլուն էջերով, նաև այդ մեծ գորավարներով: Այն ժամանակ նա, իհարկե, չգիտեր, որ իր նախնիների հերոսական գեները, ռազմական բացառիկ տաղանդը փոխանցվել են նաև իրեն: Չգիտեր, որ գեները ձեռքին օրհասական պահին նրանց մնան պաշտպանելու է իր համար այնքա՛ն թանկ Արցախի հողը, որը 1921 թվականին, խախտելով միջազգային օրենքների բոլոր նորմերը, չունենալով ոչ մի օրենսդրական իրավունք, Կովկասյան բյուրոյի պլենումը հանցավոր որոշմամբ ներառել էր Ադրբեջանական ԽՍՀ կազմում:



Ամեն անգամ նայելով պատմական Հայաստանի քարտեզին՝ հայորդու սիրտը կծկվում էր՝ տեսնելով, թե ինչքան է փոքրացել իր հայրենիքը, ինչքան տարածքներ են կորսվել: Իսկ հիմա վտանգված էր նաև Արցախը: Կորուստ նաև ա՞յս անգամ: Ո՛չ: Դրա համար նա իրեն երբեք չէր ների: Եվ նա առաջիններից մեկը նետվեց ռազմի դաշտ ու իր նախնիների նման մասնակցեց Սարդարապատում սկսված և Արցախում շարունակվող հայոց նորօրյա գոյամարտին:

1988 թվական

1988 թվականին ալեկոծվել էր ողջ հայ ժողովուրդը: Բոլորը միահամուռ պահանջում էին շտկել խորհրդային նախկին իշխանությունների սխալները և Լեռնային Ղարաբաղը վերամիավորել Մայր հայրենիքի հետ: Այդ աննախադեպ ազգային հոգևոր վերագարթոնքը շրջադարձային էր և հայոց պատմության մեջ բացեց նոր գորավոր էջ:

Ճակատագրական այդ ժամանակաշրջանում ասպարեզ եկան անձնուրաց և հերոսացման պատրաստ հայոց լավագույն զավակները: Այդ փաղանգի թերևս ամենապայծառ աստղը Լեռնիդ Ազգալոյանն էր, որը հանդես եկավ որպես գաղափարախոս, քաղաքագետ, որպես պետական մտածողություն ունեցող փայլուն գործիչ: Սթափ գնահատելով ստեղծված իրավիճակը՝ նա ճշգրտորեն կանխատեսում էր իրադարձությունների հետագա ընթացքը և համոզված էր, որ շարժումը վերածվելու է պատերազմի, որ հրապարակներում ճառեր ասելու փոխարեն անհրաժեշտ է զենք արտադրել: Եվ Ազգալոյանն իր մի խումբ համակիրների հետ լծվեց այդ բարդ ու դժվար գործին: Նա համոզված էր, որ միայն զենքի ուժով է կերտվելու մեր ժողովրդի հաղթական ապագան: Նույն կերպ էր մտածում նաև նրա գաղափարական զինակիցը՝ Դավիթ Սարապյանը: Նրանք Գարեգին Նժդեհի հանգույն

համոզված էին, որ սեփական ուժերով ինքնապաշտպանվելու անընդունակ ժողովուրդը դատապարտված է մահվան:

1990 թվականին, ինչպես կանխատեսել էր Լեոնիդ Ազգալոյանը, շարժումը հրապարակից տեղափոխվեց սահմանամերձ գոտիներ: Նա առաջիններից մեկը նետվեց ռազմի դաշտ, իսկ նրանից երկու ամիս անց պատերազմի բոցերի մեջ նետվեց նաև Դավիթ Սարապյանը: Նրանք համոզված էին, որ օրհասական պահերին մտավորականի համար չկա ավելի բարձր առաքելություն, քան հայրենիքին նվիրվածությունը գործով ապացուցելը:

Այդպես էին մտածում նաև Մովսես Գորգիսյանը, Ալեքսանդր Թամանյանը, Արթուր Մալխասյանը, Սիմոն Ալիքզյոզյանը, Թաթուլ Կրպեյանը, Վարդան Ստեփանյանը (Դուշման)... Նրանք, ասես, այս պատերազմին պատրաստվել էին իրենց ողջ կյանքում, նույնիսկ այն ժամանակ, երբ Արցախյան շարժման մասին խոսք անգամ չկար: Նրանց մեջ ճիշտ ժամանակին արթնացած գեներալի զինվորն այլընտրանք չունեիր... Ճանապարհը մեկն էր՝ դեպի ռազմի դաշտ...

Այո՛, նրանք չունեին այլընտրանք, քանզի նրանց համար չկար ավելի վեհ նպատակ, քան հայրենիքի պաշտպանությունը: Այդպիսի բացառիկ մարդկանց նկատի ունեի 20-րդ դարի մեր վերջին օծյալ սպարապետը՝ Գարեգին Նժդեհը, երբ գրում էր. *«Անհատի մեջ զարթնում է նոր գիտակցություն, որ իր անձը պարկանում է ոչ իրեն, այլ՝ ցեղին... քաղաքական սրբերն են նրանք, ովքեր հանուն իրենց ժողովրդի լավագույն ապագայի՝ իրենց ուսերին առնում են ծանր բեռ»:*

Եվ այդ բեռը շատ ավելի ծանր էր կամավորական առաջամարտիկների համար, այն անկոտրում և վճռական զինվորների համար, որոնք կարողացան դնել ապագա հաջողության հիմքը: Նրանք հաղթական հավատքով էին ելել ինքնապաշտպանության: Պատմական առաքելություն էին կատարում նրանք՝ մեր նորագույն պատմության առաքյալները, որ վճռական դեր ունեցան Արցախյան գոյամարտի հաղթանակում:

Գրիչը փոխարինեց զենքով

Սո՞ւրբ, թե՞ գրիչը...

Թե՛ մեկը, թե՛ մյուսը...

Գարեգին Նժդեհ

1990 թվականի գարնանը Դավիթը պատրաստվում էր մեկնել ռազմաճակատ: Իհարկե, չափազանց դժվար էր մնան որոշում ընդունելը. նա շատ էր անհանգստանում մոր համար: Դավիթը պաշտում էր իր մորը և լավ էր հասկանում, թե ինչպիսի տառապանքների կդատապարտվի տիկին Էմման, եթե իրեն որևէ բան պատահի: Բայց գիտեր նաև, որ իր մայրը հազվագյուտ և ուժեղ կին է, որ նա կանանց ու մայրերի այն եզակի տեսակից է, որոնք, Գարեգին Նժդեհի արտահայտությամբ, *«հայրենասիրության փառարում սուրբ կրակի պահապաններն են»*, և որոնց մասին պետք է դատել՝ ըստ իրենց որդիների. *«Փառք ու պատիվ այն մայրերին, որոնք քաջեր են ծնում»*:

Իհարկե, փառք ու պատիվ այն բոլոր մայրերին, որոնք ազգին այդպիսի զավակներ են պարգևել: Փառք ու պատիվ նաև տիկին Էմմային, որ լավ էր հասկանում՝ Դավիթը չէր կարող անմասն մնալ այդ պայքարին, քանի որ հայրենիքը վտանգված էր: Նա հասկանում էր, որ իր որդու համար առաջնայինը հայրենիքն է:

Դավիթն արժեքավոր իրեր վաճառեց տնից և այդ գումարով զենք գնեց: Գրիչը փոխարինելով զենքով՝ նա մեկնեց առաջնագիծ և անդամազրկեց Լեոնիդ Ազգալոյանի «Անկախության բանակին»:



ՊԱՅՔԱՐԸ

.....

Ռազմի դաշտում

Պատերազմը շատ շուտ բացահայտեց Լեոնիդ Ազգալդյանի ռազմական տաղանդը: Չունենալով ռազմական կրթություն ու փորձ՝ նա կարողացավ դժվարագույն պայմաններում և շատ կարճ ժամանակում ստեղծել ռազմական կոտ կառույց՝ «Անկախության բանակը», որը նոր որակ, նոր լիցք հաղորդեց ազատագրական պայքարին: Այդ ծավալի գործ իրականացնելու համար ռազմական հաստատություններից տարիներ կպահանջվեին: Դա ուժեղ ու մարտունակ բանակ էր՝ պատրաստ դիմագրավելու ամենածանր փորձությունները: Այդ բանակն առանձնանում էր նաև իր խիստ կարգապահությամբ: Ազգալդյանի «դպրոցն» անցած մարտիկները կատարյալ հրամանատարի կատարյալ զինվորներ էին: «Անկախության բանակին» անդամագրվելը մեծ պատիվ էր յուրաքանչյուրի համար:

Այդ պատվին, իհարկե, արժանացել է նաև Դավիթ Սարապյանը: Նա լավագույն զինվոր էր, աչքի էր ընկնում իր մարտական պատրաստվածությամբ, անկրկնելի խիզախությամբ:

Պատերազմը բացահայտեց նաև Դավիթի ռազմական տաղանդը: Լեոնիդն անչափ հպարտանում էր իր զինվորով՝ իր ընկերոջով, որին մեծագույն հարգանքով էին վերաբերվում նաև մարտական ընկերները:

Ահա թե ինչ է պատմում նրա մասին «Ազատագրական բանակի» մարտիկ Սեյրան Գրիգորյանը. *«Դավիթը պատերազմի թեժ պահին պայծառ լույս էր: Նա ազգի համար հոգի էր փայլիս, իրեն չէր խնայում, չափազանց համարձակ էր. վախ չունեիր:*

Վրանգի ժամանակ հարվածի րակ էր դնում իրեն: Նա միշտ ասում էր.

– Տղե՛րք, առաջ գնացեք, մենք հեղ Գնալու ճանապարհ չունենք»:

Սեյրանը հիշում է, որ «Դև» մականունն ինքն է առաջարկել. «Մարտի ժամանակ, րեսնելով նրա դիվային զորությունը, ես առաջարկեցի հրամանատարին նրան «Դև» անվանել:

– Ճիշտ անում է,– առաջարկիս հավանություն տալով՝ ասաց նա և ավելացրեց,– հնչողությամբ էլ մոտիկ է Դավիթ անվանը: Այդպես Դավիթը բոլորիս համար դարձավ «Դև»: Եվ, իհարկե, Դևի կերպարին համապատասխանում էր նաև նրա հաղթանդամությունը. շատ բարձրահասակ էր, աչքի ընկնող:

Հեղախուզության ժամանակ նա միշտ վերջինն էր գնում՝ չյան վրա թողնելով մեծ ուրնահեղքերը: Թուրքերն անասելի սարսափում էին Դավիթից. նրան «Ահեղ Դև» էին անվանում:

Բոլորիս շատ էին զարմացնում նաև նրա ինքնաշեն զենքի չափերը: Ես ասում էի Դևին.

– Ավրոմա՛ր վերցրու, ինչո՞ւ ես այդ մեծ զենքն օգտագործում: Իսկ նա ասում էր.

– Չէ՛, սա իմ չափսերով է ու րդամարդու զենք է:

Այդ զենքը մենք հագիվ էինք գեղնից պոկում, իսկ նրա չեղքին ոնց որ խաղալիք լինեք»:

Դավիթի մասին վառ հուշեր էր պատմում նաև Գանձասարի վանահայր տեր Գրիգոր քահանա Մարկոսյանը: Ասում էր, որ Մարտունաշեն գյուղում հանդիպել է Լեոնիդ Ազգալյանին՝ իր մարտիկների հետ: Այդտեղ է առաջին անգամ տեսել Դավիթին, որն էլ անմիջապես գրավել է նրա ուշադրությունը. «Դավիթը մոտեցավ ինչ և, րեսնելով, որ հոգևորական եմ, սկսեց ինչ հոգևոր քննաներով հարցեր րալ: Ինչ հաճելիորեն զարմացրեց, որ նա բավական լավ գիտեր Նոր կրակարանը և շատ խելացի վերլուծություններ էր անում: Շփման ընթացքում ես իմացա, որ Դավիթը գրում է, և խոսակցությունը շարունակվեց արդեն գրականության շուրջ: Լեոնիդը, րեսնելով, որ մենք զրուցում ենք, մոտեցավ մեզ.

- Շատ կարգին տղա է,– ցույց տալով Դավիթին՝ ասաց նա։
Հերոս Լեոնիդը պատմեց, Դավիթի ծնողների մասին։ Անկախ
ինչնից՝ ասացի։
- Այսքան մտավորականներով ի՞նչ գործ ունեք այստեղ։
- Հայրենիք ենք պաշտպանում, ախպե՛ր,– պատասխանեց
նա»։

«Սա Հայաստան է և... վե՛րջ»

Այո՛, նրանք պաշտպանում էին հարազատ հողը։ Նրանք պայքարում էին ամեն թիզ հողի համար և առաջնորդվում «Ո՛չ մի կտոր հող չպետք է հանձնվի», «Սա Հայաստան է և... վե՛րջ» սկզբունքներով։

Լեոնիդ Ազգալոյանի թևավոր դարձած այս հանրահայտ արտահայտությունները շրթներին՝ «Անկախության բանակի» զինվորներն իրենց հրամանատարի հետևից նետվում էին ռազմի դաշտ։ Իր խիզախությամբ նա ոգևորում էր զինվորներին և մղում կռվի ոչ թե մեռնելու, այլ ապրելու համար։ Այդ փառապանծ բանակը, չճաշակելով պարտության դառնությունը, անցնում էր իր հաղթական ուղին։ 27 հաղթանակ... Ահա «Ազատագրական բանակի» անցած փառահեղ ճանապարհը, որը Վարդենիսի սահմանամերձ գյուղերից ձգվում էր մինչև Մարտակերտ։ Ե՛վ Լեոնիդի, և՛ Դավիթի համար Արցախի ազատամարտի հաղթական ավարտն այն նախադրումն էր, որով հնարավոր կլիներ գնալ դեպի իրենց երազած Հայաստանը։ Նրանց համար հայրենիքը սոսկ Հայաստանի Հանրապետությունը չէր։ Նրանց համար Հայաստան էր յուրաքանչյուր տարածք, որը վաղնջական ժամանակներից ջերմացել էր հայի շնչով, որտեղ անջնջելի կնիք էր թողել հայ մարդու արարչագործ ձեռքը։ Ազատագրելով Արցախը՝ նրանք մտովի ազատագրում էին Կարինն ու Վանը, Կարսն ու Անի... և...

Ավա՛ղ, նրանց չվիճակվեց հասնել իրենց երազանքներին, չվիճակվեց ապրել հաղթանակի բերկրանքը, ա՛յն հաղթանակի, որի հիմքը դրեցին իրենք՝ Արցախյան գոյամարտի անկոտրում զինվորները՝ մեր նորագույն պատմության դյուցազունները:

«Մեծն Տիգրանի» մեծն մարտիկը

Դավիթը միշտ ձգտում էր լինել այնտեղ, որտեղ վիճակն առավել ծանր էր ու վտանգավոր: 1992 թվականին այդպիսի կացություն ստեղծվել էր Շահումյանում: Կրեմլի հերթական հակահայկական որոշմամբ՝ Շահումյանի շրջանը միացվեց նրա հարևան Գերանբոյի շրջանին, որը, ըստ էության, նշանակում էր հայկական այդ շրջանի ամբողջական հայաթափում: Կարճ ժամանակում ռազմական ստուգիչ նոր անցակետեր դրվեցին Շահումյանի ու Մարտակերտի շրջանները միացնող ճանապարհին, որով Շահումյանը կտրվեց մաս Արցախից՝ ենթարկվելով կրկնակի շրջափակման: Վիճակի առանձնակի ծանրությունը պայմանավորված էր նրանով, որ, ադրբեջանական ՕՄՕՆ-ից² բացի, սկսված առճակատմանն արդեն բացահայտորեն միջամտում էին Ադրբեջանում տեղակայված խորհրդային 4-րդ բանակի ստորաբաժանումները: Հայ բնակչությունը հայտնվել էր ծայրահեղ ծանր վիճակում: Իմանալով այդ ամենը՝ Դավիթը մեկնում է Շահումյան և անդամագրվում «Մեծն Տիգրան» աշխարհագորային զնդին, որն այն ժամանակ գործում էր հիմնականում Շահումյանի շրջանում և վերահսկում էր ռազմավարական նշանակություն ունեցող մեծ տարածքներ:

Գնդի մարտիկները մեծ ոգևորությամբ ընդունեցին Դավի-

² ՕՄՕՆ (отряд милиции особого назначения – հատուկ նշանակության միլիցիայի ջոկատ) – ռուսերեն հապավում է:

թին, քանի որ նա արդեն լավ կռվող ազատամարտիկի համբավ ուներ: Հենց առաջին օրերից նա ընկերացավ տղաների հետ, և շուտով բոլորին պարզ դարձավ, որ այս զրազետ ու նախաձեռնող մարտիկն իսկական գտածո է «Մեծն Տիգրան» գնդի համար:

Դավիթը հաջողությամբ կատարում էր բազմաթիվ լուրջ և կարևոր առաջադրանքներ, մշակում և իրականացնում ռազմա-



Տիգրան Սարգսյան
(1965–1991)

կան բարդ գործողություններ: Նրա ոգին ու խիզախությունը հիացնում և ոգեշնչում էին մարտիկներին: Դավիթին շատ բարձր էր գնահատում ջոկատի ղեկավարությունը և հատկապես «Մեծն Տիգրան» աշխարհագրային գնդի շտաբի պետ Տիգրան Սարգսյանը: Չնայած երիտասարդ տարիքին (նա ԵՊՀ իրավաբանության ֆակուլտետի ուսանող էր)՝ Տիգրանը բացառիկ մարտական ունակություններ ուներ: Բնատուր առաջնորդ էր, հրաշալի ստրատեգ և հիանալի մարդ: Ճակատագրի կամոք գրեթե միաժամանակ ընդհատվեց այդ երկու

փայլուն հայորդիների կյանքը, և երկուսն էլ հայտնվեցին «Շռաբլուր» պանթեոնում՝ կողք կողքի:

Կործանված «Կոկորդիլոսը»

Դավիթի անհավանական թվացող քաջագործությունների մասին հաճախ են հիշում զինակիցները: Ահա արտառոց դեպքերից մեկը: Հերթապահ մարտախումբը Մռավի լանջերը հետախուզելու հրաման է ստանում: Նոր էին հաղթահարել քարակարկառները, երբ երկնքում հայտնվում են ռազմական ուղղաթիռներ՝ այսպես կոչված «Կոկորդիլոսներ»: Վարձկան օդաչուները նկատել էին տղաներին և, չարագուշակ պտտվելով, պատրաստվում

էին կրակ բացել նրանց ուղղությամբ:

Բաց տարածություն էր, բոլորը սրընթաց վազում էին թաքստոցներում պատսպարվելու: Հանկարծ թաքստոցներից նկատում են, որ Դավիթը մնացել է սարի բարձունքին: Ուղղաթիռները, Մռավը օդակելով, ավելի ու ավելի էին իջնում: Երբ նրանք հասնում են նշանառության հեռավորության, Դավիթը կանգնում է իր հաղթ հասակով և սկսում գնդակոծել ուղղաթիռները...

Բարձունքից նա իջնում է «Կոկորդիլոսներից» մեկը կործանելուց հետո:

Զարմանալի խիզախություն:

Դավիթը սովոր էր այդպիսի անսպասելի ու վտանգավոր որոշումներ կայացնելու և իրագործելու: Ինչպես էպոսի իր անվանակիր հերոսը, նա նույնպես պատրաստ էր մեն-մենակ կռվելու թշնամու դեմ և հաղթել նրան:

«Սարերից ներքև»

Այո՛, Դավիթն ունակ էր զարմացնելու և հիացնելու թե՛ մարտի դաշտում, թե՛ մարդկային շփումներում:

– Նա *էությանը առաջնորդ էր*, – ասում է «Մեծն Տիգրան» աշխարհագրային գնդի հետախուզական ջոկատի հրամանատար Արկադի Սահակյանը, – *սակայն հրամաններ արձակել նա չէր սիրում: Դավիթը, այսպես կոչված արքայական սպայի վարքագիծ ուներ. հրամաններ չէր տալիս, այլ ինքն էր գործում, և նրա հրամանն էր՝ արա՛ ինչպես՝ ես:*

Սակայն նրա մման գործել քչերն էին կարողանում: Նա ունակ էր աներևակայելի խիզախության: 1991 թվականի գարնանը ջոկատը հայտնվել էր շատ բարդ վիճակում. խորհրդային բանակի դեսանտային գունդը պատրաստվում էր իրականացնել «Սարերից ներքև» ռազմագործողությունը: Նպատակը Գյուլիստանի անտառներում տեղակայված «Մեծն Տիգրան» գունդն

այնտեղից դուրս մղելն էր: Մեր աշխարհագրայինները դժվարությամբ էին կարողանում դուրս բերել տասնյակներով հաշվվող հիվանդներին և վիրավորներին: Որոշվել էր այնտեղից հեռացնել նաև փորձ չունեցող բազմաթիվ մարտիկների: Այս ամենի



հետևանքով՝ հարյուրավոր մարդկանցից մնացել էին միայն քսան համարձակներ, որոնք պատրաստ էին դիմակայելու: Նրանք որոշել էին պարտիզանական կռիվ մղել հակառակորդի դեմ և այն տպավորությունն ստեղծել, թե իրենք բազմամարդ են ու լավ զինված: Այդ քսան խիզախները գիտեին, որ իրենց մահն ան-

խուսափելի է, այդ իսկ պատճառով յուրաքանչյուրը մեկական գնդակ էր պահում իր համար...

Գիշերվա տազնապալից ժամերից հետո, երբ տղաները լուսաբացին դուրս են գալիս տեղանքն ստուգելու, հանկարծ նկատում են դեպի իրենց դիրքերը եկող ավտոբուս, բնականաբար, զինվորներով լի: Այդ պահին Դավիթը մեծ արագությամբ վազելով հայտնվում է ավտոբուսի առաջ ու պատրաստվում դիմացից գնդակոծել այն՝ համոզված, որ ինքն էլ է զոհվելու, սակայն, բարեբախտաբար, հասցնում է հասկանալ, որ եկողները մեր ռազմիկներն են. նրանք օգնության էին գալիս: Այսինքն՝ մի քանի րոպեի ընթացքում մա դրսևորում է հանկարծակի, բայց սթափ որոշումներ ընդունելու և իրականացնելու արտառոց՝ ֆենոմենալ ունակություններ:

Հետագայում խորհրդային զորքերը «Սարերից ներքև» ռազմագործողությունն անսպասելիորեն դադարեցրին:

«Այստեղ իսկական դժոխք է...»

Տագնապալի իրավիճակը Շահումյանում ավելի ու ավելի էր սաստկանում: Խորհրդային և ադրբեջանական զինուժի համատեղ գործողությունները դառնում էին էլ ավելի անմարդկային ու հրեշավոր: Այդ թեժ ժամանակաշրջանում ինքնաթիռով Շահումյան է գալիս բուլղար լրագրող Յվետանա Պասկալևան: Այստեղ էլ նա առաջին անգամ հանդիպում է Դավիթին:

Յվետանան հիշում է, թե ինչպիսի զարմանքով էր իրեն նայում Դավիթը, իսկ հետո չդիմացավ և հարցրեց.

– *Դուք գիտե՞ք, թե ուր եք եկել, գիտե՞ք, որ այստեղ իսկական դժոխք է...*

Յվետանան շուտով համոզվեց դրանում, որովհետև այն, ինչ կատարվում էր Շահումյանում, այլ կերպ բնորոշել հնարավոր չէր: Տեղի էին ունենում հրեշավոր գործողություններ: Հայ բնակչությանը զանգվածաբար տեղահանում էին, մարդկանց թալանում, սպանում, ընտանիքներով վռնդում սեփական տներից: Սոված, տանջված, ոտաբորիկ մարդկանց շարքերը օդային հրաձգության տակ տասնյակ կիլոմետրեր էին կտրում բարդագույն՝ գրեթե անանցանելի ճանապարհներով: Նրանք հիմնականում անօգնական կանայք էին, ծերեր ու երեխաներ: Այդ դժբախտ մարդկանց օգնում էին սակավաթիվ կամավորներ, որոնք անասելի ցավ էին ապրում կատարվածից: Դավիթն ասում էր.

– *Եթե գոնե մեկ անգամ նայեք այդ մարդկանց աչքերին, այլևս չեք կարողանա լքել նրանց:*

Այո՛, նրանց չէին կարող լքել այն մարդիկ, որոնք ունակ էին զգալու ուրիշի ցավն ու տառապանքը, որոնք իրենց պատասխանատու էին համարում սեփական ազգի ճակատագրի համար և կամովին իրենց ուսերին էին առել այդ ծանր բեռը: Այդ մարդկանց ողբերգական, անելանելի վիճակը հավերժացրել է Յվետանայի տեսախցիկը. հետագայում դրանք նա ցուցադրել է Արցախյան գոյամարտի մասին պատմող իր վավերագրական կինոնկարներում:

Շահումյանում տեղի ունեցող ահավոր իրադարձությունները չափազանց ծանր ու անջնջելի տպավորություն են թողել բոլորար լրագրողի հիշողության մեջ: Առանձնապես վառ է հիշում Էրքեջ գյուղում տեղի ունեցած մարտը: Այդ մասին նա հետագայում պատմել է արձակագիր Մանուկ Մնացականյանին, որի հիման վրա վերջինս գրել է «Նահանջը երգով» պատմվածքը:

Էրքեջի մարտի ականատեսն է եղել նաև զինվորական լրագրող Վարդան Դևրիկյանը (այժմ՝ ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն, բանասիրական գիտությունների դոկտոր): Այդ օրերին գյուղի մոտակայքում նա հանդիպել է «Մեծն Տիգրան» գնդի մարտիկներին: Այնտեղ էլ առաջին անգամ տեսել ու ծանոթացել է Դավիթի ու Ցվետանայի հետ: 1992 թվականի այդ օրերի իրադարձությունների մասին Վարդանը պատմում է, որ հուլիսի 12-ին հակառակորդն արդեն մտել էր Բուզլուխ ու Մանաշիդ, որտեղից մինչ այդ հայկական պաշտպանական ուժերը հեռացրել էին հայ խաղաղ բնակչությանը: Չնայած ուժերի անհամեմատելի գերակշռությանը՝ թշնամին, այնուամենայնիվ չի համարձակվում մտնել Էրքեջ, որովհետև վախենում էր, որ հայկական ուժերն անտառի փեշերից կարող են հարձակվել, և իրենց թիկունքն ապահովելու համար նրանք ողջ օրվա ընթացքում պահակակետեր են դնում Էրքեջ տանող ճանապարհին: Այդ նախագգուշական քայլերից պարզվում է, որ նրանք հաջորդ առավոտյան մտնելու են Էրքեջ: Եվ ծագվում է տանջալից հարցը՝ ի՞նչ անել. բախվե՞լ զինված թշնամու հետ, որը մեր դեմ կհաներ նաև խորհրդային բանակի զինուժը, թե՞ նահանջել նաև Էրքեջից՝ թողնելով, որ աղոթեջանցի թուրքը գյուղ առ գյուղ անպատիժ առաջ շարժվի:

Փաստորեն, առճակատումն անիմաստ էր ու անհեռանկար: Երեկոյան բուռն քննարկում է սկսվում: Տղերքն ասում էին.

– Մինչև *n^օր պեյք* է *նահանջենք*, *մինչև Երևա^ն*...

Տևական բանավեճից հետո գնդի ռազմաքաղաքական ղեկավարությունը որոշում է, որ, այնուամենայնիվ, չպետք է թողնել, որ թուրքն անպատիժ գրավի գյուղը: Նման որոշումը նաև

բարոյահոգեբանական հետեւանքներ կարող էր ունենալ: Ինչպէս շէտտում էին մարտիկները, անկախ ուժերի անհավասարությունից, հարկավոր էր մեկ կետում մարտի բռնվել թշնամու հետ և ցույց տալ, որ մա չի կարող անպատիժ առաջանալ մեր հայրենիքում...

* * *

– Համընդհանուր քննարկումն այդ երեկո ինչ-որ տեղ հոգեբանական լիցքաթափում կարելի է անվանել սպասվող կռիւից առաջ,– պատմում է Վարդան Դերիկյանը:– Իմ ուշադրությունն իսկույն գրավեց Դավիթը, որը թեև խոսում էր վարժ ռուսերենով, բայց հնթացս սահուն անցնում էր քանրային խոսվածքին թե՛ հայերենով, թե՛ ռուսերենով՝ ոչ առօրյա խոսակցական մակարդակով, այլ որոշակի գեղարվեստական ընդհանրացումներ անելով: Նայելով նրա արտիստիկ կեցվածքին և լսելով կուռ մտածողությամբ ու նման ելնէջումներով խոսքը՝ ինչ թվաց, թե մա եկել է Յվերանայի հետ և կինոյի ու լրագրության աշխարհից է: Ծանոթանալիս, նկարի ունենալով խոսվածքի այդ յուրահարկությունը, հարցրի, թե զբաղվո՞ւմ է, արդյոք, քանրային թեմաներով նկարահանումներով: Նա մի պահ ցնցվեց, սակայն ակնթարթորեն վերագտաւ ինքնարհրապետումը և ասաց, որ քանրերը մի քանի տարի շարունակ ինքը «նկարել» է իր աչքերով:

Ես այն ժամանակ չհասկացա նրան: Միայն հետո, երբ ծանոթացա Դավիթի կյանքի դրամատիկ պատմությանը, հասկացա այդ դառը խոսքերի իմաստը...

Գիշերային սպասման ընթացքում Դավիթը հասցրեց Յվերանային հուշել մի քանի մարտաֆիլմերի սցենարներ, որոնք առավել արտահայտիչ ու մտովի պատկերացնելի էին ռազմադաշտային այդ պայմաններում:

Կեսգիշերին Դավիթն ընկերներին ասել էր, որ կարող են քնել, միննույն է, մինչև լուսադեմ հարձակում չի լինի: Այնուամենայնիվ, գիշերը հերթապահների հետ հայացքը հառած էր պահել

քշնամու պահակակետերին: Հուլիսի 15-ի լուսաբացին թվում էր, թե նույնքան խաղաղ կանցնի նաև այդ օրը: Կեսօրին, սակայն, մի քանի զրահամեքենաներից բացված համաժամանակյա կրակի ուղեկցությամբ օմոնականներն սկսեցին շարժվել դեպի հայկական դիրքերը:

Տանկերի՝ մեծ տրամաչափերի գնդացիների բեկորային փամփուշտների այրող կրակին շուտով ավելացան նաև արկերի պայթյունները... Փլվեցին պատշգամբները...

Էրթեջ. նահանջը մարտով

Տղաները պատրաստ էին մարտի: 23-հոգանոց ջոկատի հրամանատարն էր Աֆղանական պատերազմի բովով անցած քաջ և փորձառու մարտիկ Ջիվան Աբրահամյանը (Հայաստանի ազգային հերոս, 1996): Ինչպես նախատեսված էր նախնական մշակված պլանով, մարտիկները բաժանվել են 2 խմբի: Մի խումբը դեկավարել է Ջիվան Աբրահամյանը, իսկ մյուսը՝ Դավիթ Սարապյանը: Խմբերը դիրքավորել են երկու հարևան տներում, որոնք նախապես ընտրել էին Ջիվանն ու Դավիթը: Դրանք իրարից ոչ հեռու քարե պարիսպներով տներ էին՝ դպրոցին մոտիկ. մարտի ժամանակ քշնամին ստիպված պիտի լիներ ուշադրությունը սևեռել երկու տարբեր կետերի վրա՝ ցրելով իր ուժերը: Տղաները համոզված էին, որ քշնամին շարժվելու է ուղիղ դեպի դպրոց, իսկ իրենք կողքից անսպասելի հարձակումով կկարողանան հարվածել նրան:

Վերջապես երևում են բլուրն ի վար սահող տանկերը, իսկ նրանց հետևից՝ հետևակի երեք զրահամեքենա: Մոտենալով գյուղին՝ տանկերից կրակում են դպրոցի շենքի վրա: Հողաշեն կառույցը փլվում է՝ տարածելով փոշի: Համոզվելով, որ դպրոցում մարդ չկա, տանկերից մեկը թեքվում, մոտենում է տղաներին:

Բոլորը լարվում են: Տղաները ռադիոկապ չեն ունեցել, բայց իրար հասկացել են առանց խոսքերի: Անհրաժեշտ էր խփել ճիշտ պահին, չշտապել: Դավիթը որսում է այդ պահն ու կրակում այն ժամանակ, երբ առաջին տանկն արդեն շատ մոտ էր: Տանկն սկսում է ծխալ: Երկրորդ կրակոցով Դավիթը խփում է մյուս տանկը, ապա հարվածում հետընթացք կատարելով փախչել փորձող զրահամեքենային: Գյուղական նեղ խաչմերուկը խցանվում է...

– *Ցավդ տանեմ*, – բղավում է Ջիվանը: – *Ես չեի դիմանա, շուր կիսփեի, ա՛յ թե ներվեր ունեւ, Դավիթ ջան:*

Տանկերից ու զրահամեքենաներից անձնակազմերը դուրս են թափվում, որպեսզի փախչեն, սակայն ապարդյուն. երկու տներից ճարճատում են հայ մարտիկների ավտոմատներն ու ձեռքի գնդացիորը: Հետընթացք կատարելով՝ կարողանում է փախչել միայն շարասյան վերջին զրահամեքենան, մյուսին Դավիթը կանգնեցնում է երրորդ կրակոցով...



**Ջիվան Աբրահամյան
(1961–1991)**

Հինգ ժամ տևած մարտն ավարտված էր: Խորհրդային զորքերն ու ադրբեջանական ՕՄՕՆ-ն այս խայտառակությունն արդարացնելու համար իրենց ռադիոժամկագրում կենտրոնին հաղորդում են, որ գյուղ մտնելիս հանդիպել են հայ էքստրեմիստների դիմադրությանը՝ զեկուցելով. «*Մեր կորուստներն են՝ 2 տանկ, 3 ԲՄՊ³, 41 սպանված: Էքստրեմիստները ջախջախվեցին գլխովին, գոհերի թիվը՝ 103*»:

Այդպես՝ ընդամենը 23 հոգով մեր տղաները թշնամուն մեծ վնաս հասցրին. բարեբախտաբար, ոչ ոք չէր վիրավորվել, մինչդեռ ողջ մնալու հավանականություն գրեթե չկար, քանի որ ջոկա-

³ ԲՄՊ (боевая машина пехоты – հետևակի մարտական մեքենա) – ռուսերեն հապավում է:

տը հայտնվել էր շրջափակման մեջ: Վիճակն անհուսալի էր, բայց հանկարծ Ջիվանը հրաշքով մի անցք է նկատել, որտեղով էլ ջոկատը բարեհաջող դուրս է եկել:

Էրքեջը թողնելուց հետո Ջիվանն ու Դավիթը պետք է դիրքավորվեին ճակատի տարբեր ուղղություններում: Հրաժեշտ տալիս Ջիվանը հարցրել է Դավիթին.

– *Տեսնես իրար էլի կհանդիպե՞մք:*

– *Ինչ-որ մի ժամանակ, ոնց էլ լինի, կտեսնվենք,*– պատասխանել է Դավիթը:

Դավիթն ու Ջիվանը գրկախառնվել են...

Այդ մարտից մի քանի օր անց Ջիվան Աբրահամյանը հերոսաբար զոհվել է Վերինշենի պաշտպանության ժամանակ...

«Դու Դավիթն ես, թե՞ Դավիթ Բեկը...»

Ջիվանը, որ հիացած էր Դավիթի վճռական ու խելացի գործողություններով, այդ անչափ դժվար մարտից հետո կատակով ասում է նրան.

– *Այդպես էլ չհասկացա՝ դու Դավիթն ես, թե՞ Դավիթ Բեկը:*

Այո՛, Ջիվանը, տեսել է, թե ինչի է ընդունակ Դավիթը: Դա տեսնում էին նաև նրա բոլոր զինակիցները: Դավիթը չէր խնայում իր կյանքը, սակայն, երբ վտանգ էր սպառնում իր մարտական ընկերներին, նա ամուսն էր հնարավոր ամեն ինչ՝ նրանց անվտանգությունն ապահովելու համար: Նա միշտ պատրաստ էր իր կյանքը տալու ընկերոջ համար. աստվածաշնչյան՝ Հովհաննոս այս պատվիրանը նա լավ էր յուրացրել.

– *Դավիթն արյուակարգ ընկեր էր,*– ասում է Մանվել Սերոբյանը: – *Նա հեղափոխական ջոկարից էր, և ինչքան էլ բարդ լինեին հանձնարարված գործողությունը, միևնույն է, նա կարողանում էր այն իրականացնել: Նրա հեղաշարս ապահով էր, ընկերները*

վարահ էին, որ Դավիթը երբեք թիկունք չի դարձնի, մենակ չի թողնի: Նա միշտ առանց խուճապի ու հանգիստ կողմնորոշվում էր անգամ ամենածայրահեղ իրավիճակում: Եվ նրա այդ հանգստությունը, հավասարակշռվածությունը փոխանցվում էր մեզ:

– Դեի կողքին մեզ միշտ վարահ էինք զգում,– շարունակում են զինակիցները,– մենք նրան շատ էինք հարգում, հասկանում էինք, որ Դեն ի ծնե առաջնորդ է, որ նա միշտ և ամեն ինչում առաջինն է, զգալիորեն գերազանցում է բոլորին և՛ կրթությամբ, և՛ փորձառությամբ, և՛ ինտելեկտով: Միևնույն ժամանակ նա պարզ էր ու հասարակ, երբեք չէր ընդգծում իր առավելությունը, չէր պարծենում իր սխրանքներով: Նա կայացած մարդ էր և կարիք չունեի իր ես-ը հաստատելու: Դժվար էր հավատալ, որ Դենը շարերիս հասակակից է, քանի որ և՛ արտաքուստ էր շատ ավելի մեծ երևում իր տարիքից, և՛ զարմանալիորեն հասուն էր ու իմաստուն:

– Նա յուրահատուկ կերպով էր հասուն,– ասում է Արկադի Սահակյանը,– ըստ էության, նա իմաստուն երեխա էր: Անկախ իր դաժան կյանքից, բարդ անցյալից և այն ամենից, ինչի միջով անցել էր՝ նրա մեջ շարունակում էր ապրել մանկությունը, և երբեմն Դավիթն իր վարքով հիշեցնում էր խելացի, բայց շատ չարանճի երեխայի: Ավելի շատ ապրում էր ասես պատրանքներով, իր յուրօրինակ ընկալումներով: Ըստ երևույթին՝ նրան հաջողվել էր մեր այս բարդ աշխարհում մնալ այդքան մաքուր:

Դենը վստահության և հավատարմության խորհրդանիշ էր

– Դենը չափազանց մաքուր էր ու անսահման բարի: Դավիթը հավատարմության և վստահության խորհրդանիշ էր մեր գնդում,– ասում է Տիգրան Հարությունյանը՝ Դավիթի մարտական ընկերը:–

Նա բոլորիս հիացնում էր իր մեծահոգությանը ու նվիրվածությանը: Նա պատրաստ էր միայնակ կրելու ամբողջ ծանրությունը, պատրաստ էր զոհաբերելու իրեն՝ հանուն ընկերների:

Տղաներից մեկը, որն արտաքնապես շատ փխրուն էր երևում, հիշում է շատ հուզիչ մի դեպք: Դավիթն ամբողջ գիշեր կանգնած է եղել դիտակետում: Ահավոր ցուրտ գիշերից հետո, երբ նա առավոտյան եկել է հերթափոխի, տեսել է, որ Դավիթը ցրտից դուրում է:

– *Գնա՛, քեյ խմի՛ր, տաքացի՛ր,*– ասել է նա Դավիթին:

Դավիթը գնացել է, բայց, կես ժամ չանցած, նորից վերադարձել է ու ասել.

– *Չկարողացա քեզ մենակ թողնել, քեզ համար դժվար կլինի:*

Այսպիսին էր Դավիթը՝ չափազանց բարի և նվիրված: Դրա հետ մեկտեղ Դևն օժտված էր ձգողական մեծ ուժով, և այդ ուժն ասես զգացվում է նաև շատ տարիներ անց:

– *Դա իսկապես այդպես է,*– ասում է Սերգեյ Գրիգորյանը,– *և նրանից միշտ դրական ազդեցիկներ էինք ստանում: Նա ասես հզոր լիցքեր արձակող իսկա լիներ, նույնիսկ մարտերի կարճատև՝ 10–15-րոպեանոց դադարի ընթացքում շփվելով նրա հետ՝ մենք ասես լիցքավորվում էինք:*

Տղաները հիշում են, թե ինչպես էր Դավիթը կարողանում իր շուրջն ստեղծել ոգեղեն մթնոլորտ: Նրան միշտ լսում էին կլանված, քանի որ խոսում էր բավական հետաքրքիր և շատ տարբեր թեմաներով:

– *Չափազանց տպավորիչ և ազդեցիկ խոսելու ոճ ուներ, ճշգրիտ արտահայտություններ, հղկված, իմաստավոր,*– ասում է Արկադի Սահակյանը:

Տղաներից շատերի հիշողության մեջ մնացել է Դավիթի սովորությունը. զրուցելիս երբեմն խոսքն անսպասելիորեն ընդհատում էր և բավական երկար լռում: Նա մի տեսակ ամփոփվում էր իր մեջ, մեկուսանում, իսկ հետո նորից շարունակում ասելիքը:

Դավիթը միշտ կարողանում էր շփման եզրեր գտնել մարդկանց հետ: Նա ընդունում էր մարդկանց այնպիսին, ինչպիսին

նրանք էին՝ իրենց թուլություններով ու թերություններով:

– *Դավիթը հիանալի զլուխ էր հանում մարդկանցից,*– ասում է Սերգեյ Հայրապետյանը,– *նա շատ էր գնահատում ազնիվ ու քարոյական մարդկանց, շատ թերություններ էր ընդունում, սակայն տանել չէր կարողանում զլուխ գովողներին, նենգ ու վախկոտ մարդկանց, առավել ևս նրանց, ովքեր ունակ էին դավաճանության (ցավոք, այդպիսիք կային Դավիթի շրջապատում և տարիներ անց նենգորեն դավաճանեցին նրան):*

Իհարկե, ինքն էլ գուրկ չէր թուլություններից, ինչն էլ ավելի գրավիչ էր դարձնում նրան: Նա լուռ ինտելեկտուալ չէր, հաճախ կարող էր անկանխատեսելի արարքներ գործել, կարող էր և բոցավառվել, բռնկվել: Նա ոչ մի կերպ չէր կարողանում ձեռքագատվել ծխելու սովորությունից, իսկ առիթի դեպքում սիրում էր ընկերների հետ ոգելից խմիչք օգտագործել: Այդ առումով նույնիսկ նրանցից մեկին «կոլեգա» էր անվանում:

Տիգրան Հարությունյանը պատմում է.

– *Երբ տղերքով սեղան էինք նստում, Դեն այնպես էր անում, որ բոլորի ուշադրությունն իր վրա էր կենդրոնանում: Եվ դա հասկանալի էր, քանի որ Դեն և՛ հեղափոխության գրուցակից էր, և՛ շատ սրամիտ: Նրա կատակներից միշտ բոլորի տրամադրությունը քարշրանում էր:*

«Մեծն Տիգրան» աշխարհագորային գնդի տղաների համար անմոռանալի է Դավիթի



«Մեծն Տիգրան» աշխարհապորային գնդի մարտիկները

վառ կերպարը, անմոռանալի են նաև բոլոր այն հրաշալի տղաների անունները, որոնք զոհվեցին հերոսաբար՝ Մարտին Վարդանյան, Ռաֆիկ Սիմոնյան, Համլետ Մինասյան և ուրիշներ:

1993 թվականի ապրիլին Արտակ Օհանյանը՝ Գուսանը (այդպես էին անվանում իր հիանալի երգերի համար), նրանց նվիրված քանաստեղծություն է գրել՝ «Տիգրան Մեծ» վերնագրով, որտեղ ասում է.

*Եթե կրում ենք «Տիգրան Մեծ» անուն,
Պետք է մեր ուժը ցույց տանք թշնամուն...
Մեր գործն արդար է, հայրենանվեր,
Դավիթ ենք կորցրել և ժորա ընկեր,
Եվ մեկ տարվա մեջ երկու Տիգրաններ,
Էլ չեմ ասում Սոս, Հարութ և Զիվան,
Նորիկին, Մելսին կամ Փոքր Զոհին,
Կամոյին, Աշոտին կամ էլ Մերուժին,
Որոնք անելու չատ բան ունեին;
Եթե կրում ենք «Տիգրան Մեծ» անուն,
Պետք է միշտ փառքով վերադառնանք տուն...*

Յավոք, նույն թվականի սեպտեմբերին զոհվեց նաև Գուսանը՝ գերազանց մարտիկը, որը մասնակցել էր Աֆղանական պատերազմին և ողջ գնդի սիրելին էր...

«Այդ ես եմ՝ քո բարի Դեր»

Այս անկրկնելի երիտասարդներին ճանաչել է նաև տիկին Էմման՝ Դավիթի մայրը... Կռիվների դադարի ժամանակ Դավիթը երբեմն գալիս էր տուն: Տղաները հիշում են՝ ինչպես էր Դավիթը սիրում ուրախ ու հումորով ազդարարել իր գալուստը: Դռան զանգը սեղմելուց հետո նա դիտանցքից հեռանում էր, որպեսզի մայրը հարցնի՝ ո՞վ է: Իսկ երբ տիկին Էմման հարցնում էր, Դավիթը ձայնը փոխում և պատասխանում էր իր սիրելի մուլտֆիլմի հերոսի խոսքերով.

– *Այդ ես եմ՝ քո բարի Դեր:*

Տիկին Էմման, որդու գալստյամբ երջանկացած, ամեն անգամ դողդողացող ձեռքերով բացել է դուռն ու տեսել իր անգին զավակին, իր լույս ու ճրագին:

Դավիթը միշտ ծաղիկներ էր բերում մոր համար:

Ծաղիկները Դավիթի թուլությունն էին. քիչ է ասել՝ նա սիրում էր բնության այդ հրաշագործությունը. նա հիանում էր և՛ դաշտա-



յին, և՛ դեկորատիվ ծաղիկներով: Դրանց բույրերի և գեղեցկության բազմազանությունն ասես արտացոլում էր նրա ներաշխարհի հարուստ ներկայակեր:

Հիրավի, Դավիթի մեջ ամեն ինչ զարմանալիորեն համատեղվում էր: Հաղթանդամ, ուժեղ, անկոտրում հերոս և փխրուն

հոգի՝ իր բազում նրբերանգներով ու ելևէջներով: Նա բանաստեղծական խառնվածքի տեր հերոս էր: Թեև թշնամու համար ահեղ ու սարսափազդու Դևն էր, իրականում անասելի նրբագաց էր, հասկանում էր ուրիշի ցավը, կարեկից էր ու օգնող: Նրա մեջ համատեղված էին ֆիզիկականի և հոգևորի ամենավեհ ու բարձր հատկանիշները: «Էսթետը» պատմվածքում Դավիթն այսպես է բնութագրել ինքն իրեն. «Նա առանձնանում էր իր սպորտային կազմվածքով, թիկնեղ էր և առնական: Բայց ինչ-որ փեղ՝ հոգու խորքում, շա՛ր խորքում, քնարերգակ էր»:

Ամեն անգամ Դավիթի վերադարձից հետո տիկին Էմմային թվում էր, թե որդին նորից է ծնվել: Դավիթի ներկայությունը թև էր տալիս նրան, ուրախությունից գլուխը կորցրած մայրն անընդհատ պտտվում էր որդու շուրջը, որի ներկայությունը թույլ էր տալիս ազատ շունչ քաշել և կտրվել ծանր մտքերից: Իսկ երբ մենակ էր մնում, խելահեղորեն անհանգստանում էր որդու համար, աղոթում ու կրկին սպասում...

«Վարազդատի» ծնունդը

Մի անգամ կռվի դադարից հետո տանն անցկացրած կարճ ժամանակում Դավիթը հասցրեց նույնիսկ ստեղծագործել: Ամեն ինչ այնքան անսպասելի էր: Երեկոյան նրան այցելեց իր ընկերը՝ Լևոն Ղազարյանը, որն անգլիական «Թայմս» թերթի հայտարարություններից տեղեկացել էր, որ համակարգչային խաղի լավագույն սցենարի մրցույթ է հայտարարվել: Լևոնը համոզված էր, որ Դավիթը կկարողանա այդպիսի սցենար գրել, դիմեց նրան այդ առաջարկով, սակայն Դավիթը վաղ առավոտյան պետք է մեկներ ճակատ: Լևոնն այնքան համոզվիչ էր պնդում, որ Դավիթը, այնուամենայնիվ, որոշեց փորձել: Նա ամբողջ գիշեր գրեց, և արդյունքը «Վարազդատ արքա» համակարգչային խաղի սցենարն էր:

Դավիթը սցենարը թողեց և առավոտյան մեկնեց ճակատ, իսկ հետագայում այս սցենարի հիման վրա ստեղծված ծրագիրը Անգլիայում տեղի ունեցած միջազգային մրցույթում արժանացավ հեղինակավոր մրցանակի՝ դրամական խոշոր պարգևով (ցավոք, Դավիթի զոհվելուց հետո): Այսպես Դավիթը դարձյալ ապացուցեց, որ իր համար անհնարին ոչինչ չկա: Նա միշտ հաղթող էր և՛ մարտում, և՛ մտավոր աշխատանքում: Հիրավի, Դավիթը եզակի էր ու անկրկնելի:

Սովորաբար Դավիթը երկար չէր վայելում խաղաղ կյանքը իր հարմարավետ բնակարանում՝ հոգատար մոր կողքին: Մոր ու որդու հանդիպումների երջանկությանը կարճ ժամանակ անց փոխարինում էին հրաժեշտի թախիծն ու տխրությունը, տիկին Էմման ճանապարհում էր Դավիթին ու նրա ընկերներին, որոնց համար նույնպես դարձել էր շատ հարազատ մարդ. ասես նրանց երկրորդ մայրը լինեի: Ամեն անգամ ճակատ մեկնելիս նրանք անպայմանորեն այցելում էին տիկին Էմմային՝ հրաժեշտ տալու և նրա մայրական օրհնությունն ստանալու: Արցունքն աչքերին տղաներին ճանապարհելիս ասում էր.

– *Ձեր ցավը տանեն, Աստված չեզ պահապան:*

Սակայն վերադառնում էին ոչ բոլորը, և կորստի ցավն ամեն անգամ ծվատում էր Էմմա մայրիկի սիրտը...

Նրանք, ովքեր վերադառնում էին, շրջապատում էին տիկին Էմմային որդիական հոգատարությամբ, հնարավոր ամեն ինչ անում, որպեսզի թեթևացնեն այս ուժեղ, բայց և միայնակ կնոջ կյանքը...

Տիկին Էմման ոչ մի անգամ չակնարկեց, որ իր որդին նրանց հետ չէ... Նա հաճախ էր կրկնում, որ գոհ ու շնորհակալ էր Դավիթին, որ նրա շնորհիվ այդքան հոյակապ մարդկանց հետ է ծանոթացել...

Դավիթը՝ նամակներում

Տիկին Էմման ծանոթացել էր նաև ռուս հայտնի լրագրող, «Նովի միր» ամսագրի հատուկ թղթակից Նիկոլայ Կալինկինի հետ: 1991 թվականի հունիսին նա եկել էր Արցախ՝ լուսաբանելու «թեժ կետում» տեղի ունեցող իրադարձությունները: Այնտեղ էլ ճակատագրի կամքով նա հանդիպել Դավիթին, որի հետ շփումը Նիկոլայի վրա անջնջելի տպավորություն է թողել: Հետագայում նա ասում էր.

– *Ես աղոյր պատկերացում ունեի, թե ինչ է տեղի ունենում Արցախում, սակայն Դավիթը կարողացավ ինձ շատ հստակ և համոզիչ ներկայացնել իսկրի էությունը: Դավիթը մարմնավորում էր հերոս ռազմիկի հավաքական կերպարը, որն անսահման հարգանք և հիացմունք էր առաջացրել: Դավիթի հետ շփվելով՝ ես հասկացա, որ իսկական ընկեր եմ գտել, չափազանց խելացի, հեղափոխիչ և բաջ ընկեր, որն ինձ հարազատ էր դարձել: Ահա թե ինչու նրա զոհվելու մասին լուրն ինձ այսպես ցնցեց:*

Տիկին Էմմային ուղղած նամակում նա գրում է. «...Եթե ես հանդիպած չլիների Դավիթին, ապա կհամարեի, որ կյանքս ապարդյուն եմ ապրել»:

* * *

Դավիթի զոհվելուց հետո տիկին Էմմային գրած բազմաթիվ նամակներից առավել տպավորիչ էր Օդրի Յուրտեոլյանի նամակը: Նա ԱՄՆ-ի քաղաքացի էր, աշխատում էր Հայ մարդու իրավունքների պաշտպանության կազմակերպությունում: Նա գրում է. «Ես գնացի Շահումյանի շրջան՝ Կրեդենություններ հավաքելու նպատակով: Այնպեղ հանդիպեցի Ձեր որդուն՝ Դավիթին: Իմ ուղևորությունն այնքան տպավորիչ էր, որ ամեն բան դրոշմվել է հիշողությանս մեջ: Քանի՜-քանի անգամ եմ վերհիշել այդ դեպքերը և այդ մարդկանց: Ու այդ առանձնահատուկ մարդկանցից մեկն էր Դավիթը: Ես, որ բնավ պատերազմի դաշտում չէի եղել, առաջին հայացքից սոսկում ապրեցի: Երբ ուղղաթիռը վայրէջք կատարեց, առաջին մարդը, որին հանդիպեցի, Դավիթն էր, իսկ հաջորդ 4 օրն անցկացրի նրա խմբի Կրեդենների հետ: Նա իսկապես արտակարգ անձնավորություն էր: Լուրջ, բարձրահասակ, վեհաշուք, իր ներկայությամբ արդեն ուշադրություն էր գրավում: Նրան Կրեանելու առաջին իսկ բույսից զգացի, որ բարեկիրք և ազնվական մի մարդ է, որին կարելի է վստահել: Մենք մնացինք Գյուլիստանում, մեզ հետ էին նաև մի քանի հույն լրագրողներ: Միասին ճաշեցինք: Հույն լրագրողները մի քանի զինվորների հետ ուրախ խումբ էին կազմել և զվարճացնում էին բոլորիս: Դավիթը մեծ մասամբ լուռ էր, սակայն միշտ ժամանակին սրամիտ մի բան էր ասում և իր պարզության մեջ էլի մնում խորհրդավոր:

Ես շատ զգաստացած ու շփոթված էի այդ պատկառելի երիտասարդի ներկայությունից: Նրա դեմքին ուրիշ մի բան կար... Երբ ինչ պարմում էր կիկոյի համար արած իր աշխատանքների մասին, նկատեցի, թե ինչպես է դեմքը լուսավորվում ներքին կայծերով, որոնք նրա ներաշխարհի շողաբշակումներն էին:

Նրան հրաժեշտ տվեցի վերստին Կրեանելու, ավելի լավ ճանաչելու անչկությամբ: Ես շատ ազդված եմ նրա ողբերգական ճակատագրի համար: Ես բաժանում եմ Ձեր կսկիծը և ցավում

եւ, որ Դավիթին այցելելու և նրան ավելի մոտիկից ճանաչելու հնարավորություն չունեցաւ:

Ուղարկում եւմ Չեզ Դավիթից մնացած մի հուշ-լուսանկար: Սա մի կարճ պահ է ժամանակի անսահմանության մեջ: Կարճ մի պահ մարդու կյանքում, և ես բախտավոր ու հպարտ եմ, որ այդ պահին հանդիպել եմ Չեր զավակին»:

Եվ, իհարկե, լեզենդ դարձած այդ տպավորիչ նկարի համար և՛ տիկին Էմման, և՛ բոլորս անչափ շնորհակալ ենք Օդրի Յուրտեոյանին:

* * *

Երախտապարտ ենք նաև բուլղար հեռուստաընկերության Յվետանա Պասկալեային, որի տեսախցիկը պահպանել է արցախյան պատերազմի բազմաթիվ դրվագներ, անմահացրել է բազմաթիվ հերոսների կերպարներ, որոնք, ցավոք, արդեն մեզ հետ չեն:

Յվետանան անմահացրել է նաև Դավիթին. անգին են այն մի քանի տպավորիչ կադրերը, որտեղ տեսնում ենք Դավիթին: Ի դեպ, Դավիթին տեսագրել է նրա կամքին հակառակ. կադրերից մեկում Դավիթը, նկատելով իրեն ուղղված տեսախցիկը, բռնուցք է ցույց տալիս...

Պատերազմի տարիներին Յվետանան ծանոթացել է բացառիկ լավ մարդկանց հետ, սակայն Դավիթին բոլորից առանձնացնում է: Դավիթի հետ հանդիպումը նրա համար ունեցել է առանձնահատուկ նշանակություն. նա ծանոթացել ու մտերմացել է նաև տիկին Էմմայի հետ և երկար տարիներ ապրել նրա տանը: Յվետանան տիկին Էմմային «Մամա Էմմա» էր ասում: Վերջինս, իրոք, մայրական վերաբերմունք էր ցուցաբերում երիտասարդ բուլղարուհու նկատմամբ, որի համար Յվետանան անչափ երախտապարտ է նրան:

«Ես ու Դավիթը գործընկերներ էինք, չէ՞ որ նա էլ կինոյի հետ առնչություն ունեւ,– հիշում է Յվետանան:– Նա ապրել է շատ բուռն սրեղծագործական կյանքով, ունեցել է շատ հայտնի ծանոթ կինոգործիչներ, գրել է սցենար, որն արժանացել է մասնա-

գերների հավանությանը: Դավիթը պարմում էր իր գրական փորձերի, այդպես էլ ֆիլմ չդարձած սցենարի մասին: Մենք մյուս վիճակում պարկերացնում էինք այդ ֆիլմը՝ ավարտված տեսքով: Այդ գրույցները մեզ շեղում էին պատերազմի դժվարություններից: Մեր գրույցների թեմաներն անսահմանափակ էին:

Դավիթը շատ կարդացած էր և չափազանց զարգացած: Ես միշտ կլանված լսում էի նրան, ինչ շատ էին հետաքրքրում նրա յուրօրինակ դարձվածքները փարբեր երևույթների մասին: Նա չափազանց խոր մտածելակերպ ուներ, խելացի և վառ անհատականություն էր: Ծանոթանալով նրա հետ, բացահայտելով նրա բացառիկ տեսակը՝ ես հասկացա, թե ինչ է նշանակում լինել առնական և խելացի հայ տղամարդ: Ինչ զարմացնում էին նրա մարդկային հատկանիշները, նրա մեծահոգությունն ու հոգաբարությունը բոլորի, այդ թվում՝ և իմ նկատմամբ:

Դավիթն ուներ թախաման՝ թելի վրա կախված արջի ճանկ և փամփուշտ, որն իրեն նվիրել էր մարտական ընկերը՝ զգուշացնելով, որ այն միշտ կրի՝ կախի պարանոցից: Դավիթն այն նվիրեց ինչ՝ ասելով:

– Թող այդ թախամանը պաշտպանի քեզ, դու կին ես, այն քեզ ավելի է անհրաժեշտ, իսկ ես կարող եմ ինքս ինչ պաշտպանել:

Իհարկե, դա իսկական տղամարդուն ու ասպետին հարիր արարք էր: Զգիտեմ՝ պատահականությո՞ւն էր, թե՞ ոչ, բայց Յվետանային դա իրոք պաշտպանեց...

«Դենն իմ ամենալավ հրամանատարն էր»

1991 թվականի սեպտեմբերին խաչվեցին Դավիթի և լեզենդար Կոմանդոսի՝ Արկադի Տեր-Թադևոսյանի (1992-ից՝ ՀՀ ՁՈՒ գեներալ-մայոր) մարտական ուղիները: Ռազմական հարուստ

փորձ ունեցող զինվորական գործիչը ծանոթացել է բազմաթիվ ճակատագրերի, սակայն Դևի կերպարը չի խամրում նրա հիշողության մեջ: Եվ տարիների հեռվից իր լավագույն հրամանատարի՝ Դավիթ Սարապյանի մասին հիշում է ամեն ինչ: Նա հանդիպել է Դավիթին Արցախյան պատերազմի ժամանակ Հաղրուքի շրջանում, երբ այնտեղ իրավիճակը շատ բարդ էր ու ողբերգական, երբ ոչնչացվում և տեղահանվում էր խաղաղ հայ բնակչությունը, երբ աղբբեջանցիները, համագործակցելով խորհրդային բանակի ստորաբաժանումների, մասնավորապես՝ «Դոն» դիվիզիայի հետ, իրականացնում էին չարաբաստիկ «Օղակ» ռազմագործողությունը. ոչնչացնում էին տասնյակ գյուղեր:

Պատմում է գեներալը.

– Հենց այդ բարդ ժամանակահատվածում իմ ջոկատը հրաման ստացավ տեղափոխվել Հաղրուք և վերջ տալ այնտեղ կատարվող անօրինություններին: Հաղրուքում հանդիպեցինք մի խումբ տեղացի և Հայաստանի Հանրապետությունից Արցախ եկած 6–7 տղաների, որոնք փորձում էին իրենց փոքրաթիվ ուժերով գոնե ինչ-որ կերպ դիմակայել հակառակորդի հանցավոր գործողություններին ու պաշտպանել բնակչությանը:

Դավիթն այս տղաների շարքում էր: Նա միանգամից աչքի ընկավ՝ բարձրահասակ էր, ներկայանալի, ուսյալ, կիրք: Ինչ վրա նրա թողած առաջին տպավորությունը ժամանակի ընթացքում ավելի ու ավելի էր ամրակայվում: Ինչ միշտ թվում էր, թե ես գործ ունեմ շատ հասուն ու կյանք տեսած մարդու հետ: Կռիվների դադարների ժամանակ նրա հետ զրուցում էի տարբեր թեմաներով: Նա ամեն ինչից գաղափար ուներ և զարմացնում էր իր գիտելիքներով, իր յուրահատուկ մտածելակերպով: Բազմաթիվ արժանիքներ ուներ, սակայն երբեք չէր մատրնանշում իր առավելություններից ոչ մեկը և բոլորի հետ լավ ընկերական հարաբերությունների մեջ էր:

Ինչ անչափ զարմացնում էր նրա ռազմական բնատուր տաղանդը: Դեռ շատ պրոֆեսիոնալ չեով էր մտրենում մարտական գործողությունների մշակման ու իրականացման հարցերին,

խորանում էր բոլոր մանրամասների մեջ, հաշվի առնում ամեն մի մանրույթ: Նա որոշում էր կայացնում միայն բոլոր փարբերակները մանրակրկիտ քննելուց-ուսումնասիրելուց հետո:

Երբ քննարկում էինք գործողությունների ընթացքը, նա միշտ բազմաթիվ անսպասելի մոտեցումներ ու զաղափարներ էր առաջադրում, որոնց, որպես կանոն, համաչայնում էի: Ըստ էության, ես այնքան էի վարսահում Դեին, որ իմ ծանրաբեռնվածության մի մասը փոխանցում էի նրան՝ իմ լավագույն հրամանատարին: Նա գերազանց հրամանատար էր, ընդունում էր անհավանական հանդուգն, բայց փայլուն որոշումներ և հենց ինքն էլ դրանք իրականացնում էր: Դեռ չափազանց խիզախ ու անվախ էր, կատարում էր ամենաբարդ խնդիրները:

Նա հիանալիորեն տիրապետում էր փարբեր գինադեսակների: Միշտ ուշադրությամբ էի հետևում, թե ինչ խնամքով ու ջանասիրությամբ էր նա մաքրում, կարգի բերում իր հրանոթը, որը նրա ձեռքերում ասես խաղալիք լիներ: Նրա զենքը միշտ լավ վիճակում էր և մարտի ժամանակ ոչ մի անգամ չի խափանվել:

Հատուկ նշանակության ջոկատը

– Դեռ դեկավարում էր հատուկ նշանակության փոքր խումբ,– շարունակում է Արկադի Տեր-Թադևոսյանը:– Տղաներն իրար հասկանում էին կես խոսքից: Դա իսկական թիմ էր, որտեղ մեկը մյուսին ասես լրացնում էր: Դավիթը կոշտ էր ու առնական, Սամվելը՝ կենսուրախ, ուժեղ, արդարամիտ, նրան «Միայնակ գայլ» էին անվանում, Խաչիկը մի քիչ փնթփնթան էր, բայց միշտ առաջ գնացող, Սերգեյը փաղանդավոր նկարիչ էր, և Դեռ, որ գնահատում էր նրա օժտվածությունը, միշտ աշխատում էր վերջինիս հեռու պահել վրանգավոր իրավիճակներից:

Շարժում և հուսալի այդ խմբին ես պահում էի ամենաբարդ, վրանգավոր և հույժ կարևոր հանձնարարությունները կատարելու համար: Որպես կանոն՝ նրանք համարձակորեն գնում էին կատարելու ամենավրանգավոր գործողությունները և հաճախ սրիպված էին լինում քայլել սայրի եզրով:

Ճշգրիտ գործող ջոկատը հաջողությամբ ներթափանցում էր ադրբեջանական դիրքեր և հանկարծակի ու հզոր հարված հասցնում թշնամուն: Տղաներին հաջողվում էր խուճապի մայրնել նրանց՝ մեծ ուժերով հարձակման փրկավորություն սրեղծելով: Ադրբեջանցիների ռադիոկապը զաղրնալսելու ժամանակ հաճախ պարզում էինք, որ նրանց վրա հարձակվել է իբր 100–200–, երբեմն էլ՝ 1000-հոգանոց ջոկատը...

Եվ խումբը, գերազանց կատարելով իր առաջադրանքը, վերադառնում էր գոհունակությամբ: Սակայն հերթական գործողություններից մեկի ժամանակ շատ բարդ իրավիճակ սրեղծվեց: Ադրբեջանցիները մեր դեմ ուղարկել էին մոտ 100-հոգանոց ջոկատ՝ 2 ավտոբուսով: Դեռ որոշեց ինքը լուծել նրանց հարցը՝ փղաների հեղ անցնել թշնամու դիրքերն ու այնքեղ վնասագերծել ավտոբուսները: Ես սասացի, որ դա շատ դժվար կլինի, իսկ նա համառեց՝ եթե չանեն, կսրեղծվի ավելի բարդ իրավիճակ: Ասաց, որ հարձակումը լավագույն պաշտպանությունն է:

Համոզելով ինձ՝ Դեն իր ջոկատով գնաց, և Խրմնջուղ գյուղի մերձակայքից կրակ բացեցին ավտոբուսների ուղղությամբ: Տեսական մարտ փեղի ունեցավ: Տղաներին հաջողվեց թշնամուն մեծ վնաս հասցնել, քայց, ցավոք, մեր քաջ ռազմիկներից զոհվեցին երեքը՝ Վարդանը, Մամվելը և Խաչիկը: Մերգեյը, որ վիրավորվել էր, ամեն կերպ աշխատում էր օգնել Դավիթին... Մնալով քացարձակ մենակ՝ Դավիթը 4 ժամ հրանոթը ձեռքին կռվում է ՕՄՕՆ-ականների դեմ: Թշնամու զոհերը փասնյակներով էին: Կրորուկ և ճիշտ գործողությունների արդյունքում Դավիթը կարողացավ փրկվել և կրակի գծից դուրս բերել վիրավոր ընկերոջը:

Մերգեյ Գրիգորյանը դառնությամբ է հիշում այդ մարտը՝ ասելով.

– Պատերազմն ինչ նվիրեց ընկերներ, պատերազմն էլ խլեց նրանց:

Հետագայում Սերգեյը նկարել է Դավիթի դիմանկարը՝ շատ ճշգրիտ վրձնելով Դավիթի կերպարը: Նաև Սերգեյի նկարներով է ձևավորվել «Դև. կյանքը, պայքարը, ստեղծագործությունը» գրքիս հրատարակությունը:

«Շնորհակալություն՝ ծափահարությունների համար»

Թե՛ Սերգեյը, թե՛ Կոմանդոսը, թե՛ բոլոր զինակիցները հիշում են նաև Դավիթի կատակները, անկրկնելի հումորը, նրա սրամտությունները:

Դավիթի հումորի մասին իր «Շնորհակալություն ծափահարությունների համար» ռուսերեն պատմվածքում Լևոն Աղաջանովը գրել է. «Դևը շատ էր սիրում ռադիոկապով ձեռք առնել ադրբեջանցիներին: Նա կարողանում էր հրաշալիորեն նմանակել մարդկանց ձայները: Մի անգամ հերթական փոխհրաշգույթյան ժամանակ նա որսում է բշնամու ռադիոկապի հաճախությունը և, նմանակելով ԽՍՀՄ առաջին ու վերջին նախագահ Միխայիլ Գորբաչովին, ասում է.

– Ադրբեջանցի թանկագին ընկերներ, ես ու Ռաիսա Մաքսիմովնան այսրեղ խորհրդակցեցիք և որոշեցինք ձեզ շնորհավորել զարման գիշերահավասարի օրվա առիթով:

Առաջին բուպեներին ադրբեջանցիները՝ ապշահար, լռում են. նրանք չեն հասկանում, թե ինչ գործ ունեն ԽՍՀՄ նախագահի հայերի դիրքերում՝ իր կնոջ հետ: Բայց քիչ անց նույն ռադիոկապով ադրբեջանցի հրամանատարն ասում է սրանց.

– Դա Գորբաչովը չէ, դա անիծյալ Դևն է՝ մեր ներվերի հետք է խաղում...

Ադրբեջանցիներն ուժեղ կրակահերթեր են սկսում՝ վատնելով իրենց ռազմամթերքի զգալի մասը, իսկ մերոնք թաքնվում են բլինդաժում:

Կես ժամ տևած անիմաստ հրաձգությունից հետո, երբ լռություն է տիրում, Դևը բարձրանում է բրուստների⁴ վրա և ռադիոկապով սփռում Գորբաչովի՝ տարածված արտահայտությունը.

– *Շնորհակալություն՝ ծափահարությունների համար:*

Ահեղ Դևը

Այդպես Դևը կարողանում էր տարբեր միջոցներով վնասել թշնամուն: Եվ պատահական չէ, որ նրան «Անիծյալ Դև» կոչեցին: Ադրբեջանցիները շատ լավ էին ճանաչում իրենց ահաբեկող այդ սարսափազդու մականունով հայ զինվորին: Դրանք լավ գիտեին, որ եթե Դևը մասնակցում է մարտին, ապա իրենց ջախջախիչ պարտություն է սպասում: Այ թե ինչու էին նրան «Ահեղ Դև» անվանում: Եվ նա իրոք ահեղ կռվողի համբավ ուներ: Դավիթն ադրբեջանցիների դեմ այնպիսի դիվային ուժով ու հզորությամբ էր մարտնչում, որ նրանք, սարսափահար, միշտ խուճապի մեջ էին ընկնում ու փախուստի դիմում: Նրա մեջ ասես կուտակվել էին դարավոր այն ցավն ու տառապանքը, որ բարբարոս ցեղերը պատճառել են իր ազգին:

Դևի հզորությունը թշնամին զգաց ու տեսավ Տոդ գյուղի ազատագրման ժամանակ: Տոդի ազատագրումը Դավիթի սխրանքների գագաթնակետն էր, նրա արիության գլուխգործոցը:

⁴ Բրուստներ – հողաշեն պատվար

Տողի ազատագրումը

Տողն Արցախի Հաղորդի շրջանի հիմնավոր գյուղերից է, որը հայտնի է իր հարուստ պատմությամբ ու ճարտարապետական կոթողներով: Տողն Արցախի խառը բնակչությամբ եզակի բնակավայրերից էր, որտեղ ապրել են հայեր և ադրբեջանցիներ: Պատերազմի ժամանակ գյուղը բռնազավթել էին խորհրդային զիվորականներն ու ադրբեջանցի ՕՍՕՆ-ականները: Այն բաժանված էր երկու մասի՝ ադրբեջանական, որը պաշտպանում էին 60 ռուս զինվորներ ու 30 ադրբեջանցի ՕՍՕՆ-ականներ, և հայկական, որը պաշտպանում էր մեկ միլիցիոներ, որն ուներ ընդամենը մեկ ատրճանակ:

1991 թվականի հոկտեմբերի 17-ին Տողում կատարվել է մեծ ողբերգություն՝ ադրբեջանցի ՕՍՕՆ-ականները ներխուժել են Դանիելյանների տուն և զնդակահարել ընտանիքի 5 անդամներին:

– *Վիճակը ծայրահեղ ծանր էր,*– պատմում է Արկաղի Տեր-Թադևոսյանը,– *գյուղի հայ բնակչությանը մեծ վրանգ էր սպառնում: Այդ իրավիճակով անհանգստացած՝ Հաղորդ եկան Արթուր Մկրտչյանը⁵, Ժաննա Գալստյանը և Վալերի Բալայանը⁶: Նրանք կարծում էին, որ պետք է անհապաղ անցնել կրթուկ գործողությունների և առավելագույնը մեկ շաբաթվա ընթացքում ազատագրել ռազմավարական մեծ նշանակություն ունեցող գյուղն ու փրկել հայ բնակչությանը:*

Ես համաձայն չէի այդ կարճ ժամկետի հետ և համարում էի, որ անհրաժեշտ է ավելի հիմնովին ու մանրակրկիտ պարբերական աշխատանքներ անել: Դա մեր առաջին մարտական գործողությունն էր լինելու, որի արդյունքը հոգեբանական չափազանց մեծ ազդեցություն կարող էր ունենալ մարտիկների վրա: Անհրաժեշտ էր այն իրականացնել հաջողությամբ և

⁵ Արթուր Մկրտչյան – ԼՂՀ Գերագույն խորհրդի առաջին նախագահը (1992-ի հունվարից մինչև սպանվելը՝ նույն թվականի ապրիլի 14-ը)

⁶ Ժաննա Գալստյան, Վալերի Բալայան – Արցախյան շարժման ակտիվիստներ

առանց կորուստների: Ես աշխատում էի չգէզել այդ ժամանակը, սակայն տղաները լցված էին վրեժով և պահանջում էին վայրկյան առաջ սկսել ռազմագործողությունը:

Նրանցից ամենասկիզբը Դավիթն էր, և դա հասկանալի էր: Չէ՞ որ Տոդը նրա մոր հարազատ գյուղն էր. այնտեղ էր նրա պապի տունը: Դավիթը լավ ծանոթ էր գյուղի մարդկանց ու նրա պատմությանը, քանի որ ամառները՝ դպրոցական արձակուրդներին, հաճախ էր գալիս Տոդ:

Դեր մշակել էր ռազմական իր պլանը, որը շատ վրանգավոր տարբերակ էր: Ես երբեք չէի համաձայնի դրան, եթե համոզված չլիների, որ նա ամեն ինչ կարող է:

Մենք սկսեցինք նախապատրաստվել գործողությանը: Անհրաժեշտ էր հետախուզել հակառակորդի դիրքերը: Ես մտադիր էի երեք հոգու ուղարկել հետախուզության, սակայն Դավիթն ասաց, որ մեծ խմբի նկատմամբ հավանականությունը մեծ է, և լավ կլինի, որ ինքը մենակ գնա:

Ես դժվարությամբ համաձայնեցի: Մեկօրյա հետախուզումից հետո նա վերադարձավ, զեկուցեց արդյունքները, և մենք երկուսով երկար քննարկում էինք մեր հետագա անելիքները: Դեի դիվաշին առաջարկը շատ ռիսկային էր, բայց իրագործելի: Անհրաժեշտ էր անհապաղ սկսել գործողությունները, քանի որ ադրբեջանցիները դեռ կենտրոնացնում էին իրենց ուժերը, իսկ հարձակումն ուշացնելը կարող էր ճակատագրական լինել մեզ համար:

Գյուղի ազատագրման ռազմագործողությունն սկսվել է հոկտեմբերի 30-ին: Խումբը բաժանվել է երեք մասի, և մարտական ջոկատներից ամեն մեկը շարժվել է նախանշված ուղղությամբ: Նրանք գործելու էին առանձին-առանձին, բայց՝ միաժամանակ: Իսկ Դավիթը՝ մեն-մենակ: Աշնանային մութ գիշեր էր: Դավիթը նոնակները լցրել է զինվորական պայուսակն ու սուզվել գիշերային խավարում:

Հասնելով թշնամու առաջին ժամապահին՝ Դավիթը դաշույնի մի հարվածով ակնթաթթորեն վերացնում է նրան: Նա հուշիկ քայլերով մոտենում և անաղմուկ վերացնում է նաև երկրորդ ժա-

մապահին, որի տեղը նշմարել էր հեռվից դիտարկման ժամանակ: Հետո շարժվում է դեպի պապի տունը: Կարմիր կոմիտեով, բարձր տանիքով այդ տունը գյուղի ամենամեծ շինությունն էր, որը, փաստորեն, աղբբեջանցիները դարձրել էին զորակայան, իսկ կտուրին ամրացրել աղբբեջանական դրոշ...

Ամբողջ գյուղում միայն այդ տան լույսերն էին վառվում. սպայակազմն աղմկոտ խնջույք էր կազմակերպել: Տնից աղմուկ-աղաղակի ձայներ, կերուխումի գոռգոռոցներ էին լսվում, մուղամի կլկլոցներ:

Դավիթը բարձրաձայն անունով կանչում է նրանց հրամանատարին: Վերջինս մոտենում է պատուհանին և, մթության մեջ ոչինչ չտեսնելով, հարցնում, թե ո՞վ է կանչում իրեն: Դավիթը, նրա ուղղությամբ շարժելով նոնակների կապուկը, ռուսերեն բղավում է՝ բռնի՛ր: Ոչինչ չհասկանալով՝ նա բռնում է դեպի իրեն նետված կապոցը... Տեղի է ունենում ուժեղ պայթյուն, և բազմաթիվ ՕՍՕՆ-ականներ մնում են տան փլատակներում...

Դրանից հետո Դավիթը պայթեցնում է ևս մեկ տուն, որն աղբբեջանցի թուրքը կառուցել էր մեր նախնիների գերեզմանաքարերից... Փոշու ամպ է բարձրանում: Պայթյունը հարձակման ազդանշան ընդունելով՝ մեր տղաները գյուղի տարբեր ծայրերից կրակահերթեր են արձակում: Սկսվում է բաժանված ջոկատների միաժամանակյա գրոհը՝ բազմաքանակ զորքի հարձակման տպավորություն ստեղծելով և աներևակայելի խուճապի ու շփոթի մատնելով թշնամուն...

Սարսափահար՝ աղբբեջանցի զինվորականներն ու բնակիչները փախչում են...

Տողն ազատագրված էր...

Գյուղացիների ուրախությունն անսահման էր, նրանք հպարտանում էին իրենց քաջ համագյուղացու սխրանքով: Այս փայլուն ռազմագործողության մասին 1999 թվականին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հրատարակած «Հայաստանի պատմությունը» ռուսերեն հիմնարար աշխատության մեջ ներ-

կայացված է մի լուսանկար, որտեղ կողք կողքի պատկերված են Արկադի Տեր-Թադևոսյանն ու Դավիթ Սարապյանը, իսկ լու-



Դավիթ Սարապյան



Արկադի Տեր-Թադևոսյան

սանկարի տակ գրված է. «1991 թվականի հոկտեմբերի 30-ին ազատագրվեց ռազմավարական մեծ նշանակություն ունեցող Տոդ գյուղը: Առանձնահատուկ խիզախությամբ աչքի ընկավ Դավիթ Սարապյանը՝ Դեր»:

Այսպիսով՝ առաջին անգամ նախկին հայկական ինքնավարության տարածքում տեղի ունեցավ մարտական գործողություն, ազատագրվեց հայկական հինավուրց բնակավայրը: Դա հայկական ինքնապաշտպանական ջոկատների առաջին մեծ հաջողությունն էր, որով Արցախյան պատերազմում սկիզբ դրվեց հայ ռազմիկի փառահեղ մարտական ուղուն: Այդ հաղթանակը մեր տղաներին դուրս բերեց ընդհատակից, և նրանք այլևս դադարեցին խորհրդային ուժային կառույցներից թաքնվելուց:

Տոդի ազատագրումն ունեցավ չափազանց մեծ հոգեբանական նշանակություն. այն նոր ուժ ու եռանդ հաղորդեց մեր մարտիկներին, իսկ թշնամին էլ հասկացավ, որ գործ ունի հզոր հակառակորդի հետ:

Տոդի ռազմագործողությունից հետո աղբբեջանցիների շարքերում մեծ խուճապ առաջացավ: Հաջորդ օրը Բաքվի լրատվամիջոցներն իրենց անփառունակ պարտությունն ու խայտառակ փախուստն արդարացնելու համար հաղորդել էին, որ Տոդում աղբբե-

ջանական գորակայանի վրա հարձակվել են 1200 հայ գրոհայիններ, տեղի է ունեցել աննախադեպ լայնածակատ հարձակում...

Տողի ազատագրումը հայկական ոգու և հայրենասիրության փայլուն հաղթանակն էր: Մերօրյա Դավիթն իրականացրեց իր առասպելական մտահղացումը՝ արդարացնելով հայկական էպոսի հայտնի հերոսի անունը կրելու իրավունքը...

«Հիմա պետք է ազատագրել Էրզրումը»

Տողի ազատագրումից հետո Դավիթը վերադառնում է տուն: Դավիթը, որը միշտ չափազանց զուսպ էր, այս անգամ, չքաքցենելով հպարտությունը, ուրախությամբ ասում է մորը.

– *Քո հարազատ գյուղն ազատագրված է, հիմա պետք է ազատագրել հայրիկի հարազատ քաղաքը՝ Էրզրումը:*

Մայրը գրկում է նրան և, համբուրելով ճակատը, ասում.

– *Դու իսկական Դանիել քեկի և Պողոս քեկի թոռն ես:*

Դավիթը Երևան էր վերադարձել՝ Վազգեն Սարգսյանի⁷ հետ Լեհաստան մեկնելու համար, որտեղ պետք է մասնակցեր ազգային-ազատագրական պայքարի թեմայով միջազգային համաժողովի: Սակայն անբարենպաստ եղանակի պատճառով թռիչքը հետաձգվում է:

Իհարկե, պատահական չէ, որ Վազգեն Սարգսյանը հենց նրան էր առաջարկել մասնակցել այդ համաժողովին: Վերջինս, ինչպես նաև Դեփն ճանաչող բազմաթիվ հայտնի գործիչներ, չափազանց բարձր էին գնահատում նրան:

Ի դեպ, օդանավակայան գնալուց առաջ հեռախոսով գրուցել են Դավիթի հետ: Խոսում էինք Լեհաստանում հրավիրված համաժողովի ու նրա վերադարձի մասին:

⁷ Վազգեն Սարգսյան, ՀՀ պաշտպանության նախարար 1991–1992 և 1995–1999 թթ.

– Շուրով կհանդիպենք,– ասաց նա:

Ավա՜ղ, այդ հանդիպումն այլևս չկայացավ...

Շատերն էին համոզում Դավիթին այլևս չգնալ պատերազմի դաշտ, խնայել մորը և մնալ տանը, զբաղվել ստեղծագործական աշխատանքով, սակայն Դավիթն անկոտրում էր: Նա ասում էր.

– *Ես ո՞նց կարող եմ այսպեղ մնալ՝ իմանալով, թե ինչ է կատարվում Ղարաբաղում: Եթե տեսնեք՝ ինչ տղաներ են զոհվում, իսկ իմ արյունը նրանց արյունից լավը չէ:*

Հետո ավելացնում էր.

– *Իսկ ի՞նչ եմ ասելու իմ երեխաներին հեղափոխության, երբ հարցնեն, թե ի՞նչ էի անում պատերազմի ժամանակ...*

Իհարկե, երբ Դավիթն ինչ-որ բան էր որոշում, նրան անհնար էր համոզել հակառակը: Եվ, որպես օրենք, նա երբեք որևէ գործ կիսատ չէր թողնում, այն հասցնում էր ավարտին:

Դավիթը նորից վերադարձավ Ղարաբաղ: Վերադարձավ վերջին անգամ...

Նրանց վերջին քայլերը ձախրանք էր

Հավատարիմ իր սկզբունքին՝ նա գնաց այնտեղ, որտեղ այդ պահին կացությունն ավելի ծանր էր... Գնաց Շահումյան՝ համարելով, որ Հաղորթում իրավիճակն արդեն կարգավորվել է:

Շահումյանի շրջանի բարձրանիստ Թողան գյուղից լավ տեսանելի էին շրջակայքի հայկական գյուղերը. նրանք ասես թշնամու ափի մեջ էին: Թողանը լավ հեռակետ էր դարձել աղբբեջանցիների համար: Այդ գյուղի մերձակա բարձունքից անխնա գնդակոծում էին հայկական Բուզլուխ, Մանաշիղ և Էրբեջ գյուղերը:

Հարկավոր էր ամեն կերպ վերացնել մահասփյուռ այդ կրակակետը, սակայն դա չափազանց դժվար գործ էր, քանի որ

Թողանք, ըստ էության, դարձել էր կրկնակի ամրություններով շրջապատված անառիկ ամրոց:

«Մեծն Տիգրան» աշխարհագրային գնդի մարտիկներին հանձնարարվում է գրավել այդ ամրոցը: Դավիթը պատրաստակամություն է հայտնում կատարել այդ բարդ առաջադրանքը և հավաքում է 30-հոգանոց ջոկատ:

Աղբբեջանցիների հենակետը՝ «Մզկիթը», Բուզլուխ գետի ձախ ափին էր՝ ժայռի ծայրին: Դեկտեմբերի 10-ի առավոտյան Դավիթի առաջնորդությամբ ջոկատն սկսում է վերելքը՝ Բուզլուխի գետահովտից: Ճանապարհը երկար էր ու վտանգավոր: Ջոկատը, զգուշորեն բարձրանալով ոլորապտույտ ճանապարհով, հասնում է «Մզկիթին» և հանկարծակի գրոհով անակնկալի բերում աղբբեջանցիներին, որոնք, համարյա չդիմադրելով, փախուստի են դիմում՝ թողնելով դիրքերը...

Առաջադրանքը կատարված էր, այդ չարաքաստիկ կրակակետը չեզոքացված էր: Աղբբեջանցիների հիմնական ուժերը, որ Թողանում էին, խուճապի են մատնվում: Իմանալով այդ մասին՝ Դավիթը որոշում է ներխուժել գյուղ և այնտեղ լիովին ջախջախել թշնամուն:

Թափանցելով գյուղ՝ ջոկատը հանդուգն գրոհ է ձեռնարկում՝ դուրս գալով մեծաթիվ, մինչև ատամները զինված ՕՄՕՆ-ականների դեմ: Մեր տղաներից յուրաքանչյուրը կռվում է տասնապատիկ ուժով, անձնագոհաբար ու անզիջում: Տեսական մարտից հետո, չկարողանալով այլևս դիմադրել, թշնամին փախուստի է դիմում: Տղաների ուրախությանը չափ ու սահման չկար: Նրանք հասել էին իրենց նպատակին՝ գրավել էին գյուղը, վերացրել կրակակետերը. հայկական գյուղերն այլևս չէին ցնցվի թշնամու ռումբերից ու արկերից...

Ավա՛ղ, այդ ուրախությունն ու հրճվանքը երկար չտևեցին: Հանկարծ հրանոթի կրակահերթ է լավում, դավադիր կրակոցներ, որոնք ճակատագրական էին Դավիթի համար: Կռվի դաշտը լքած աղբբեջանցի թուրքը, որ ծպտվել, դարանակալել էր, կրակում է թաքստոցից... Թուրքավարի... Վախեցել էր ճակատ ճա-

կատի կռվելուց...

Թողանի մարտը վերջինն էր Դավիթի ու նրա ևս 4 խիզախ զինակիցների՝ Համլետ Սինասյանի, Կամո Հովհաննիսյանի, Մերուժան Սարգսյանի ու Արայիկ Գյուլեցյանի համար...

«Ռանչպարների կանչը» վեպում Խաչիկ Դաշտենցը գրել է. *«Ֆիդային գերեզման չունի: Նրա ամենամեծ բաղձանքը կռվի մեջ մեռնելն է՝ ազատության երզը շուքերին և գնդակը ճակատին»*: Այս խոսքերը կարծես Դավիթի ու նրա ընկերների համար են գրվել: Նրանց վերջին քայլերքը ճախրանք էր, նրանք հերոսաբար ընկան բարձունքում, Գարեգին Նժդեհի արտահայտությամբ՝ հեզնելով վտանգն ու մահը...

Թեև չհաջողվեց կրկին վերատիրել Շահումյանին, սակայն նրանց և մեր մյուս քաջ մարտիկների անձնուրաց պայքարի շնորհիվ փրկվեցին հազարավոր կյանքեր՝ մեծ վնաս հասցնելով թշնամուն:

Հրաժեշտ Եռաբլուրում

Դավիթի զոհվելու լուրը ցնցեց բոլորին: Հարյուրավոր մարդիկ էին գալիս Սարապյանների տուն, որպեսզի խոնարհվեն ու հրաժեշտ տան այդ աննկուն հայորդուն:

Կորստի ցավը մեծ էր... Կորստի ցավը բոլորինն էր... Ոչ ոք չէր ուզում համակերպվել այդ կորստի հետ... Ոչ ոք չէր կարողանում զսպել իր հոգու ցավը...

Աշխարհն ասես աղքատացավ առանց Դավիթի՝ առանց հայի այդ բացառիկ ու կատարյալ տեսակի, առանց այն հերոսի, որն ընտրել էր սուրբ ճանապարհ, կյանքի այն ճանապարհը, որն անցնում է մահվան միջով: Դավիթը գիտեր, որ արևելյան մարտարվեստում այդպիսի ճանապարհը կոչվում է «բուսիդո»: Նա խորությամբ էր ընկալում բուսիդոյի փիլիսոփայությունը և միզուցե գիտակցաբար էր ընտրել այդ ճանապարհը:

...Եռաբլուրի ճանապարհը երկրային վերջին ճանապարհն է, որով ուղեկցում ենք Արցախի ազատագրման համար իրենց կյանքը զոհաբերած մեր հերոսներին: Եվ այն ճնշող լռությունը, որ տևում է հուղարկավորության ժամանակ, մայրերի, հարազատների, ընկերների անմխիթար ցավի արտահայտությունն է... Այդ թանկ գնով է փրկվել Արցախի հողը, որը ներծծված է ազգի լավագույն որդիների արյունով: Այդ հողը սրբազան է դարձել մեզ համար: Սրբազան է նաև «Եռաբլուր» պանթեոնի հողը, որտեղ հանգչում են մեր հերոսները՝ ազգի ընտրյալ զավակները, որոնք, անցնելով կյանքի ու մահվան անտեսանելի սահմանը, հասել են անհաս բարձունքների:



Երիցս ճշմարիտ են Արցախյան պատերազմի մասնակից, «Արծիվ մահապարտներ» գումարտակի X կործանիչ դասակի մարտիկ Գագիկ Գինոսյանի խոսքերը.

– *Տղերքը չեն մտել գերեզման. նրանք մտել են իրենց վերջին՝ հավերժական խրամատները, Կողերքը մտել են իրենց դիրքերը և ընտրել իրենց պայքարի հավերժական ջեր: Տղերքը մեզ ավելի քան լուրջ դասեր են փախս՝ երբեք չդադարեցնել պայքարը և հասկանալ, որ մենք պարտավոր ենք շարունակել թեկուզ խաղաղ այն կռիվը, որը պետք*

է մեր պետականության հզորացման և կայացման գործընթացում:

...Յուրտ ու մռայլ էր 1991-ի դեկտեմբերյան այն օրը, ազգի ընտրյալին հրաժեշտ էին տալիս հարյուրավոր մարդիկ: Հնչում էր

Դավիթի այնքան սիրած սքանչելի երաժշտությունը: Արարողությանը ներկա էր նաև իր կյանքի օրոք Արցախում լեզենդ դարձած Մոնթե Մելքոնյանը: Չնայած իր գերմարդկային ծանրաբեռնվածությանը՝ նա, այնուամենայնիվ, իր հոգու պարտքը համարեց Դավիթին վերջին հրաժեշտը տալ Երևանում... Նրա աչքերում խորը թախիծ էր ծվարել: Բայց երբ խոսում էր Դավիթի աներևակայելի խիզախության մասին, նրա աչքերը հիացմունքից փայլում էին...

* * *

Այսպես ավարտվեց բացառիկ այս հայրողու երկրային ուղին: Մարդկային տեսակ, որը հազվադեպ է հանդիպում, տեսակ, որը զարմացնում է իր արժանիքներով, իր առաքինություններով, տեսակ, որն իրոք հերոսի հավաքական կերպար է հիշեցնում:

Բնությունը նրան շռայլորեն պարգևել էր վսեմագույն հատկանիշներ, օժտել վեհ գաղափարներով: Առանց հայի այդ տեսակի աշխարհը կարծես դատարկվում է, դառնում անգույն ու անբովանդակ...

Առանց հայի այդ տեսակի ազգն աղքատանում է ու տկարանում...



ՀԵՏԱԱՀՈՒ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

.....

Ների՛ր մեզ, Դավիթ...

1992 թվականին ՀՀ նախագահի հրամանագրով Դավիթ Սարապյանը հետմահու պարգևատրվել է «Արիություն» մեդալով: Դավիթը պարգևատրվել է նաև «Արցախի ազատամարտում հատուկ արժանիքների համար մայրական երախտագիտություն» մեդալով: Շատ համեստ պարզևներ՝ ռազմական փայլուն ճանապարհ անցած և բազում սխրանքներով ու փայլուն արդյունքներով աչքի ընկած հերոսի համար: Միշտ առաջնագծում, միշտ ամենաթեժ կետերում, գերմարդկային՝ դիվային խիզախությամբ կռված այսպիսի հարուստ ռազմական կենսագրություն ունեցող հերոսն առնվազն պետք է արժանանար 1-ին աստիճանի «Մարտական խաչ» շքանշանի...



Իհարկե, նա իր երիտասարդ կյանքը չի մվիրաբերել պարզևների համար...

Սակայն, չգիտես ինչու, մեր հայրենիքի ու իշխանությունների ներկայացուցիչներն առայժմ չեն կարողանում (կամ չեն ուզում) արժանիորեն գնահատել ազգի ընտրյալներին, սրբությամբ պահպանել նրանց հիշատակը, մեր պատմության մեջ նրանց թողած հետքը... Օրինակ՝ երկար ու ձիգ 27 տարի էր հարկավոր, որպեսզի Արցախյան ազատամարտի գիսաստղին՝ Լեոնիդ Ազգալոյանին, արժանացնեին գոնե Արցախի հերոսի կոչման⁸...

Հուսանք՝ դեռ կգա նաև Դավիթի ու սովերում մնացած մյուս իրական հերոսների գնահատման ժամանակը, և նրանցից յուրաքանչյուրը կկանգնի իր իսկ կերտած պատվանդանին... Դա հարկավոր է, նամանավանդ Դավիթների պարագայում, քանի որ նրանք չհասցրին ընտանիք կազմել, ժառանգներ ունենալ...

Այսպիսի դեպքերում էլ ավելի կարևոր է նման անհատների հիշատակը վառ պահելու անհրաժեշտությունը: Սակայն, ցավոք, այդ պատասխանատվությունը չի գիտակցվում, և այդ հերոսների հիշատակի լույսն աստիճանաբար մարում է...

Անշուշտ, ասվածը բոլոր հերոսներին չի վերաբերում: Տարբեր են հերոսների հետմահու ճակատագրերը: Կան նաև հերոսներ, որոնց անունը չի իջնում մարդկանց շուրթերից: Շատերի անունով անվանակոչված դպրոցներ, փողոցներ կան, իսկ Դավիթի անունով կա ընդամենը մեկ դասարան՝ Ջոն Կիրակոսյանի անվան դպրոցում, որտեղ նա սովորել է...

Դավիթ Սարալյանին անթույլատրելի մոռացության են մատնել անգամ Տոդ գյուղում, որտեղ նրան հիշեցնող ոչինչ չկա, մինչդեռ իրականում Տոդը փաստացի Դավիթի կենդանի հուշարձանն է... Եվ չափազանց ցավալի է, որ, երբ 2011 թվականին մեծ շուքով ու հանդիսավորությամբ նշվում էր Տոդի ազատագրման

⁸ Գիրքը գրեթե պատրաստ էր տպագրության, երբ ս. թ. օգոստոսի 31-ին՝ Արցախի անկախության 28-ամյակի նախօրեին, Լեոնիդ Ազգալոյանը և նրա գաղափարական ու մարտական զինակիցը՝ Վլադիմիր Բալայանը, արժանացան Արցախի հերոսի կոչման...

20-ամյակը, Դավիթի անունը հիշատակվեց շատ հպանցիկ...

Այս ամենը չափազանց վրդովեցնող է, և ակամա ուզում ես դիմել Դավիթին ու ասել նրան.

– Ների՛ր մեզ, Դավի՛թ, ների՛ր, որ ըստ արժանվույն քեզ գնահատեցին միայն քո մի խումբ մվիրյալներ, ների՛ր, որ քեզ դավաճանեցին նրանք, ում դու վարահում էիր, ների՛ր, որ այլևս չկա քո հարազատ օջախը, որը պետք է դառնար հայր ու որդի Սարապյաններիդ տուն-թանգարանը: Ների՛ր մեզ, Դավի՛թ, ների՛ր...

Թանգարան չդարձած բնակարանը

Դավիթի մահից հետո տիկին Էմման ապրեց ևս 14 տարի: Իր միակ զավակի կորուստը, իր անփարատելի վիշտը նա տանում էր այնպես, ինչպես հարիր է ազնվական կնոջը: Սփոփանք փնտրելու փոխարեն նա ինքն էր ուժ ու տոկունություն հաղորդում մարդկանց պատերազմի ծանր օրերին: Նրա հպարտ ու զուսպ պահվածքը զարմացնում և հիացնում էր բոլորին:

Տիկին Էմմայի մեծագույն երազանքն էր, որ Սարապյանների ընտանիքին պատկանող երեքսենյականոց ընդարձակ բնակարանը դառնա իր ամուսնու և որդու տուն-թանգարանը: Արդեն իսկ նրա օրոք այն ընկալվում էր որպես թանգարան, իսկ տիկին Էմման ասես այդ թանգարանի էքսկուրսավարը լիներ: Բոլոր հյուրերին (նրան միշտ բազմաթիվ մարդիկ էին այցելում) նա շանասիրաբար ծանոթացնում էր ամուսնու և միևուճար որդու կյանքի ու ստեղծագործության սրբազան մասունքներին:

Դավիթի փոքրիկ, արևոտ սենյակում, որի պատշգամբը նայում էր Մասիսներին, պատին փակցված էր հոր մվիրած երբեմնի հզոր Հայաստանի մեծ քարտեզը, սեղանին դրված էր գրամեքենան, որով նա ստեղծագործում էր, իսկ գրապահարանի դարակներից մեկում՝ մի գեղեցիկ աղջկա դիմանկար՝ գլխիվայր:

Այն նվիրել էին Դավիթին՝ Տոդ գյուղն ազատագրելուց հետո:

Այդ բնակարանում միշտ զգացվում էր հոր ու որդու շունչը, նրանց անտեսանելի ներկայությունը...

Ո՞վ կդառնա ժառանգորդը

Թե ո՞ւմ արժանի կհամարեր տիկին Էմման իրականացնելու համար իր երազանքը, ո՞ւմ կժառանգեր այդ բնակարանը, երկար ժամանակ ոչ ոք չգիտեր: Նա միշտ շրջապատված էր բազմաթիվ ազնիվ ու նվիրված մարդկանցով, որոնցից շատերը թև ու թիկունք էին իր համար թե՛ այն դժվարին տարիներին, երբ Դավիթն անազատության մեջ էր, թե՛ նրա զոհվելուց հետո: Դա թե՛ Նիկողոսյանների հրաշալի ընտանիքն էր, թե՛ Ժաննա Խալափյանը՝ ընտանիքի վաղեմի բարեկամը, որին տիկին Էմման ու Դավիթը շատ էին սիրում: Ժաննան համարյա Դավիթի տարիքին էր, և նրանք միշտ եղել են լավ ընկերներ: Դավիթը Ժաննային համարում էր շատ հարազատ. նրան միշտ վստահել է իր խոհերը, մտորումները: Հենց Ժաննային էր նա հանձնարարել, որ եթե ինքը զոհվի, իրեն հուղարկավորեն ֆրանսիական «Պրոֆեսիոնալ» կինոնկարի համար կոմպոզիտոր Էննիո Մոռիկոնեի գրած երաժշտության հնչյունների ներքո: Իհարկե, նրա ցանկությունը կատարվել է... Դեկտեմբերյան այդ տխուր օրը Եռաբլուրում հնչել է նրան այդքան հուզած գեղեցիկ մեղեդին...

Հետագայում Ժաննան միշտ տիկին Էմմայի կողքին էր: Ցավոք, երբ տիկին Էմման առաջարկել է այդ ազնիվ և նվիրված աղջկան վերջինիս անունով անվանափոխել բնակարանը, Ժաննան չի համաձայնել՝ համարելով, որ ինքն արժանի չէ նման պատվի...

Տիկին Էմմայի նկատմամբ շատ հոգատար էր նաև Դավիթի դպրոցական ընկերը՝ Տիգրան Ալավերդյանը: Նա միշտ այցելում էր սգակիր մորը, աշխատում թեթևացնել նրա հոգալը: Շատ հու-

զիչ են նամակում Դավիթի մասին նրա գրած խոսքերը. «Բառերը չեն հերիքում՝ արտահայտելու համար, թե որքան զգայուն և լավն էր Դավիթը, ինչքան խելացի էր և իմաստուն: Բայց ինչ միշտ թվում էր նաև, թե Դավիթը դեռ երեխա է: Նա միամիտ էր, մաքուր, ինչ-որ չափով ֆանտրազյոր: Նա հարյուր անգամ մաքուր էր բոլորից: Այս աշխարհում այդքան անաղարտ մնալու համար պետք է հերոս լինել: Ես նման մարդու իմ կյանքում չեմ հանդիպել և կարծում եմ, որ այդպիսի ուրիշ մեկը հազիվ թե լինի...»:

Ճակատագրական սխալը

Պատերազմի տարիներից տիկին Էմմայի շրջապատում հայտնվել են շատ նոր մարդիկ, ու նա միշտ ասում էր, որ անչափ շնորհակալ է Դավիթին, որի շնորհիվ այնքան լավ մարդկանց հետ է ծանոթացել: Տիկին Էմման միշտ ասում էր նաև, որ բնակարանի ժառանգության հարցը լուծված է լավագույն ձևով, իսկ թե ինչպե՞ս, ոչ ոք չգիտեր:

2003 թվականին նա անսպասելի որոշեց բացել գաղտնիքը. ասաց, որ մի քանի տարի առաջ բնակարանը կտակել է Յվետանա Պասկալևային: Սակայն ինչ-ինչ պատճառներով նա փոխեց իր որոշումը և որդու հիշատակը պահպանելու առաքելությունը փոխանցեց Դավիթի 6 ընկերներին՝ Տիգրան Հովհաննիսյանին, Արմեն Գրիգորյանին, Արթուր Երեմյանին, Լեոնիկ Շահնազարյանին, Դավիթին (Դավիթչոկ) ու Կարեն Գրիգորյանին: Այդ տղաները միշտ ուշադիր էին նրա նկատմամբ, հոգատար էին և վայելում էին նաև տիկին Էմմայի շրջապատի մարդկանց համակրանքը: Վստահելով նրանց այդ սուրբ գործը՝ տիկին Էմման վերացնում է կտակը և, որպես նվիրատվություն, բնակարանը ձևակերպում Դավիթի ընկերների անունով: Այդ փաստաթղթում, սակայն, նշված չէր, որ նվիրատվությունն արվել է «առանց վաճառքի իրավունքի», որը թե՛ նրա և թե՛ նրան շրջապատող մարդ-

կանց ճակատագրական սխալն էր...

Բոլորին էր թվում, թե այդ երիտասարդները, որոնք Դավիթի հետ անցել էին պատերազմի բովո՞վ, հիացել իրենց ընկերոջ սխարանքներով, ամեն ինչ կանեն՝ հավերժացնելու համար հերոսի ու նրա հոր հիշատակը...

Սակայն, ինչպես ցույց տվեց կյանքը, դա խոր մոլորություն էր: 2006 թվականին՝ տիկին Էմմայի մահից հետո, կայծակնային արագությամբ, բառացիորեն մեկ ամսվա ընթացքում նրանք բոլորից գաղտնի շատ մեծ գումարով վաճառեցին բնակարանը...

Ընկերոջ հիշատակը պահպանելու փոխարեն նրանք, գալով հանցավոր համաձայնության, ամեն ինչ արեցին այն ջնջելու, իսպառ ոչնչացնելու համար: Արժեքավոր իրերը բաժանեցին իրար մեջ, իսկ ինչը հարկավոր չէր իրենց, պարզապես ոչնչացրին: Ընտանիքի մտերիմ մարդկանց, որոնց համար Սարապյանների ընտանեկան ամեն իրն անգին մասունք էր, ոչինչ չտվեցին: Ոչինչ չտվեցին նաև դպրոցին, որի թանգարանում սակավաթիվ են Դավիթին պատկանող իրերը...

Իսկ երբ դպրոցի ղեկավարությունը դիմում է Դավիթի «ընկերներին»՝ նրա անձնական իրերը թանգարանին փոխանցելու խնդրանքով, դրանցից մեկը «վրդովված» պատասխանում է.

– *Ես ո՞նց կարամ չեզ տամ Դավիթի խանչալը, քա ի՞նչ եմ ասելու որդու:*

Ուղղակի անասելի ազահություն...

Իրականում նրանք հիմնավորապես ջնջեցին Դավիթի հետքը: Այնինչ կարող էին բնակարանի վաճառքից ստացած գումարի գոնե մի փոքր մասը ծառայեցնել հերոսի հիշատակին՝ հիմնադրամի տեսքով, խրախուսել գերազանցիկ աշակերտների կամ ծառայության ժամանակ աչքի ընկած զինվորների: Դրանով գոնե մի կերպ կպահպանեին Դավիթի հիշատակը...

Լեոնիդ Ազգալդյանի «Անկախության բանակի» զինվորներից մեկն ասել է.

– *Լեոնիդը կգլուլլեր դրանց, նամանավանդ, որ տիկին Էմմային նա էլ էր մոր պես ընդունում:*

Տեղի ունեցածն իրո՞ք զարհուրելի է, հրեշավոր: Այդ մարդիկ անցողիկ նյութական արժեքներ են ձեռք բերել ու դրա հետ մեկտեղ՝ համընդհանուր ատելություն ու նողկանք: Մի անգամ իր հեղինակային՝ «Հայո տեսակ» ռադիոհաղորդման մեջ Գագիկ Գինոսյանն ասաց.

– *Տիկին Էմմայի մահից հետո սրեղծվեց ողբերգական իրավիճակ «ընկեր» կոչեցյալների պատճառով. վիրավորական է նման «ընկերոջն» ընդհանրապես մարդ անվանելը: Այսօր Դավիթ Սարսայանից ոչինչ չի մնացել: Ցավոք, այդ տրականքները շարունակում են քայլել այս երկրի վրա և շարունակում են իրենց սպախանությունը փարածել մեր սուրբ մայր հողի վրա:*

Այս կարծիքին են բոլոր նրանք, ում համար Դավիթը և այդ բնակարանը սրբություն էին: «Ընկերներից» մեկը՝ Տիգրան Հովհաննիսյանը, մի հեռուստահաղորդման ժամանակ ասել է.

– *Գայթակությունները շար են, դե մենք էլ, ի վերջո, մարդ ենք: Որոշակի պայմաններում պատրաստ էինք զիջել... Դեր այն արգելակներից մեկն էր, որին հիշելով միշտ ասում էինք՝ սրուպ, քարացանք, մոռացանք: Ովքեր չեն մոռանա, պիտի պատասխան տան նրան...*

Ցավոք սրտի, կատարելով այդ հանցանքը՝ նրանք չքարացան. նրանք մոռացան, նրանք դավաճանեցին Դավիթին և, փաստորեն, կրկին սպանեցին նրան: Եվ հիմա չկա մի անկյուն, մի տեղ, որտեղ մարդիկ կարողանային հավաքվել, զգալ Դավիթի ներկայությունը, հիշել հերոսին: «Նրանք Դավիթին կրեցին հասարակությունից,– ցավով նշում է Արկադի Տեր-Թադևոսյանը,– շար քան ենք կորցրել, այդ օջախը պիտի մնար, պիտի ծխար և դաստիարակչական մեծ նշանակություն ունենար նոր սերնդի համար: Մարտի դաշտում մեկը մյուսին պաշտպանում է, իսկ այսրեղ փաստորեն ծախեցին»:

«Այո՛, Կոմանդոսի միտքը շարունակում է տեր Գրիգոր Մարկոսյանը,– այդ տունը պետք է մնար, և մենք բոլորս երևի մեղքի բաժին ունենք կատարվածի համար: Երևույթն ահավոր աղաղակող է, ուրքի տակ տվեցին արժանավոր գերդաստրանի սրբու-

քյուն սրբոցը»:

Այսպես վերացավ այդ նշանավոր և շատ շատերի համար թանկ հայկական օջախը: Եվ միակ հետքը, որ մնացել է այդ օջախից, հուշատախտակն է, որը տարիներ առաջ նախագծել է Էդուարդ Սարապյանի ավագ որդին՝ Դավիթի խորթ եղբայրը՝ ճարտարապետ Ալիկ Սարապյանը. տեղադրվել է այն շենքի պատին, որտեղ ժամանակին ապրել է Սարապյանների ընտանիքը: Նրա ջանքերով է զետեղվել ու հանդիսավորապես բացվել այդ հուշատախտակը:

Բնակարանի կորուստը ծանր հարված էր Դավիթի հիշատակին: Եվ նույնիսկ տարիներ անց մարդիկ չեն կարողանում համակերպվել այդ հրեշավոր արարքի հետ, չի մեղմանում ավստսանքի ու ցատումի զգացումը...

Այդպես՝ հանգամանքների բերումով դպրոցը դարձավ նրա միակ տունը...

Դպրոցի շրջանավարտ միակ հերոսը

1991 թվականին Դավիթի մահը ցնցեց դպրոցը: Այդ ժամանակ կրթօջախի մանկավարժական խորհուրդը միաձայն որոշեց դպրոցն անվանել Դավիթ Սարապյանի անվամբ (բնականաբար, հանվեց նախկին՝ Ջերժինսկու անունը):

Յավոք, դպրոցի այդ որոշումը կյանքի չկոչվեց: Անվանափոխության հանձնաժողովը և Երևանի քաղխորհուրդը որոշումը չհաստատեցին՝ պատճառաբանելով, որ դպրոցները պետք է կրեն լուսավորիչների, խոշոր գործիչների անուններ:

Այն ժամանակ դպրոցի տնօրենն էր պարոն Ֆերդինանտ Կուչկուլյանը: Նրա հետ փորձում էինք համոզել ՀՀԸ-ական վաղորդիչներին, որ հանուն մեր մեծ նպատակի իր կյանքը նվիրաբերած ժամանակակցի վառ օրինակը կարող է դաստիարակչա-



կան ավելի մեծ նշանակություն ունենալ աճող սերնդի համար:
Ավա՛ղ...

Ցավալի էր նաև այն, որ հետագա տարիների ընթացքում դպրոցում ոչինչ չէր արվում իր շրջանավարտ միակ հերոսի հիշատակի հավերժացման համար: Միայն 1996



**Նարինե
Հովհաննիսյան**

թվականին, երբ փոխվեց դպրոցի ղեկավարությունը, նոր տնօրենը՝ Նարինե Հովհաննիսյանը, ասես վառեց Դավիթի հիշատակի լույսը: Նրա նախաձեռնությամբ դպրոցի շքամուտքի մոտ՝ ամենաերևացող տեղում՝ «Հերոսի պատի» վրա, տեղադրվեցին Դավիթի մասին պատմող մեծ վահանակներ. դպրոց մտնողն արդեն անմիջապես կարող էր տեսնել հերոսին, ծանոթանալ նրա կենսագրությանը, անցած մարտական ուղուն, նկարներին և պատկերացում կազմել նրա գրական ստեղծագործությունների մասին:

Այդ անկյունն ասես մի սրբավայր էր, որտեղ տեղի էին ունենում հերոսին նվիրված միջոցառումները: Երեխաները խորին

հարգանքով ու ակնածանքով էին վերաբերվում իրենց հերոսի կյանքին ու գործին. Դավիթի լուսավոր պատկերը միշտ դպրոցի



սաների աչքի առաջ էր, և միշտ զգացվում էր նրա անտեսանելի ներկայությունը: Դրան նպաստում էր նաև այն, որ դպրոցի 2-րդ հարկում՝ ռազմագիտության կաբինետում բացված քանդաքանում, ցուցադրված էին

Դավիթին վերաբերող նյութեր, նրա անձնական իրեր...

Տարիներ ի վեր դպրոցի դասարաններից մեկը կրում է Դավիթ Սարապյանի անունը: «Դավիթցիները» երջանիկ են ու հպարտ, որ սովորում են հերոսի անվան դասարանում: Դասղեկների ջանքերով նրանք ջանասիրաբար ուսումնասիրում են հերոսի կենսագրությունը, պատանեկան հուզմունքով նշում նրա կյանքի նշանավոր օրերը: Հերոսի հիշատակը վառ պահելու համար առավել մեծ ավանդ է ներդրել հիանալի մանկավարժ Ռիմա Դանիելյանը: Ժամանակին նա սերտ կապ է հաստատել տիկին Էմմայի հետ և հաճախ է աշակերտների հետ այցելել նրան, նաև «Եռաբլուր» պանթեոն...



Ռիմա Դանիելյան

2005 թվականին դպրոցը վերանվանվեց նշանավոր պատմաբան Ջոն Կիրակոսյանի անունով, և նրա կիսանդրին տեղադրվեց դպրոցի նախասրահում, որտեղ կողք կողքի հայտնվեցին փայլուն գիտնականը, որի ուսումնասիրությունները նվիրված են հայոց նորագույն պատմությանը, և այն հերոս հայորդին, որն ինքն էր կերտում իր ժողովրդի նորօրյա պատմությունը՝ բացելով փայլուն էջեր...



Հետագայում՝ դպրոցի վերանորոգումից հետո, ռազմագիտության կաբինետը, որը կրում է Դավիթ Սարապյանի անունը, և թանգարանը տեղափոխվեցին դպրոցի շենքի խորքը, որտեղ էլ տեղադրվեցին ցուցավահանակներն ու թանգարանը:

Սա, իհարկե, բացասական ազդեցություն ունեցավ հերոսի ճանաչելիության հարցում: Այսօր ոչ բոլոր աշակերտները գիտեն Դավիթ Սարապյանի մասին: Այսօր ոչ բոլոր աշակերտները գիտեն, որ սովորում են այն դպրոցում, որտեղ սովորել է ազգի լավագույն զավակներից մեկը՝ Արցախյան գոյամարտի լեգենդար հերոս Դավիթ Սարապյանը...

Բարեբախտաբար, մտադրություն կա մորոգել վահանակներն ու վերադարձնել իրենց նախկին տեղը...

* * *

2005 թվականին դպրոցի տնօրեն Նարինե Հովհաննիսյանին փոխարինեց Անահիտ Խոսրովյանը, որը շարունակեց դպրոցում արդեն ձևավորված ավանդույթները: Ուրախալի է, որ մեծ շուրջով նշվեց Դավիթ Սարապյանի ծննդյան 50-ամյակը, որին ներկա էին հայտնի զինվորական գործիչներ, քաղաքապետարանի և պաշտպանության նախարարության բարձրաստիճան պաշտոնյաներ: Ի դեպ, նրանց հետ քննարկվեց հերոսի կիսանդրին



Անահիտ
Խոսրովյան

ստեղծելու հարցը և որոշվեց այն տեղադրել դպրոցի կամ Դավիթի հայրական տան մերձակայքում:

Տա Աստված, որ իրականացնում քե՛ս այս գաղափարը և քե՛ 1992 թվականին դպրոցում ընդունված որոշումը՝ կոթոջախն անվանել Դավիթ Սարապյանի անվամբ, իսկ պատվարժան գիտնական Ջոն Կիրակոսյանի անունով կոչել մեկ այլ դպրոց...

Կարծում եմ՝ անհմար ոչինչ չկա, քանի որ արդեն փոխվել են մոտեցումները. հասկացել են, որ մերօրյա հերոսները շատ ավելի մեծ դաստիարակչական ազդեցություն ունեն աճող սերնդի համար, և սկսել են դպրոցներն անվանել Արցախյան պատերազմի հերոսների անուններով: Չափազանց ուրախալի է, օրինակ, որ վերջերս Երևանի Դավիթաշեն թաղամասի համար 200 դպրոցը կոչվեց Արցախի հերոս Լեոնիդ Ազգալոյանի անունով:

Մնում է հուսալ, որ Դավիթ Սարապյանը նույնպես կարժանանա այդ պատվին:

«Դև. կյանքը, պայքարը, ստեղծագործությունը» գիրքը

2006 թվականին՝ Դավիթի ծննդյան 40-ամյակի առթիվ, ռուսերեն լույս տեսավ տողերիս հեղինակի «Դև. կյանքը, պայքարը, ստեղծագործությունը» գիրքը, որի շնորհիվ Դավիթի ընդհատված կյանքը կրկին բոցավառվեց արդեն հրատարակված նրա ստեղծագործություններում: Առաջին անգամ ընթերցողի առջև ամբողջ փայլով հառնեց նրա լուսավոր ու վեհ կերպարը: Գրքի առաջին մասում ներկայացված են Դավիթի կյանքի բարդ խճանկարը, այն միջավայրը, որտեղ նա ձևավորվել է, և ստեղծագործական ու ռազմական ուղին, որով նա անցել է:

Ընթերցողը, տեսնելով, թե ինչքան բան է հասցրել անել Դավիթն իր ապրած ընդամենը 26 տարվա ընթացքում, զարմացել էր ու հիացել նրա բացառիկ տեսակով, բարոյական սկզբունքներով

ու չափանիշներով, հզոր ոգով ու աներևակայելի խիզախությամբ:

Շատերն էին ասում, որ եթե չլիներ այդ գիրքը, իրենք այդպես էլ չէին իմանա Դավիթ Սարապյան երևույթի մասին, չէին իմանա, որ այդ տաղանդաշատ երիտասարդն իրենց ժամանակակիցն է եղել: Առավել ուրախալի էր, որ Դավիթի անկրկնելի կերպարն անչափ հուզել էր երիտասարդներին, նվաճել նաև նրանց սրտերը, ովքեր գուցե դեռ չէին էլ ծնվել, երբ Դավիթը մարտնչում էր Արցախում:



Նարի Ներսիսյան, Անահիտ Հարությունյան

Դավիթի ազնվագույն կերպարով տպավորվել էին հատկապես երկու հրաշալի աղջիկներ՝ Նարի Ներսիսյանն ու Անահիտ Հարությունյանը: Դավիթը նրանց համար դարձավ հարազատ ու մտերիմ: Այդ հայրենասեր, խելացի աղջիկներն անուրանալի աշխատանք են կատարել, որպեսզի հերոսի անունը հայտնի դառնա հնարավորինս շատ մարդկանց: Նրանք դիմատետրում (ֆեյսբուք) Դավիթի անունով բացել են էջ, որի շնորհիվ ի հայտ եկան հերոսի կյանքի մոտ դրվագներ: Աղջիկները նաև հրաշալի և տպավորիչ միջոցառումներ են կազմակերպել թե՛ դպրոցում, թե՛ Երևանի պետական համալսարանում: Նարին և Անահիտն իրենց ընկերների հետ հաճախ այցելում են Եռաբլուր՝ խոնարհվելու բոլոր հերոսների և, իհարկե, իրենց կուռքի՝ Դավիթ Սարապյանի շիրմի մոտ:

Սաթենիկ անունով մի երիտասարդ հայուհի գրքի տպավորությամբ գրել է հերոսին նվիրված ռուսերեն պոեմ, որտեղ կան այսպիսի տողեր.

Քաջարի մարտիկ, դու ասես ծաղրում էիր ճակատագրին...

Ճակատագիրն էլ կնոջ պես սիրում է քաջերին...

Բոլոր վտանգները նահանջում էին քո առաջ...

Դու ծնվել էիր պայքարելու և

հոսանքին հակառակ գնալու համար...

Թատերական ինստիտուտի ուսանողուհի Տաթև Կետիկյանը Դավիթին նվիրված ֆիլմ է նկարահանել՝ որպես դիպլոմային աշխատանք։ Իսկ վերջերս հայրենամուկեր մի այլ երիտասարդ հայուհի՝ գրականագետ և թարգմանչուհի Մերի Կարապետյանը, շատ բարձր գնահատելով Դավիթի կերպարն ու նրա գրական տաղանդը, որոշել է թարգմանել Դավիթի գրական գործերը։ Այդ չափազանց բարդ ու դժվար գործն արդեն ավարտին է մոտենում, և շուտով Դավիթի գործերը լույս կտեսնեն նաև հայերեն։

Հիրավի, իսկական հերոսն ինքն է հարթում իր ճանապարհը, իսկական հերոսն ի գործ է հաղթահարել ու ժամանակի մարտահրավերները և շարունակում է ապրելու ապրեցնել իր գործով։

Դավիթ Սարապյանի արձակը

«Դ. Կյանքը, պայքարը, ստեղծագործությունը» գրքում հրատարակվել է Դավիթի գրական ժառանգության մի մասը. բազմաթիվ գործեր պարզապես անհետացել են տիկին Էմմայի մահից հետո, չնայած նա դրանք խնամքով հավաքել ու պահպանել էր...

Դավիթը գրել է պատմվածքներ, հոդվածներ, էսսեներ, մամակներ, բանաստեղծություններ։

Տիկին Էմման մտերիմների համար կարդում էր Դավիթի՝ տարբեր տեղերից ուղարկած մամակները, որտեղ նա նկարագրում էր իր հոգեվիճակը, իր կյանքի ուշագրավ տարբեր դրվագներ, գրում էր իր երազանքների ու մտորումների մասին։ Ըստ էության նրա, ամեն մի մամակը փոքրիկ գեղեցիկ պատմվածք էր։

Իսկ գրքում հրատարակվել են Դավիթի միայն «փրկված» գործերը...

Վաղ շրջանում ռոմանտիկ պատանին գրել է գեղեցիկ քնարական բանաստեղծություններ, որտեղ արտացոլված է նրա բանաստեղծական գեղեցիկ ներաշխարհը, որտեղ նա խորհում



Էվելինա Մեկքումյան

է իր սխալների, հիասթափությունների և, իհարկե, սիրո մասին: Այդ տարիների նրա պատմվածքները թեթև են ու անհոգ, աչքի են ընկնում նրան բնորոշ մուրբ հումորով, մաս ինքնահեգնանքով: Սակայն հետագայում կյանքը թելադրեց Դավիթին դաժան և անհրապույր սյուժեներ: Այդ թեմաներով է նա գրել մի շարք պատմվածքներ և «300 վայրկյան» վիպակը: Վերջինս բավական լուրջ ու ծավալուն գրական գործ է, որտեղ իրադարձությունները զարգանում են սրընթաց, սյուժեն դրամատիկ է՝ հա-

րուստ հերոսների թեժացած կրքով ու ապրումներով, որոնք իրենց կիզակետին են հասնում տրված ճակատագրական 300 վայրկյանի ընթացքում:

Թե՛ սցենարի, թե՛ պատմվածքների մեծ մասի թեման զինվորական կյանքի ծանր առօրյան է, անազատության պայմաններում հայտնված մարդկանց դաժան ու դժվար ճակատագրերը: Այդ թեմաներով գրելը չափազանց բարդ է, և քչերն են հաջողում: Բայց, ահա, Դավիթը կարողացել է ստեղծել բարձր որակի ռեալիստական և հոգեբանական արձակ, զարմանալի ճշտությամբ ու վարպետությամբ նկարագրել գորշ իրականությունը, որի շնորհիվ չափազանց տեսանելի են դարձել և՛ միջավայրը, և՛ գործող անձինք: Հեղինակը մույնպես իրադարձությունների մասնակից է, նա մույնպես բարդ հոգեբանական վիճակում է և, իհարկե, ընթերցողն զգում է նրա հոգու ցավն ու տառապանքը:

Այո՛, ճակատագիրը դաժան ու անողորմ էր նրա նկատմամբ, սակայն, շնորհիվ իր ոգու զորության, նա չի ընկճվել, չի կոտրվել ծանր հարվածներից, այլ շարունակել է մնալ բարձունքում և ասես կողքից հետևել իրականությանը, վերլուծել և ներկայացնել այն իրատեսորեն ու անաչառորեն: Հատկանշական է, որ բոլոր ստեղծագործություններում ակնհայտ են հեղինակի տեսակետը, դիրքորոշումը:

Դավիթի լեզուն բավական զուսպ է ու չոր, սակայն, շնորհիվ չափազանց տպավորիչ, ազատ ու անկաշկանդ խոսքի և պարզ ոճի, նրա գործերը կարդացվում են պարզապես մեկ շնչով:

Նրա ստեղծագործություններում առանձնահատուկ տեղ է գրավում վերջին գործը՝ համակարգչային խաղի համար գրած «Վարագդատ թագավոր» սցենարը: Ինչպես արդեն ասել ենք, այդ սցենարը նա գրել է մի գիշերվա ընթացքում...

Դա Դավիթի ստեղծագործական վերելքի վերջին գիշերն էր...

Նոր շնորհալի գրիչ

Գրքի հրատարակումից հետո շատ հետաքրքիր էր, թե ինչպես կընդունեն ու կգնահատեն երիտասարդ գրողին նրա գրչակից ընկերները: Եվ արդյունքը գերազանցեց բոլոր սպասելիքները: Դրական արձագանքներ ստանալով մի շարք հեղինակավոր գրականագետներից՝ որոշեցինք դիմել գրողների միություն՝ գրքի շնորհանդեսն այնտեղ անցկացնելու խնդրանքով:

Դավիթ Մուրադյանը, որն այդ ժամանակ գրողների միության վարչության նախագահի տեղակալն էր, մեզ բավական թերահավատորեն ընդունեց՝ ասելով.

– Հասկանում եմ, հեղինակը հերոս է, և ես խոնարհվում եմ նրա հիշարակի առաջ, սակայն անհրաժեշտ է, որ պատշաճ մակարդակ լինի:

Խնդրեցինք ծանոթանալ գրքին: Եվ ինչքան մեծ էր մեր զարմանքն ու ուրախությունը, երբ 2 օր անց Դավիթ Մուրադյանը զանգահարեց ու ասաց, որ գիրքն իրեն շատ դուր է եկել, որ Դավիթի ստեղծագործությունը բարձր են գնահատել և՛ գրողները, և՛ «Լիտերատուրնայա Արմենիա» ռուսերեն ամսագրի խմբագիր և քարգմանիչ Ալբերտ Նալբանդյանը: Հատկապես հաճելի էր, երբ Դավիթ Մուրադյանը հայտնեց, որ գրողների միության ղեկավարությունը որոշել է գրքի շնորհանդեսը կազմակերպել միության դահլիճում:

Այդ հիշարժան շնորհանդեսի բացման խոսքում «Գրական քերթի» գլխավոր խմբագիր Սամվել Կոսյանն ասաց, որ արդի հայ գրականությունը հարստացել է ևս մի շնորհալի գրչով: Բազմաթիվ ելույթներում շեշտվեց, որ այդպիսի արձակ կարող է ստեղծել միայն տաղանդավոր հեղինակը. բանախոսները համոզված էին, որ Դավիթ Սարապյանի արձակն իր ուրույն տեղը կգրադեցնի արդի հայ գրական կյանքում:

«Դե. կյանքը, պայքարը, ստեղծագործությունը» գրքին և հերթական անգամ Դավիթի անցած ուղուն անդրադառնալիս «Վեմ» ռադիոկայանի լրագրող-մեկնաբան Հասմիկ Գուլակյանն իր խոսքում ասաց.

– Դավիթ Սարապյանն արվեստագետ է քառի դասական իմաստով: Նա գաղափարական, սրեղծագործող անձնավորություն էր, մարդ, որը հյուսել է իր կենսագրությունը՝ սերտաճելով պատմությանը: Նման հերոսները մեր քոլոր հաղթանակները միշտ կերտել են իրենց կյանքի գնով: Նա ազգային մտավորական հերոս է, այն նվիրյալը, որի կարիքը հիմա խաղաղության պայմաններում առավել շար էնք զգում: Մեզ օրի պես հարկավոր է մտավորականի այս տեսակը, որովհետև այսօր հերոսի հաղկապես այս տեսակի բացակայությունից ենք տառապում ու տրոչորվում: Մենք ազգային բազմաթիվ չլուծված հարցեր ունենք, առաքելություն ունենք, ճանապարհ ունենք անցնելու, իսկ առանց մտավորական հերոսների տեղ չենք հասնի:

Տպավորիչ ու դիպուկ էր նաև Վարդան Դևրիկյանի խոսքը.

– Դավիթ Սարապյանը եզակի և անկրկնելի անհատականություն է, որը հիացնում է իր սրեղծագործական արժանիքներով, բոլորանվեր ինքնանվիրումով: Եթե Դավիթ Սարապյանը պատերազմից հետո ողջ մնար, ես չեմ կարող ասել՝ նա կառնար քաղաքակա՞ն գործիչ, հասարակակա՞ն գործիչ, գրո՞ղ, թե՞ արվեստագետ, բայց հասարակապես կարող եմ ասել, որ մեր գրական, մշակութային և հասարակական կյանքում կունենայինք մի ինքնատիպ երևույթ, մեծ մարդ, մեծ անհատականություն:

Դավիթի կյանքը գոնե ռազմաճակատում եղավ մի շքեղ հրավառություն, հրավառություն, որն արտահայտվեց ոչ միայն զենքով, այլև իր խոսքով ու գործողություններով, որոնք նրա կյանքի վերջին ամիսներին հաջորդեցին մեկը մյուսին: Մինչև իր կյանքի թելի կտրվելը նա միշտ առաջինն էր մահվան վրանգի ճանապարհին և վերջինը՝ դեպի կյանք ու ապահովություն տանող ճանապարհին: Պատահական չէ, որ մեր ազատագրական պայքարի առաջին զինվորներից էր, որ ընկավ առաջիններին քնորոշ խոյանքով...

Նյութական, գաղջ մեր օրերում ավելի դժվար է հավատալ, որ նա եղել է, քան հավատալ, որ նա էլ չկա:

* * *

Այսպիսին էր փայլուն հայորդու կյանքը, որն անցավ գիսաստղի պես՝ արձակելով շլացուցիչ լույս: Անցնելով իր վսեմ ու հերոսական ուղին, որի բազում հաղթանակներն ու նվաճումները զարդարել ու հարստացրել են մեր նորագույն պատմությունը, նա գնաց դեպի անմահություն՝ ազգի լավագույն զավակների հետ զբաղեցնելով իր պատվավոր տեղը հայոց փառքի պանթեոնում:



ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ԴԱՎԻԹԻ ՄԱՍԻՆ

.....

Նա ի ծնե ազնվական էր, մտավորական...

Դավիթի հետ հաճախ էի հանդիպում: Նա շատ մաքուր տղա էր: Նրա արյան մեջ էր մաքրությունը, նաև հերոսությունը: Նա ի ծնե ազնվական էր, մտավորական... Նա ստեղծագործող էր: Դրանում էլ ավելի համոզվեցի, երբ ժուսերեն լույս տեսավ «Դևը. կյանքը, պայքարը, ստեղծագործությունը» գիրքը:

Կարդալով Դավիթի գրական գործերը, տեսնելով նրա հրաշալի նկարները՝ ես անչափ տպավորված էի նրա տաղանդով ու էլ ավելի գնահատեցի բազմաշնորհ երիտասարդին:

Այդ գրքի տասնյակ օրինակներ ես սիրով հասցրի Արցախ, որպեսզի այնտեղ մույնպես մարդիկ կարդան և ճանաչեն ու գնահատեն Դավիթին ոչ միայն որպես հերոսի, որն իր կյանքը զոհաբերել է Արցախի ազատագրման համար, այլ նաև որպես տաղանդավոր գրողի ու նկարչի:

Դավիթը կարող էր շատ ապահով տեղ գնալ, զբաղվել ստեղծագործական աշխատանքով: Բայց նա չգնաց, քանի որ արտակարգ հայրենասեր էր, հայրենիքի նվիրյալ էր, գիտեր՝ ինչի համար է մեկնում Վարաբաղ:

Դևը ցույց տվեց, որ կարող է ոչ միայն ստեղծագործել, այլ նաև կռվել: Անասելի համարձակ էր. նա միշտ առաջինն էր, միշտ վտանգավոր տեղերում էր: Շատ մարդկային էր, նա իր մասին չէր մտածում, բայց շատ հոգատար էր բոլորի նկատմամբ: Ամեն

ինչ անում էր ընկերների ապահովության ու անվտանգության համար, իսկ դա պատերազմում շատ կարևոր էր: Դեռ չափազանց համեստ էր: Չէր պարծենում, չէր խոսում իր սխրանքների մասին: Իսկ սխրանքները շատ էին...

Դավիթը զինվոր էր, Դավիթը հերոս էր, որը զարմացնում էր իր ուժով, ոգու կարողությամբ: Նրա մամն տղաներն են դրել մեր բանակի հիմքը: Այդ մտավորական տղերքի շնորհիվ ենք մենք հաղթել նաև մտավոր պատերազմում:

Աստծու բանակին էլ լավ զինվոր է պետք: Լավ զինվորներն այդ գոհված տղերքն էին: Նրանք երկնքում են, մրանք մեր պահպան հրեշտակներն են, բարեխոսում են մեզ համար...

Նա ապրեց ընդամենը 26 տարի, և ինձ միշտ քվում է, որ նա այդ 26 տարին ոչ թե մեկ անգամ է ապրել, այլ առնվազն 4 անգամ: Նրա մեջ այնքան մեծ ներուժ կար, որ կարող էր կայանալ տարբեր ասպարեզներում, կարող էր շատ բարձունքների հասնել: Դա է ապացուցում նրա ապրած այդ կարճ, սակայն հագեցած ու բավական բովանդակալից կյանքը: Նա ապրում էր մեծավարի, մտածում էր մեծավարի, նաև իր վարքով էր մեծավարի: Եթե նրա կյանքն այդքան շուտ չընդհատվեր, եթե նա հասցներ օգտագործել իր մտավոր ողջ ներուժը, անշուշտ մեր մեծերի շարքը կդասվեր:

Դավիթի հիշատակը պետք է վառ պահել, պետք է նրա մասին միշտ խոսել, գրել...

Դավիթի բնակարանի ճակատագիրը չափազանց մտահոգիչ է: Այդ տունը, որտեղ ծնվել է Դավիթը, պետք է թանգարան դառնար, այդ օջախը պետք է մնար...

Յավիթ, բոլորս թերացանք այդ հարցում...

Տեր Գրիգոր Մարկոսյան,

*Գանձասարի Սուրբ Հովհաննես եկեղեցու
հոգևոր հովիվ*

Նա գաղափարի մարդ էր...

Դավիթի հետ մեր շփումն առանձնահատուկ էր. վնասվածքի պատճառով ես երկար ժամանակ հիվանդանոցում էի: Երբ Դավիթը գալիս էր Երևան, այցելում էր ինձ, և մենք խաղաղ պայմաններում երկար զրուցում էինք:

Սովորաբար մեր զրույցներն անցնում էին թեյախմությամբ: Դավիթը թեյ շատ էր սիրում: Մենք խոսում էինք ամեն ինչի մասին: Մեզ համար հետաքրքիր էր իրար հետ շփվելը, հետաքրքիր էր նաև իրար հետ լռելը: Հիմնականում խոսում էինք վերացական թեմաների շուրջ. փիլիսոփայում էինք կյանքի, պատերազմի, ապագայի մասին: Հաճախ քննարկում էինք Կոնֆուցիոսի մոտեցումները՝ որոշ դրույթներ ընդունելով, որոշները՝ ոչ:

Դավիթը զարմանալի կերպով կարողանում էր, երկրորդականը մի կողմ դնելով, խորանալ հարցի բուն էության մեջ: Ամեն հարցում չէ, որ մենք համակարծիք էինք: Բանավիճում էինք, օրինակ, «արդարություն» հասկացության և, մասնավորապես, վրեժի արդարության մասին: Սակայն, անկախ մոտեցումների տարբերությունից, մենք երբեք մեկս մյուսին չէինք պարտադրում մեր կարծիքը:

Մենք խոսում էինք նաև գրականության մասին, քննարկում նրա սցենարը, մտածում այլ տարբերակներ: Դավիթը Գարսիա Մարկես շատ էր սիրում: Հավանում էր նրա գրական ոճը և հատկապես «Նահապետի աշունը» վեպը: Նա սիրում էր նաև ճապոնական արձակը: Խորապես ուսումնասիրում էր նաև Տիբեթում ընդունված սովորությունները, սակայն դրանք մասնակիորեն էր

ընդունում: Ես միշտ հիշում եմ մեր զորույցները, որոնք ինձ այն-
քա՛ն մեծ բավականություն էին պատճառում...

Դավիթը երբեք չէր պատմում իր սխարանքների մասին: Դա նրա
համար փակ թեմա էր: Նրա քաջագործությունների մասին շատ
մանրասաններ ես իմանում էի տղաներից: Նա չէր սիրում ո՛չ գլուխ
գովել, ո՛չ էլ ավելի լավը երևալ: Նա միշտ այնպիսին էր, ինչպիսին
է, ապրում էր այնպես, ինչպես հարկ էր համարում, ապրում էր իր
պատկերացումներով, իր համար ընդունելի կանոններով: Նա ոչ մի
աշխարհի ամբողջովին չէր պատկանում և չէր էլ կարող պատկա-
նել: Երբեք ամբոխի մարդ չի եղել, եղել է գաղափարի մարդ: Ան-
չափ խոր և ուրույն անհատականություն էր, սակայն նրան հա-
տուկ էին մահ մարդկային թուլությունները, սխալները: Նա լուռ ին-
տելեկտուալ չէր, ընկնում էր և կռիվների մեջ, սակայն այդ կռիվ-
ներն էլ էր փիլիսոփայորեն հիմնավորում: Զարմանալի էր, որ, լինե-
լով այդպես խելացի և իմաստուն, իր ամբողջ կյանքում չհրաժար-
վեց մանկությունից: Նա ուղղակի ցնցում էր իր մաքրությամբ, մի-
ամտությամբ և իր անկանխատեսելիությամբ: Նա շարունակում էր
մնալ ռոմանտիկ և իդեալիստ: Եվ այդ ամենի համադրումը վկայում
էր նրա բազմակողմանիության մասին: Այդ ամենով հանդերձ՝ նա
չափազանց գրավիչ էր մարդկանց համար, և պետք է ասեմ, որ մեծ
հաջողություն էր վայելում կանանց շրջանում: Առնական և խելա-
ցի Դավիթի մեջ նրանք տեսնում էին ուժեղ և հուսալի, այսպես
ասած, ժայռ-տղամարդու: Կանանց անչափ գրավում էին Դավիթի
ասպետական պահվածքը, գեղեցիկ խոսելու ձևը:

Դավիթն օժտված էր մահ կարմանալի մագնիսական ուժով,
նրա ազդեցության ուժը շատ մեծ էր և չի թուլանում այսքան տա-
րի անց: Մինչև հիմա զգացվում են նրա հզոր ազդակները, և ես
համոզված եմ, որ դրանք կհասնեն մահ ապագա սերունդներին:
Դավիթի նման մարդիկ եզակի են, նրանց հանդիպելը և ճանաչե-
լը մեծ երջանկություն է:

Արկադի Սահակյան,

*«Մեծն Տիգրան» գնդի հետսխուլական
ջոկատի հրամանատար*

Նա չհամակերպվողներից էր...

Ապրողներիս համար ճակատագիրը մի կողմից շռայլ է եղել, որ բախտ ենք ունեցել շփվելու այդպիսի մարդկանց հետ, մյուս կողմից էլ դաժան է եղել, որովհետև Դավիթի և մյուսների նման չափանիշներ ենք ունեցել, որոնք, դժբախտաբար, մեր խաղաղ կյանքում այդպես էլ չգտանք: Թե՛ գաղափարական, թե՛ մասնագիտական առումով ինձ համար ավելի նվիրական ընկերներ են եղել Վարդան Բախշյանը, Թաթուլ Կրպեյանը, բայց իմ գոհված ընկերների մեջ իր հատկանիշներով, իր մասշտաբայնությամբ առանձնացել է Դավիթ Սարապյանը: Իմ մեջ տպավորված են նրա խոսքը, մտածելակերպը, պահվածքը: Նա հմայք ուներ և գերում էր բոլորին: Ինչ-որ մոգական ազդեցություն ուներ, և դու ակամա ենթարկվում էիր նրան: Այսպիսի մարդիկ հրամանատար են նշանակվում ոչ թե դաշտային հրամաններով, այլ բոլորին ակամա համախմբում են իրենց շուրջը և իրավիճակի թելադրանքով դառնում հրամանատար:

Նա միշտ շեշտված ձևով գրավում էր մարդկանց ուշադրությունը, նամանավանդ իր արագ կողմնորոշվելու զարմանալի ունակությամբ, իր վճռականությամբ, ռազմավարական մտածելակերպով: Նա ասես մարդ-համակարգ լիներ: Ամեն ինչ նախատեսում էր, ամեն ինչ իր ձեռքով էր անում և՛ մարտերի ընթացքում, և՛ խաղաղ պայմաններում:

Հիշում եմ՝ երբ ծանոթացանք, հարցրի.

– Ինչո՞ւ եմ քեզ «Դև» ասում, միգուցե մեջդ մի դիվային բա՞ն կա:

Ասաց, որ դա ավելի շատ իր անվան կրճատ ձևն է, իսկ երբ իմացավ, որ ազգանունս Դևրիկյան է, ուրախացած ասաց.

– *Դե, ուրեմն, երկուսս էլ Դե ենք:*

Մի գրույցի ժամանակ նա մի քանի գրական օրինակներ բերեց, որոնք ինձ ուղղակի ապշեցրին: Ես ասացի.

– *Եթե դու քաղաքական մեկնաբան դառնայիր կամ գրող, մեծ հաջողություն կունենայիր, քայց ինչո՞ւ այս ճանապարհն ընտրեցիր:*

Ասաց.

– *Խոսողները շատ են, պետք է գործ անել:*

Ասաց նաև, որ ստեղծագործություններ ունի, որոնք կիսատ են մնացել: Իմ հարցին, թե կհասցնի՞, արդյոք, ավարտին հասցնել, Դավիթն ասաց.

– *Իսկ դու ո՞նց ես պատկերացնում, կկարողանա՞մ ավարտել: Ասացի՝ պետք է լավապես լինել...*

Իսկ մեկ ուրիշ ժամանակ հիշում էինք մի քանի տղերքի, որոնց կորցրել էինք: Ես չէի կարողանում հիշել նրանց անունները, իսկ Դավիթը որոշակի տարբերակիչ բաներ էր ասում, որ հիշեցնի ինձ: Հետո էլ ասաց.

– *Տեսնես՝ մեզ ո՞նց կհիշեն,*– ապա ավելացրեց:

– *Մենք պետք է ամեն ընկածի փոխարեն կրկնակի կռվենք, փորձենք նրանց չարածն անել:*

Եվ նա այդպես էլ անում էր՝ թե՛ կրկնակի և թե՛ շատ ավելին: Նա միշտ ձգտում էր ստանձնել ծանրությունը, դժվարությունը, պատասխանատվությունը, և դա դրսևորվում էր ամեն ինչում:

Մի անգամ, երբ ջոկատը ծանր մարտից հետո դուրս եկավ և դիրքավորվեց աղբյուրի շրջակայքում, Դավիթն ինձ ասաց.

– *Գնում եմ շարքի վերջում մարեմ, հակառակորդի ուղղությամբ նայեմ, դու գնա՛, ջո՛ւր խմիր:*

Երբ հարցրի՝ իսկ ինչո՞ւ ինքը չի խմում, ասաց.

– *Թող բոլորը խմեն, լվացվեն, ես՝ վերջում:*

Դավիթին կարելի է բնորոշել կարճ՝ նա չհամակերպվողներից էր: Նա չհամակերպվեց ո՛չ իրեն վիճակված ճակատագրի, ո՛չ էլ

հայությանը պարտադրված վճռի հետ: Նա կռվարար մարդ չէր, բայց այն իրավիճակները, որոնց պետք էր հակադրվել, չհամակերպվողի նրա տեսակն անմիջապես դրսևորում էր իրեն:

Ցավոք, պատերազմից հետո չհամակերպվողներից քչերը վերադարձան: Դժբախտաբար, նրանցից շատերն էլ հետագայում համակերպվողներ դարձան: Այսպիսի անձնավորությունները գնացին, և նրանց տեղը մեծ դատարկություն մնաց: Նրա պակասն այնքա՛ն զգացվեց Արցախյան պատերազմի մնացած տարիներին ու առավել՝ պատերազմից հետո...

Վարդան Գևորգյան,

*Արցախյան պատերազմի մասնակից,
ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան
գրականության ինստիտուտի տնօրեն*

Դավիթն ապրում է հայոց փառքի բացօթյա տաճարում

Տարիներ առաջ ռադիոհաղորդում են պատ-
րաստել Արցախյան պատերազմի հերոս Դա-
վիթ Սարապյանի մասին: Գոյություն ունի
բարոյահոգեբանական գործոն, երբ արդեն մեկ անգամ գրել ես
հերոսի մասին, նա մեկընդմիջտ դառնում է քո հարազատը, մտե-
րիմը և ուզում ես, որ բոլորը սիրեն նրան ու նրանով հիանան:
Գրելիս փորձում ես զգալ հերոսիդ հոգեկան աշխարհի՝ քեզ հա-
սանելի հուզումներն ու ելևէջումները, սիրտդ տրոփում է, ասես,
նրա սրտի զարկերին համահունչ ու ներդաշնակ, և ջանում ես
զգալ նրա զգացածը՝ «թռչել» նրա «թևերով», որպեսզի ճակա-
տագրական պահին կարողանաս ապրել այն, ինչ նրան է բաժին
հասել, որպեսզի կարողանաս արժևորել անելանելի թվացող կա-
ցության մեջ հայտնվելու ժամանակ ճիշտ գործելու թե՛ վճռակա-
նությունն ու կարողությունը, թե՛ հերոսականությունն ու վեհու-
թյունը...

Այսօր մտավորականի երանելի տեսակի՝ Դավիթի կերպարի
մասին ես ավելին գիտեմ և ավելի շատ ասելիք ունեմ նրա մասին:
Ուզում եմ, որ հայի ազնվական տեսակի մասին իմանան հատ-
կապես մեր երիտասարդները: Դավիթը տղաների համար օրի-
նակելի կերպար է, իսկ աղջիկների համար՝ տղամարդու իդեալ:

Այո՛, հայի ազնվական տեսակ...

Սա այն տեսակն է, որը քեզ միշտ ապրեցնում է՝ անկախ այն
բանից՝ նա ո՞րչ է, քո կողքի՞ն է, թե՞ արդեն անմահության ճանա-

պարհին է կամ էլ միացել է անմահներին: Սա այն տեսակն է, որը, եթե անգամ զոհվում է, երբեք չի մեռնում, ապրում և ապրեցնում է իր գործով, իր կենսագրությամբ, սա այն տեսակն է, որը մշտապես ապրում է փառքի բացօթյա տաճարում, որի դռները կրնկի վրա հար բաց են. նա թաքցնելու ոչինչ չունի... Ավելին՝ հայի այս տեսակը մեր վերջին ազատամարտի, առայժմ մեր վերջին ազատամարտի ժամանակ է՛լ ավելի մաքրագործեց Արցախի ամեն մի թիզ հողը՝ դարձնելով այն ավելի սրբազան: Այնտեղ ազգի բազում նվիրյալ զավակների արյուն է թափվել...

Դավիթի պարագայում մեր կորուստն ավելի ծանր էր, որովհետև նա իր ծնողների միակ զավակն էր, իսկ ինքն այդպես էլ չհասցրեց ընտանիք կազմել, ծնող դառնալ...

Դավիթը չունեցավ իր շարունակությունը. ահա՛ ողբերգությունը... Իսկ հզոր գեներ ժառանգած Դավիթին բոլորը խոստումնալից ապագա էին գուշակում: Պատերազմից առաջ նրա առջև բացվել էին գրական աշխարհի ու կինոյի դռները, իսկ նա թողեց ամեն ինչ և 1990-ին մեկնեց ռազմաճակատի առաջապահ գլխ՝ անդամագրվելով «Անկախության բանակին»՝ Լեոնիդ Ազգալոյանի հրամանատարությամբ:

Դավիթն այլ կերպ չէր կարող լինել, որովհետև նա անցել էր նաև Արցախյան ազատամարտի թերևս ամենապայծառ աստղի՝ Լեոնիդ Ազգալոյանի դպրոցը: Լեոնիդն սկզբում նրանց ընտանիքի բարեկամն էր, ապա՝ Դավիթի ընկերն ու ուսուցիչը, խորհրդատուն ու հրամանատարը...

Ասում են՝ նոր-նոր առաջին դասարան ընդունվող Դավիթին դպրոցում հարցրել են, թե ի՞նչ հեքիաթ գիտես, պատասխանել է.

– *Ուզո՞ւմ եք պատմեն Բեռլինի գրավման պատմությունը:*

Ժամանակին նման արտահայտություններին ուշադրություն չես դարձնում, չես արժևորում, բայց տարիներ անց, երբ մարդ արդեն հյուսել է իր կենսագրությունը՝ սերտաճելով պատմությանը, յուրաքանչյուր չնչին և աննշան թվացող մանրուք իմաստավորվում է այլ կերպ, ձեռք բերում խորհրդավոր կամ փիլիսոփայական իմաստ ու նշանակություն, մտորելու տեղիք տալիս:

Դավիթը բացառություն չէ այդ շարքում, նրա գիտակցական կյանքը բավական կարճ էր, բայց իր արածով այն իմաստավորել է այնպես, որ իր զոհվելուց հետո էլ նա չի մահացել: Ավելին՝ մարդու այս տեսակը ֆիզիկական մահից հետո ապրում է մի երկրորդ՝ ավելի ուսուցողական կյանքով, որը ոչ թե նրան է հարկավոր, այլ մեզ՝ ապրողներին:

«Պատերազմում կարելի է հաղթել առանց հանճարի, բայց առանց հերոսների՝ անհնար է». քսաներորդ դարի մեր վերջին օծյալ սպարապետի՝ Գարեգին Նժդեհի անմահ խոսքերից է: Դավիթի մման հերոսներն են միշտ կերտել մեր բոլոր հաղթանակները՝ իրենց կյանքի գնով: Ողջերս պարտավոր եմք միշտ հիշել նրանց ու խոնարհվել այդ նվիրյալների սրբազան հիշատակի առաջ...

Հասմիկ Գուակյան,

*«Հայկական հանրագիտարան.
հրատարակչության» պատասխանատու
fairsուդար*

Նա նետվեց մարտի անմահի հոգեբանությամբ...

Դավիթ Սարապյան՝ Արցախյան պատերազմի ազատամարտիկ, ազատագրական շարժման գործիչ, գրող: Հգոր կերպար, որը, ասլրելով քառորդ դար, կարողացավ անսահման երկար կենսագրություն ստեղծել: Մարդ, որն իր կենսագրությունը ձուլեց իր հայրենիքի, իր երկրի, իր նորաթուխ, վերստին ձևավորվող պետականության կենսագրության հետ: Նժդեհը պիտի ասեր. «Այո՛, հայրենիքը՝ ընդհանուր աստվածություն, հայրենասիրություն, կրոն: Հայրենասիրությունը – միայն ոչ որպես գեղեցիկ խոսք, այլ զգացում և գիտակցություն, ոչ որպես շրթունքի սեր կամ իդեալոգիկ խուժանավարի բարոյական մերկությունը ծածկող գեղեցիկ պատմության, այլ՝ պաշտամունք, կրոն»:

Դավիթ Սարապյանն իրականում հենց այդպիսին էր: Հայրենիքի նրա հավատամքը, Հայաստանը նրա համար իրականում աստվածություն էին, իսկ հայրենասիրությունը վերածվել էր կրոնի:

Ես ներկա եմ եղել Դավիթին մկրված հոբելյանական երեկոյին, և մեղքի զգացողությունն էր անընդհատ տողոսկում իմ հոգին՝ խարխուլելով հոգուս խորքը: Մեղքի զգացողությունն ականա էր ծնվում և կապված էր իմ ու Դավիթի ծննդյան տարեթվի զուգակցման հետ: Երկուսս էլ ծնվել ենք մույն՝ 1966 թվականին: Ես դասալիք չեմ եղել, կռվի դաշտից չեմ հեռացել, նրա թիկունքը բաց չեմ թողել, բայց, ի տարբերություն Դավիթի, ես շարունակում եմ ապրել, շարունակում եմ երբեմն ոչ լիարժեքորեն լրացնել այն առաքելությունը, որը տրված էր նրան: Դավիթը պետք է ներ-

կա լիներ այդ միջոցառմանը, մաս մեր հայրենիքի հզորացման ու պետականության կերտման սրբազան գործի մասնակիցը և լավագույն ներկայացուցիչը լիներ, բայց, ցավոք սրտի, մա չկա: Նա դաստիարակված էր ամենաբարձր արժեհամակարգով, դեռևս դպրոցական տարիներին արդեն իսկ աչքի էր ընկնում իր պատվախնդրությամբ, մարդ, որ կարողանում էր կռվի մեջ նետվել ոչ թե այն փողոցակովի վերածելու և ինչ-որ հարցեր պարզելու, այլ միայն ու միայն սեփական արժանապատվության պաշտպանության համար:

Փոքր տարիքում արդեն մա իրեն դրսևորում էր որպես իսկական ասպետ, ուներ պատվի և արժանապատվության զգացում, թույլերին հովանավորելու, անպաշտպաններին պաշտպանելու ներքին մղում, արդարամիտ էր, որի համար նրան անվանում էին «դպրոցի խիղճ»:

Դպրոցն ավարտելուց հետո մա ընդունվում է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի կիբեռնետիկայի ֆակուլտետ, բայց, ցավոք սրտի, այդպես էլ չի ավարտում: Ես էլ եմ նույն թվականին ընդունվել այդ ֆակուլտետը, երկուսս էլ, գորբաչովյան հրամանի համաձայն, զորակոչվեցինք բանակ և, ուսումը կիսատ թողած, ծառայեցինք խորհրդային բանակում: Ի տարբերություն ինձ՝ Դավիթը կարող էր խուսափել ծառայությունից, որովհետև վատ տեսողություն ուներ, բայց մա կամավորագրվում է և մեկնում ծառայության, որպեսզի ձեռք բերի փորձառություն՝ վստահ լինելով, որ մի օր հայոց բանակում է ծառայելու և մի օր հայոց բանակի կազմում պիտանի է լինելու Հայաստանի Հանրապետության անկախության կայացմանը...

Եվ 1990 թվականին մա նպատակալաց գնաց մասնակցելու սկսված ազգային-ազատագրական պայքարին: Ի սկզբանե Դավիթը հայտնվեց Լեոնիդ Ազգալոյանի ջոկատում: Լեոնիդը նրա կուռքերից էր, որին հավատում էր և ծանոթ էր Լեոնիդի իմաստությանն ու ոգեղենությանը: Դավիթը դեռ մանկուց էր մշտապես շփվել Լեոնիդի հետ, իսկ Լեոնիդը հպարտանում էր Դավիթով: Լեոնիդն իր կերպարով և գաղափարական տեսակով ավելի

քան կանխորոշել էր Դավիթի ապագա ուղին: Դավիթը հետագայում իր մարտական գործունեությունը շարունակեց «Մեծն Տիգրան» աշխարհագորային գնդում: Նա գնդի լավագույն զինվորներից էր, որը հերոսացավ բազմաթիվ մարտերում: Իսկ իր մայրական՝ Տող գյուղի ազատագրման ժամանակ նրա հանդուգն գործողությունների շնորհիվ թշնամին ջախջախվեց: Տողի ազատագրումից հետո նա զուսպ և համեստորեն ասում է մորը.

– Քո ծննդավայրն ազատագրված է, հերթը հորս հայրենի Կարին քաղաքինն է:

Վստահ եմ, որ նա կազատագրեր ո՛չ միայն Կարինը, եթե նրա տեսակն այդքան հանդուգն ու խենթ չլիներ: Եվ փառք բոլոր նրանց, ովքեր կարողացան նետվել մարտի՝ անմահի հոգեբանությանը ու իրենց խենթացնող մահով կերտել իրենց անմահությունը:

Ասում են՝ մահը լավագույններին է սիրում... Մահն ընտրեց Լեոնիդներին, Մոնթեներին, Դուշմաններին, Դևերին, որովհետև մահն անգամ գիտի լավագույնների արժեքը...

Երբ պարբերաբար այցելում եմ Եռաբլուր, անպայման քայլերս ուղղում եմ դեպի Դևի շիրիմը: Իսկ Եռաբլուրը սովորական պանթեոն չէ, այլ ուխտավայր, մի տեղ, որտեղ հայոց նոր ուխտ պիտի ծնվի, իսկ առանց ուխտի գրեթե ոչինչ հնարավոր չէ: Վաղը քաջաբար կովելու պատրաստ զինվորներ կունենա միայն նա, ով այսօր ուխտ ունի: Այսօր մենք պարտավոր ենք Լեոնիդների, Դևերի և մեր մյուս հերոսների շնչով ու ոգով դաստիարակել նոր ուխտի ասպետներին: Եվ որպեսզի այն ուխտը, որին նվիրված էին նրանք, դառնա նոր սերնդի ուխտը, մենք պարտավոր ենք լինել այդ ուխտի շարունակողները, այդ ուխտի նվիրյալները և այդ ասպետականության ու պաշտամունքի կրողները:

Գագիկ Գինոսյան,

*«Արծիվ մահապարսնե՜ր» գումասրակի
X կործանիչ դասակի անդամ,
ՀՀ մշակույթի վասսակալոր գործիչ*

ДЭВУ

Ты хотел въехать в город на белом коне,
Ты хотел, чтоб народ улыбался тебе,
Ты хотел, чтобы стали свободными мы,
Ты хотел уберечь всех друзей от войны.
Ты гореньем своим всех хотел отогреть,
Замерзая подчас от черствых сердец...

....Ты остался один на коне, на коне,
Бросив страх под копыта коня,
Мчась навстречу судьбе и стреле....

Въехал в город твой конь с поникшей главой,
И народ разрыдался при виде его,
Ты хотел въехать в город на белом коне,
Будешь плавать теперь в океане небес.

Сергей Григорян



Давид
Сарапян

ДЗВ

ЖИЗНЬ
творчество
борьба

ՀԱՏՎԱԾՆԵՐ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՅ

.....

300 ՎԱՅՐԿՅԱՆ

(վիպակ, կինոսցենար)

....Ականակիր խավարում, որտեղ տեղատարափ անձրևը խլացնում էր մարդկային ժխտը, մի լուցկու տուփ առկայծեց: Արթուրի ձեռքերում բոցավառված կրակը լուսավորեց շինարարական անտառի աղբակույտը, որ ձգվում էր ճամբարային երկար շինության՝ շատ վաղուց սպիտակեցրած պատի երկայնքով: Ջեկը հասցրեց մի երկար ու լայն տախտակ ընտրել՝ ոտքերի համար լայնակի մեխած քիերով, ու լուցկին հանգավ:

Տախտակը հավասարակշռած՝ Արթուրը սլացավ բարաքի երկայնքով: Անկյունում քարացավ: Դիզելը շաչեց, ցցապատի լամպերը լուսավորեցին լայն արգելագոտով մեկ ձգվող փշալարերը: Շարժիչը սովորականի պես լռեց: Ամեն ինչ նորից սուզվեց խավարում:

Արթուրն առաջ նետվեց: Ցեխն աղմուկով չլնփում էր նրա կոշկատակերին: Զիչ անց փշալարը ծնգծնգաց տախտակի ու նրա վրայով փախչող կալանավորի ծանրությունից:

Արթուրը բարեհաջող վայրէջք կատարեց արգելագոտում ու տախտակը հետևից քարշ տալով՝ վազեց դեպի ցցապատը: Իր հայտնաբերած «սանդղափք» ցցապատին հենելով՝ նա կայծակնային արագությամբ վեր մագլցեց: Ապա հանեց այն, իր կողմը քաշեց՝ հրնթացս կամուրջ գցելով դեպի մյուս ցցապատը: Փշալարի վերին շերտի վրայով անցնելիս դիզելը նորից շառաչեց: Արթուրը թափ հավաքեց, ուստնեց ու գլորվելով թրմփաց մյուս կողմը: Հասցրեց: Վառված լամպը լուսավորեց տախտակը, որը կարծես

հենց մի ցցապատից մյուսը կամուրջ գցելու համար էր:

Այս անգամ լույսը սովորականից երկար վառվեց: Ջեկը սկսեց դողալ, երբ լուսարձակի շողը իրենից վեց մետր հեռավորության վրա լուսավորեց փշապատնեշը՝ վերջին խոչընդոտը, որն իրեն բաժանում էր ազատությունից:

Երկինքը սև էր, ամպերով պատված, բայց երջանիկ աստղն անտես ցոլքով լուսավորում էր իր հուսահատության մեջ անհեթեթ այս փախուստը: Դիզելը կրկին լռեց: Վայրկյան իսկ չկորցնելով՝ Արթուրն առաջ սլացավ, մեծ ճիգ արեց ու ծառս եղավ՝ թռչելով փշալարի վրայով: Պոռթկող շորի ձայն, ու քիչ անց մույնիսկ քայլերի ձայնը չկար տեղատարափ անձրևի աղմուկի մեջ: Միայն լուսարձակը, վերջնականապես անդարձ միանալով, մի քանի վայրկյան անց լուսավորեց փշապատնեշի ներս ընկած հատվածը ու մետաղալարին թրթռացող շորի մի պատառիկ...

....Արթուրը վազում էր անտառի խիտ քավուտով: Անձրևի ծանրությունից կքած ճյուղերն անխնա ձաղկում էին դեմքը, թաց գետնի վրա կոշկատակերը սոթ էին տալիս: Բախվելով ծուռումուռ մի կոճղի՝ նա գլխիվայր գլորվեց ներքև: Մինչև ծնկները կեղտոտ ջրացեխում՝ այն է՝ ուզում էր առաջ վազել, երբ անձրևի խշշոցի միջից ավտոմեքենայի շարժիչի հեռավոր գվկոցը խայտաց ականջում... Նա անշարժ քարացավ:

....Անիվներից ցեխաջրի շատրվաններ շաղ տալով՝ գյուղական նեղ ճանապարհով ընթանում էր մենավոր «Նիվան»: Մեքենայի լամպերը վառ լուսավորում էին: Ջրափոշու մեջ ծիածանվող լույսը ցանուցիի ծփանք էր տալիս: Շիկակարմիր, խիտ մորուքով վարորդն ակնհայտորեն խմած էր: Նա ապուշ կտրած նայում էր դիմապակու «հավաքարար» խոզանակից բացվող կիսաշրջանին, որ շարունակ հեղեղվում էր տեղատարափ անձրևի շիթերով:

Ոլորանի մոտ մեքենայի լուսարձակները որսացին գիշերով ճամփեզրին մեքենա կանգնեցնող մարդու ուրվապատկերը: Վարորդն արգելակեց: Մինչ ավտոստոպերը, որը, պարզվեց՝

Արթուրն է, կմոտենար «Նիվային», վարորդը ձեռքը տարավ նստարանի տակ ու ճանկեց լծակը:

Մոտենալով մեքենային՝ զեկն անսպասելի արագությամբ բացեց վարորդի դուռն ու մատնելով կառչելով Մորուքի թավ գանգուրներից՝ ժամանակ չթողնելով անգամ, որ ծպտուն հանի, դուրս քաշեց նրան ուղիղ ճանապարհի ցեխի մեջ: Սա փորձեց գործի դնել լծակը, բայց ծնոտին ոտքի ջախջախիչ հարված ստանալով՝ կիսամեռ փռվեց ջրացեխի մեջ: Արթուրը բռունցքը թափով իջեցրեց նրա գլխին:

Նա մեքենայի տիրոջը խցկեց սրահն ու նստատեղի թիկնակի վրայով վեր պտտելով՝ բաց թողեց: Մսագունդը դորդալով ընկավ խցիկի հատակին:

Արթուրը լծակը վերցրեց գետնից ու նստեց դեկին: Դուռը շրխկաց, «Նիվան» շոնդալով պոկվեց տեղից:

....Լուսանում էր: Անձրևը դադարել էր, ամպերի միջից նայում էր արևը:

Ճառագայթները վառվում էին ցուցափեղկերին, շողք ու զգվանքով իջնում վարագույրների շղարշներից, պատվանդանի վարդագույն թավիշին ու կուրացուցիչ անդրադարձվում հսկայական փայլաթիթեղի անճաշակ թագի մեջ՝ վարդագույն թավիշով պատված մեծ խորանարդի վրա: Դատելով վերևում կախված հանգած ցուցանակի՝ կանաչին տվող տառերից՝ խանութն անմիջական կապ ուներ «Յուվելիրտորգի» հետ: Ուղիղ մայթի վրա բացվող ապակեպատ երկփեղկ դռների առաջ ժամանակից շուտ եկած մոտ տասնյակի չափ այցելուներ հոգնատանջ սպասում էին խանութի բացվելուն:

Քիչ հեռվում արգելակեց հետնամասի ապակիները դեղնակտուց պճնամուղի ոճով վարագուրած, ռազմադաշտային գույնի «Նիվան»:

Արթուրը, Մորուքի շորերը հագին, դեկին նստած հետևում էր «Յուվելիրտորգի» ցուցանակի հետևում տեղի ունեցող անցուդարձին: Մեքենայի տերը, բրեզենտի մեջ ճոպաններով

կապկպված, ընկած էր մեքենայի խցիկի հատակին: Երևում էին միայն ժանգ փոշերը:

Կապույտ խալաթով մի կին մոտեցավ, օղակներից հանեց ներսի կողպեքը: Գնորդների զվարթացած բազմությունը խուժեց խանութ:

Արթուրը մեքենան պոկեց տեղից, սահում վարեց խանութի ուղղությամբ ու արգելակեց դռան աջակողմյան ապակու դիմաց: Կարդալով «Յուվելիրտորգի» աշխատանքային ու ընդմիջման ժամերի մասին տեղեկացնող բրոնզագույն տառերով ցուցանակը՝ նա, առանց ժամանակ վատնելու, «Նիվան» դուրս բերեց երթևեկության երկրորդ գիծ ու կորավ տեսադաշտից:

[.....]

...Փողոցն անձրևից ամայացել էր: Հատուկենտ անցորդներ էին պատահում, որը՝ հովանոցով, որը՝ օձիքը բարձրացրած, որ ջուրը ներս չլցվի: Անձրևի մանրահարվածներից նշանառության օղակներ հիշեցնող ալիքներ էին տարածվում խայտափայլ ջրափոսերում:

«Նիվան» կանգնած էր փողոցի՝ «Յուվելիրտորգին» հանդիպակաց կողմում՝ խանութին շեղակի: Դիմապակու միջով Արթուրը նայում էր, թե ինչպես են հաճախորդները դուրս գալիս խանութից: Վերջին հաճախորդից հետո կապույտ խալաթով կինը ներսից կողպեց դուռը, կախեց «Ընդմիջում» դեղին ցուցանակն ու անհետացավ խորքում:

Ջեկը ձեռքը տարավ նստարանի տակ, հանեց երկաթյա ծանր ձողը, դրեց կողքին: Ապա պտտեց բանալին. մեքենան պոկվեց տեղից, երթևեկության առաջին գոտի դուրս եկավ ու շրջվեց դեպի «Յուվելիրտորգը»:

Երբ խանութի դռներն ու մեքենայի առաջամասը հայտնվեցին նույն գծի վրա, Արթուրը դեկն ուղղեց, փոխեց արագությունը, կողքից անցնող մարդատարը բաց թողնելով՝ կտրուկ առաջ սլացավ:

Իրավիճակին հարիր հնարավոր առավելագույն արագությամբ «Նիվան» հայտնվեց մայթին ու ողջ թափով մխրճվեց «Յուվելիրտորգի» դռների մեջ:

Ջարդուփշուր ապակիները զրնգոցով թափվեցին, մերկացած փեղկերը թռան տեղից, ու մեքենան խանութ մտավ: Արգելակները սուր վնգստացին. «Նիվան» մեխվեց տեղում: Միայն պոչի մասը մնաց դռներից դուրս:

Մետաղյա ձողը ձեռքին՝ Արթուրը ցատկեց մեքենայից:

Ծառայողական հատվածի դուռը բացվեց, հետմախորշում երևացին վախեցած կանայք: Ձեկը վայրենու դեմք ընդունեց, վեր պարզեց իր տսկալի «գենքը». կանայք հոդս ցնդեցին:

Արթուրը ցատկեց դեպի վաճառասեղանը: Թավշապատ ցուցափեղկերը չէին շլացնում ոսկերչական ապրանքների առատությամբ, բայց ինչ-ինչ զարդեր, այնուամենայնիվ, կային:

Չողը շրխկաց փեղկերին...Իսկ խանութի մոտ արդեն, չնայած անձրևին, եթե ոչ ամբոխ, հետաքրքրասերների բազմություն որ հավաքվել էր: Ինչ-որ տեղ՝ մոտերքում արգելակեց «09»-ը, վարորդն ակնթարթորեն դուրս եկավ մեքենայից:

Մարդիկ չէին հասկանում՝ ինչ է կատարվում խանութում: Անիծյալ շղարշավարագույրները չէին թողնում ներսում մի բան տեսնել: «Նիվան» էլ, շրջակալներին կիպ հագած, խցկվել-մնացել էր դռների մեջ: Հետնապակու պիժոնական վարագույրն էլ իր հերթին էր փակում տեսադաշտը...

Իսկ գեկը՝ խանութի մարգարիտ-մարջանը գրպանները լցրած, արդեն դեկին էր:

Շարժիչը հռնդաց: Պարապ-սարապների ամբոխը ցաքուցրիվ եղավ: «Նիվան» հետընթաց դուրս եկավ խանութից, թափով մղվեց երթևեկելի մաս ու մխրճվեց կողքից սլացող «Մոսկվիչի» կողի մեջ: Երկաթների տհաճ զխկոցից «Մոսկվիչը» շուտ եկավ սկզբում կողքի, հետո՝ գլխիվայր:

Արթուրը գազագած պտտեցրեց դեկը, մեքենան շրջեց, ապա չորրորդի տակ սեղմեց գազի ոտնակը: Ոստիկանական շչակի մոտեցող ոռնոցի տակ «Նիվան» փամփուշտի պես սուրաց փո-

դոցով:

Ձեկն արդեն թեքվել էր, երբ դեղմաներկնագույն «Վոլգան», դուրս գալով նույն անկյունից ու կտուրի կապույտ փարոսիկը թարթելով, սլացավ դեպքի վայր...

.... Դուրս գալով բանուկ ավտոմայրուղի՝ «Նիվան» խառնվեց մեքենաների հոսքին ու ընթացավ կանոնավոր արագությամբ:

Անձրևը ողողում էր դիմացի լուսացույցի կարմիր աչքը: Արթուրն արգելակեց առջևից ընթացող շքեղ օտարամականիշի հետևում, ավիով սրբեց ճակատի քրտինքն ու նայեց հայելու մեջ: Հոնքերից վեր արյան հաստ շերտ կար: Արթուրը շրջեց ավերեր. թաց էին արյունից: Կողքից լսվեց մոտեցող սիրենի ձայնը: Ձեկը լարեց ուշադրությունը:

Հետիոտները ծանրաքայլ կտրում էին գծանցումը, երբ «Նիվան», շրջանցելով առջևի մեքենան ու հագիվ փախցնելով կողքից անցնող կնոջից, մտավ հանդիպակաց գոտի ու սլացավ առաջ:

Վայրկյաններ անց մայրուղին հատող փողոցից խաչմերուկ մտավ հրշեջ մեքենան...

ՀՈՐԲԻ

(պատմվածք)

Երկրագնդի բնակչության մեծ մասը հորբի ունի: Կարևոր չէ՝ ինչ հորբի: Ոմանց համար նամականիշ հավաքելն է սիրած զբաղմունք, մյուսների համար՝ սպորտը, երրորդների համար՝ կիրառական արվեստը: Ես էլ հորբի ունեմ: Ճիշտ է՝ մի քիչ յուրօրինակ, բայց դե ունեմ...

Բանն այն է, որ ամողջ քնից ազատ ժամանակս սիրո վրա եմ ծախսում: Չէ, չէ, դուք ճիշտ չհասկացաք: Ասում եմ՝ սիրո: Պետք չէ ամեն ինչ սեքսին վերագրել:

Երկրորդ դասարանից: Հենց ինձ հայտնեցին, որ աղջիկները գոյություն ունեն ոչ միայն այն քանի համար, որ քաշես նրանցից անհաջող կախված ամեն ինչից, ես իսկույնեթ, առանց հետաձգելու, սիրահարվեցի մեր դասարանի՝ իմ կարծիքով ամենասիրուն աղջկան: Դա պատահեց պարի դասին: Դպրոցում պարի խմբակ էր բացվել, ու քանի որ այդ ժամանակ սպորտի հանդես առանձնապես սեր չուների, ինձ պարի տվեցին: Հիշում եմ՝ սարսափելի դիմադրում էի, այնպես որ մորս մեծ դժվարությամբ հաջողվեց ինձ պարասրահի դռնից ներս հրել: Պարուսույց Կոլյան, հայրանունը չեմ հիշում, խղճալի հայացքով ոտքից գլուխ չափեց ինձ, հետո ձեռքս բռնեց ու տարավ... նրա մոտ: Հենց այդ ժամանակ էլ առաջին անգամ սիրահարվեցի նրան:

Նա սիրունիկ էր՝ բաց գույնի մազերով, կապուտաչյա, ու ի լրումն այդ ամենի՝ սպիտակ շորով ու նույն գույնի էլ կոշիկներով:

Ընդհանուր պատկերի վրա իմ փոքրիկ փերին ինձ սպիտակ վարդ էր թվում՝ ուղտափշի մացառուտում: Այսպես ուրեմն, ես սիրահարվեցի...

Մեզ երկար շարքով երկու-երկու կանգնեցրին ու պատվիրեցին իրար ձեռք բռնել: Ես որսացի նրա խոնավ ձեռքը, ու հավանաբար՝ շատ կտրուկ, քանի որ նա զարմացած աչքերը հառեց վրաս:

- Ի՞նչ ես անում...

Ես չհասցրի պատասխանել: Երաժշտությունն սկսվեց, Կոլյան ծափ տվեց, ու մենք զույգ-զույգ շրջանաձև քայլեցինք: Հիշում եմ՝ ոտքերս չէի զգում: Աչքերս կլանում էին նրան, իսկ նա իմ հայացքներից, չգիտես ինչու, նյարդայնանում էր: Անընդհատ շրջում էր իր փոքրիկ դեմքը կամ հակառակը՝ բարկացկոտ շուռ էր գալիս իմ կողմն ու ինչ-որ բան փսփսում: Բայց ես ոչինչ չէի լսում: Ես երջանիկ էի, որ բռնել եմ այդ ճերմակ ձեռքը, զգում եմ այն անկրկնելի բույրը, որ գալիս է միայն աղջիկներից, նայում եմ նրա՝ երկնքի նման կապույտ աչուկներին: Ու հանկարծ...

- Ստո՛ւյ, ստո՛ւյ, ստո՛ւյ:

Իմ դիմաց կանգնած էր դժգոհ Կոլյան:

- Ինչի՞ ես քայլքը խախտում, հը՞: Երաժշտությունը չե՞ս լսում:

- Անընդհատ ոտքերիս է բարձրանում, - նվնվաց մեր դիմացի զույգի տղան:

Ես կանգնած էի՝ ամբողջովին կարմրատակած ու շփոթված, ու չգիտեի ինչ պատասխանել: Հանկարծ հնչեց աղջկա զրնգուն ձայնը:

- Ինձ էլ է խանգարում: Անընդհատ դեմքը ծամածռում է:

Դա վերջնականապես ջախջախեց ինձ: [...]

... Իսկ շուրջս աղմուկը գնալով սաստկանում էր: Ես մի հալածված գազանիկ լինեի ասես, որի վրա բոլոր կողմներից շներ էին հարձակվել, ու յուրաքանչյուրը ջանում էր ավելի ցավոտ կծել: Երեխաները մեծերից են օրինակ վերցնում և երբեմն իրենք էլ դաժանություն են անում, թեկուզ չգիտակցված: Ընդամենը մի

քանի թույլ եմ նրանք ինձ հիշեցրին իմ բոլոր թերությունները, բոլոր սխալները, ու, որ ամենասարսափելին էր՝ այն, որ ես գեր եմ:

– Խո՛ղ,– ուղիղ իմի դիմաց հայտնվեց ինչ-որ մեկի խոխոացող մոտքը:

Այդ խոխոացող խաչ քաշեց իմ պարային կարիերայի վրա: Աջ ձեռքս ինքնուրույն բռնեցի, ու ես այնպես, ինչպես սովորեցրել էր Լյուդյան, ամբողջ ուժով իջա ինձ վիրավորանք հասցնողի ծնոտին: Սա ձեռքերը թափահարեց ու մեջքի վրա փռվեց գետնին: Մի ակնթարթում դահլիճում քար լուծվեց տիրեց: Մյուս երեխաները վախեցած ինձ էին նայում, իսկ ես դեռ կանգնած էի բռնեցիքներս սեղմած ու կախարդվածի պես հայացքս սևեռել էի տապալվածին: Այդ թմբիկից ինձ հանեց ականջիս սուր ցավը: Հետո ինձ համարյա օդով քարշ տվեցին դեպի դուռը ու շարունակեցին միջանցք:

– Էլ քեզ էստեղ չտեսնեմ, պարագի՛տ,– մատ թափ տալով սպառնաց Կոլյան ու դուռը շխկացրեց քթիս:

Ես մի քիչ կանգնեցի մութ միջանցքում, ապա քարշ եկա դեպի աստիճանավանդակը: Հասա ու հիշեցի, որ շքամուտք էի փնտրում, իսկ նկուղը շատ հարմար փոխարինող էր: Բայց ես ամենևին չէի ուզում բարձրաձայն լաց լինել: Ես մտքերի մեջ ընկա՝ հեծկլտալ հիմա՞ «ավանտ՞վ», թե՞ հետաձգել ու լաց լինել մի ուրիշ անգամ: Իմ փոխարեն ամեն ինչ որոշեց նկուղից եկող ոտնաձայնը: Որոշելով այլևս չփորձարկել ճակատագիրս՝ ես դուրս թռա նախասրահ ու վազեցի դեպի դպրոցի դուռը...

«ԴՈՒՌՈՉԿԱ»

(անավարտ պատմվածք)

Աշունն այդ տարի շուտ սկսվեց: Օգոստոսի երրորդ տասնօրյակն էր, բայց հաճախացած անձրևներն ու տերևաթափը պատրանք էին ստեղծում, թե տարերքի շրջանն է այն եղանակի, որին անվանում են «очей очарование»... Պիտի ասեմ՝ պոետները մակդիր չեն խնայել՝ գովերգելու տարվա այս եղանակը: Ես պոետ չեմ, բայց ես էլ ժլատություն չեմ անի: Եվ այսպես, դա ամենակեղտոտ, ամենանողկալի, ամենա..., մի խոսքով՝ աշուն չէր, այլ իսկական փորձանք: Ու բացի դրանից, ինչպես ինձ էր թվում այն ժամանակ, դա իմ կյանքի աշունն էր (տե՛ր Աստված, տասնինը տարեկանում...):

Այդպիսի կամ մոտավորապես այդպիսի մտքեր էին սողոսկում այն ժամանակ դեռ չխուզած գլխիս մեջ՝ աղմուկի, ճռինչի, մետաղի սուր ճղավոցի ու մյուս բոլոր ձայների համաչափ նվագակցության տակ. ձայներ, որ կարող է արձակել վորոնոկը՝ միջին արագությամբ ընթանալով վաղ առավոտից մաղող զգվելի անձրևի սողուսի մեջ թաղված ողորմելիագույն ճանապարհով:

Մութ մեկուսախուցն ու համր ուղեկիցս ավելի էին խորացնում այդ անուրախ, բայց, փառք Աստծու, ոչ երկար ճամփորդության անհարմարությունը: Փառք Աստծու, քանի որ շրջանային հոգեբուժարանը կամ «դուրոչկան», որի քննչական բաժին էին տանում մեզ, բանտից ընդամենը մեկ ժամվա հեռավորության վրա էր:

Պիտի խոստովանեն՝ այս ճամփորդության հետ ես փոքր հույսեր չէի կապում: Առջևում նշմարվում էր գիծ ձևանալու և, եթե ոչ «մշտական մահճակալ» ապա, գոնե «հոգեկան սաստիկ հուզմունքի վիճակ» ձեռք գցելու հեռանկարը: Էնտեղ քարը տրաքի՝ հինգ տարի է՝ «քիմիայով», ու պայմանական վաղաժամ ազատում էլ կա: Չես համեմատի օրացույցով նստելու հետ, որ գլխիս սարքել էր անմոռանալի Ալեքսանդր Արկադևիչը՝ փայլեցնելով իր լույսը բացվելուն պես սափրած թշերը, որոնցից «Սպարտակոս» օդեկոլոմի գարշելի բաղադրությունն էր բուրում: Ու ընդհանրապես, սլեդակը վերջում իսկական սրիկա դուրս եկավ, թեև հարցաքննությունների ժամանակ ինձ «Սոյուաբդեսա» էր հյուրասիրում: Այդ ժամանակից ի վեր չեմ կարողանում առանց նողկանքի զգացումի նայել այդ ծխախոտների, ու առհասարակ, սիրտս խառնում է բուլղարական տաբակի ծխից, քանի որ հոտառությունս այն նույնացնում է Ալեքսանդր Արկադևիչի կաթինետի հետ, որտեղ պատերը, վարագույրները, աթոռների պատառները, ամեն ինչ դրանով էին ներծծված:

Ըստ երևույթին, համրի վիճակն իմից լավ չէր այդ երերումներով ու կտրուկ արգելակումներով ուղեկցվող ճանապարհին: Հաստատ նույնիսկ ավելի վատ էր: Ես ինձ գոնե կարող էի ճոխություն թույլ տալ՝ ժամանակ առ ժամանակ հայեցել թե՛ ճամփան, եթե դարուփոսեր էին պատահում, թե՛ աշխարհի բոլոր վորոնոկները, երբ մետաղի ճռինչն անասելի կերպով սկսում էր ազդել նյարդերիս վրա, ու ընդհանրապես, ամեն-ամեն ինչ, հենց այնպես՝ առանց պատճառի՝ հոգիս թեթևացնելու համար: Համրը միայն իր մտքում կարող էր դա անել: Ինչևէ, նա ինքն էր իր համար ընտրել այդ միանգամայն անհարմար ամպլուան, այնպես որ՝ ինքն էլ պիտի միայնակ հատուցեր: Այդ հատուցումը ձգվում էր արդեն երկու ամիս, ճիշտ այն օրվանից, երբ մենքերը նրան նախնական կալանքի խցում էնպես էին հարթուկել, որ նրա միակ երթուղին մնացել էր մահճակալից պարաշ գնալ-գալը: Բալանդան խցակիցները նրան «անկողնում էին մատուցում», ինչին նա հազիվհազ պատասխանում էր երախտագետ մոթոնոքոցով ու

անատամ բերանը ծոռնելով ժպտալու պես մի բանով: Հիմա, ճիշտ է, արդեն ուշքի էր գալիս, ու թեև կուզեկուզ էր քայլում, բայց էլ չէր տնքում՝ ծեծված երիկամները բռնած: Մի խոսքով, վատ տղա չէր: Հետագայում, երբ նրա համրությունը «բուժեցին», բավական հետաքրքիր զրուցակից ու պատմող դուրս եկավ: Սիրում էր հիշողություններ պատմել իր երկու նախկին կանանց ու էլի շատ այլ՝ օտար կանանց մասին: Հատկապես իրենց քաղաքի դատախազի կնոջ: Բայց այս ամենը հետո է պատահել ու իմ պատմության մեջ նախատեսված չէ, այնպես որ՝ չշեղվեմ թեմայից:

Վերջապես արգելակները հիմնավորապես ճնշացին, ու վորոնկը մեխվեց տեղում: Խցիկի դուռը շրխկաց: Դրսից ձայներ լսվեցին:

Մեզ դիմավորեց երեք դյուժին սանիտարներից բաղկացած հանդիսավոր մի էսկորտ: Երբ անցնում էինք պահակակետով (այնտեղ էլ, ինչպես բանտում, պահակակետ կար՝ բոլորը չինեքով), հերթապահ մենքը ավստասանքի ռեպլիկ նետեց.

– Երկո՞ւսն են, ինչի՞... վե՞րջ:

Ասես պսիխների պլան պիտի կատարեին:

Մեզ տարան երկհարկանի, երկար մի շենք: «Դուրոչկան», որ իրենից գժերի հիվանդասենյակներ էր ներկայացնում, առաջին հարկում էր: Այստեղ՝ երկար միջանցքի մեջտեղում էր ծվարած ման անչափ փոքր ընդունարանը, որտեղ մեզ ոտից գլուխ մերկացրին ու հիվանդանոցային համազգեստ տվեցին: Անկեղծ ասած՝ ես ինչ-որ բան զգացի, երանություն հիշեցնող մի աղոտ բան, երբ կիրգաչներս փոխարինեցի, երևակայեք՝ փափուկ հողաթափերով, թող որ առանց ետնամասերի: Համրի ձեռքը անկողնային պարագաները հետը մի ներքնակ տվեցին ու ուղեկցեցին միջանցքի ծայրը: Խցին հասնելով՝ նա շուռ եկավ ու ձեռքով արեց, ասես հրաժեշտ էր տալիս ինձ: Իսկը տարօրինակ...

ԲԱՅԿՈՆՈՒՐ

(պատմվածք)

Աշունը միշտ է իմ ամենասիրած ժամանակը եղել: Իսկը նրա մասին է ասված՝ «очей очарование...»: Բայց ամենից շատ ինձ դուր է գալիս տարվա միայն այդ եղանակին բնորոշ հոտը: Մեր տնից ոչ հեռու մի այգի կա: Ճիշտ է՝ շատ մեծ չէ, բայց փոխարենը այնտեղ լիքը ծառեր կան: Դե իսկ ծառերի վրա, ինչպես արդեն կռահեցիք, լիքը տերևներ: Եվ այսպես, Տեր Աստված, կամ մայր բնությունն այնպես էին տնօրինել, որ ամեն աշուն այս տերևները սկսում էին դեղնել, չորանալ և ըստ այդմ՝ ցած թափվել: Հենց այդ ժամանակ էլ այգում հայտնվում էին հավաքարարները ու անասնի փոշի բարձրացնելով՝ թափված տերևները կույտերի էին վերածում: Ահա այդ ժամանակ էր, որ աշունն սկսում էր բուրել: Ոչինչ ի գործ չէ համեմատվելու վառվող չոր տերևների հոտի հետ:

Հավանաբար աշունն այդ կերպ զգալու ունակությունն ինձ մորիցս է փոխանցվել: Նրա մանկության քաղաքում էլ այդպիսի ավանդույթ կար՝ վառել թափված տերևները: Երբ ես դեռ լրիվ խակ էի, անգամ երբ դեռ դպրոց չէի գնում, նա ինձ միշտ իր հետ աշմանային այգի էր տանում՝ խարույկներից արձակվող ծուխը շնչելու: Հետո արդեն մենակ էի գնում: Նստում էի հավերժ դատարկ նստարանին (հիմա անհետացել է, միայն բազալտե թմբերն են մնացել) ու երագում իմ տարիքին բնորոշ դատարկ քաների մասին:

Հիշողությանս մեջ մնացել է հատկապես վերջին աշունը: Քսաներորդ դարի ութսուներեքերորդ և իմ կյանքի տասնութերորդ աշունը: Ես ասես զգում էի, որ բավական ժամանակ այլևս չեմ կարողանալու լիաթոք ներս քաշել այդ հրաշալի բուրմունքը, ու փորձում էի պաշար հավաքել՝ ինչքան հնարավոր է լայնացնելով ռունգերս: Հեռացա միայն, երբ ծուխն սկսեց գրգռել աչքերս, ու անտեղի արցունքներն ուր որ է՝ դուրս պիտի հորդեին:

Անցավ մոտ մեկ տարի: Նորից աշուն է: Այժմ տնից երկու հազար կիլոմետր հեռու էի, մի քաղաքում, որտեղ ինչի հոտ ասես գալիս էր, միայն թե ո՛չ աշնան: Այն՝ իմ աշնան, խարույկներով աշնան...

Կայագորային պարետության խցում գտնվելուս երրորդ օրն էր: Այստեղ էի ընկել հենց զորացրման հրամանի օրը: Ջորամասից երկու շաբաթ ուշանալու պատճառով: Այն ժամանակ Բայկոնուրից հենց նոր էի ժամանել ПрикВО՝ Նախակարպատների ռազմական օկրուգ: Դե, ես հիմա երկար-բարակ չեմ նկարագրի ճամփորդությունս, առանց այդ էլ ուղեղս մաշել եմ ինձ արդարացնելու բացատրագրեր գրելով: Դրանք մինչև հիմա երևի փոշոտվում են արխիվներում...

Եվ այսպես, արդեն երրորդ օրն էր՝ լուված էի զադերժկայում, սնվում էի բացառապես ջրով, ամենաանպարկեշտ բառերով հայհոյում էի աշխարհում ամեն ինչ ու առաջին հերթին ինքս ինձ այն բանի համար, որ որոշեցի ազատության գնով (այն ժամանակ իմ դեմ քրեական գործ էին հարուցել) ապացուցել, թե ինչ նվիրված ու անձնագոհ զինվոր եմ, որ ներկայացել եմ հետագա ծառայությունն անցնելու, ոչ թե ծլկել եմ Կոկտեբել՝ «բայկոնուրյան սինդրոմից» տանջահար օրգանիզմս կազդուրելու: «Բայկոնուրյան համախտանիշը» տիեզերակայանի տարածքում ապրող ողջ բնակչության պատիժն է: Այն ձեռք է բերվում տեղի ջուրն օգտագործելով: Դե իսկ հետևանքները հրաշալիորեն նկարագրված են Հաշեկի անմահ վեպում: Ըստ Հաշեկի՝ այս հիվանդությունը կարելի է երեք կերպ անվանել: Եթե այն առաջացել է սպայի օրգանիզմում, կոչվում է կոլիտ, եթե կրտսեր հրամանա-

տարական կազմից մեկի խանգարում, և վերջապես, զինվորների դեպքում այն ուղղակի կոչվում է լուծ: Ես իմ ողջ ծառայության ընթացքում չարքային եմ եղել, այնպես որ, եզրակացրեք ինքներդ...

Ես այստեղ փոքր-ինչ քնարական շեղում թույլ տվեցի, մի բան, որ այլևս չեմ անի, ամեն դեպքում՝ կփորձեմ չանել: Եվ այսպես, որպես կարգապահ զինվոր, օղի բուրելով ու հետս իրեղեն ունեցվածքի մի հսկա պարկ քարշ տալով, ներկայացա կայազորի պարետին: Ինձնից օղու հոտ էր փչում մի նախկին զեկի պատճառով: Ավտոբուսում էինք կողք կողքի հայտնվել: Ջրույցի բռնվեցինք: Պարզվեց՝ հենց նոր էր ազատվել բանտից, ութ տարի կյանքից կորցրել էր մոծիկը: Դե հիմա՝ ազատության համար ո՞նց չխմես: Խմեցինք: Անսովորությունից իսկույն անջատվեց, նույնիսկ հրաժեշտ չտվեցինք միմյանց, մեղքս եկավ արթնացնեմ...

*Թարգմանությունները՝ Մերի Կարապետյանի
Խմբագիրներ՝ Ամալյա Ալեքսանյան և
Երազիկ Գրիգորյան*

ԴԱՎԻԹ ՍԱՐԱԴՅԱՆ

ԲԱՆԱՍՏԵԴԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

.....



Жасмин

В этот день, когда я покидаю
На два года родину и дом,
Вдруг случайно кустик замечаю
Белого жасмина под окном.
И бегом спустившись по ступенькам,
Выбегаю в старый милый двор
И стою, обманутый виденьем
За жасмин , принявший малый сор.
Так и в жизни принимал за золото
То, что было жостью и свинцом ,
Силы молодые щедро тратя.
Чтобы ржавым завладеть венцом,
Ненавидя ложь во всех обличьях,
Лгал и очаровывал любя.
И сегодня во языцах притчей
Мнут, полощат, теребят меня,
Так стоял и думал я над сором
О прошедшем , будущем - и вдруг
Куст жасмина вырос за забором
И утешил, будто старый друг.

Прощай...

Прощай, любовь моя, прощай
Меня ты больше не увидишь,
Я уезжаю в мусульманский край
И не уверен, что напишешь.
С тобой не видясь больше года,
О многом думал на досуге я,
И розы те, что не родит природа,
Взрастил в душе, лелея и любя...
Но розы без шипов "не роза, а ботва".
И те шипы изранили мне душу,
И кровь течет по венам, как река,
Потоком бурным все громя и руша.
Знаю я, что ты меня не любишь,
Не нужна тебе моя любовь.
Безразличьем ты влюбленных губишь,
Но меня уж не зарезать вновь.
Извини меня за грубость стиля
Не проститься я с тобой не мог
Подхватила грозная стихия
И несет любви моей челнок.
Так прощай, а может до свиданья,
Утверждать я точно не берусь,
Ты дала прекрасное страданье,
Если повезет, к тебе вернусь.

Вам

Жизнь отнюдь не игра,
Коль настанет пора,
Все свершимое разом свершится,
А когда не судьба,
Хоть красней добела,
Невозможное не претворится.
Что любовь, что вражда,
Что в искусство игра,
Все неправда от корки до корки
Ни в любви, ни в вражде,
Ни в искусстве - нигде
Без спины не подняться по горке.
Вы кричите мне: "Трус!
Ты живешь, как червяк!
Без борьбы, без отваги, без взлета".
Я скажу: "Не страшусь
Я дебатов и драк.
Но увы, не дороже помета.
Стоит ваша возня
(Коль хотите - борьба).
С высоты вольной птицы полета".
Так и будем брюзжать,
И судьбу проклиная,
Ведь она не виновна ничуть.
Что поделать, коль вы,
Испугавшись мечты,
Поспешили её оттолкнуть.

И мечта, оскорбленная, будет вам мстить
Вплоть до вашей доски гробовой,
Непрерывно к вам будет она приходить
И душить промасленную пенькой
А когда под конец,
Оглянувшись назад,
Вы увидите бездну и мрак,
То поймете тогда, несмотря на парад,
Что ходили всю жизнь в шулерах.

Բովանդակություն

ԱՍՏԾՈՒ ԱՋԸ ՄԵՉ ՀԵՏ Է	7
ԴԱՎԻԹՆ ԱՐՏԱՌՈՅ ԵՐԵՎՈՒՅՑ ԷՐ	9
ԴԱՎԻԹԻ ՄԵՋ ԵՍ ԻՆՁ ԷԻ ՏԵՍՆՈՒՄ	11

Մի լուսանկար... և հավերժություն	13
Ծնվեց Դավիթ երևույթը	18
Նշանավոր ծնողները	20
Լեոնիդի դասերը	22
«Ես իմ պատիվն էի պաշտպանում...»	23
Դպրոցի խիղճը	26
«Ես երջանիկ եմ և հպարտ...»	28

ԿՅԱՆՔԻ ՀԱՐՎԱԾՆԵՐ

Ինստիտուտից «Արիության դպրոց»	32
Բանակից բանտ	37

ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՎԵՐԵԼՔ

Վերադարձ ազատ կյանքի	40
Երկու ասպետների ընկերությունը	43
Կինոյի կախարդական աշխարհը	45
Հռչակավոր նախնիները	47
1988 թվական	51
Գրիչը փոխարինեց զենքով	56

ՊԱՅՔԱՐԸ

Ռազմի դաշտում	56
«Սա Հայաստան է և... վերջ»	58
«Մեծն Տիգրանի» մեծն մարտիկը	59
Կործանված «Կոկորդիլոսը»	60
«Սարերից ներքև»	61
«Այստեղ իսկական դժոխք է...»	63
Էրքեջ. նահանջը մարտով	66
«Ռու Ղափի՞թն ես, թե՞ Ղափիթ Բեկը...»	68
Ղևը վստահության և հավատարմության խորհրդանիշ էր	69
«Այդ ես եմ քո բարի Ղևը»	72
«Վարագդատի» ծնունդը	74
Ղափիթը՝ նամակներում	75
«Ղևն իմ ամենալավ հրամանատարն էր»	78
Հատուկ նշանակության ջոկատը	80
«Շնորհակալություն՝ ծափահարությունների համար» ...	82
Ահեղ Ղևը	83
Տողի ազատագրումը	84
«Հիմա պետք է ազատագրել Էրզրումը»	88
Նրանց վերջին քայլերը ճախրանք էր	89
Հրաժեշտ Եռաբլուրում	91

ՀԵՏԱՀՈՒ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

Ների՛ր մեզ, Ղափի՛թ... ..	96
Թանգարան չդարձած բնակարանը	98
Ռ՛վ կդառնա ժառանգորդը	99
Ճակատագրական սխալը	100
Ղպրոցի շրջանավարտ միակ հերոսը	103
«Ղև. կյանքը, պայքարը, ստեղծագործությունը» գիրքը	107

Դավիթ Սարապյանի արձակը	109
Նոր շնորհալի գրիչ	111

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ԴԱՎԻԹԻ ՄԱՍԻՆ

Նա ի ծնե ազնվական էր, մտավորական... ..	116
Նա գաղափարի մարդ էր... ..	118
Նա չհամակերպվողներից էր... ..	120
Դավիթն ապրում է հայոց փառքի բացօթյա տաճարում	123
Նա նետվեց մարտի անմահի հոգեբանությամբ... ..	126
Деву	129

ՀԱՏՎԱԾՆԵՐ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

300 ՎԱՅՐԿՅԱՆ	132
Հորբի	138
«Դուռչկա»	141
Բայկոնուր	144

Դավիթ Սարապյան. ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Жасмин	148
Прощай... ..	149
Вам	150

Էվելինա Մելքումյան


ՄԵՐ ՕՐԵՐԻ ԴԱՎԻԹԸ

Խմբագիր՝ Հասմիկ Գուլակյան
Ձևավորումը՝ Արամ Ուռուտյանի
Սրբագրիչ՝ Նարինե Նավասարդյան

«Դավիթ Սարապյան» նախաձեռնություն

Հեռախոս՝ 091 113 133

Էլ. հասցե՝ davitsarapyan@gmail.com
<https://www.facebook.com/DavitSarapyanDev/>



Դավիթի համար Արցախի ազատամարտի
վերջնական հաղթանակը միայն նախադուռ էր,
որից սկիզբ կառնեի այն լուսավոր ուղին,
որը կտաներ դեպի իր երազած Հայաստանը:
Նրա համար հայրենիքը չէր սահմանափակվում
ներկա Հայաստանի չափերով:
Նրա համար Հայաստան էր յուրաքանչյուր տարածք,
որը վաղնջական ժամանակներից ջերմացել էր
հայի շնչով, որտեղ անջնջելի կնիք էր թողել
հայ մարդու ստեղծարար միտքը:
Ազատագրելով Արցախը՝ նա մտովի
ազատագրում էր Մուշն ու Վանը, Կարսն ու Անին,
ազատագրում էր հոր հայրենի քաղաքը՝ էրզրումը...

